Բաբել

9 – 10 / 92

Երկու տարի առաջ, Հայաստանի մէջ տեղի ունեցած վարչակարգի փոփոխութեան ու մտայնութիւններու յարաբերական վերափոխութեան փաստերէն համարձակութիւն առնելով, 1991ի սկիզբները, մշակոյթի նախարար Պերճ Զէյթունցեանն վերադարձի հրաւէր մը ուղղեց համաշխարհային հռչակ վայելող երաժիշտ եւ խմբավար Օհան Տուրեանին, որ մոռցած հայրենիքին մէջ իր ապրած դառնութեան հին քաժակները՝ անմիջապէս փութաց Հայաստան:

Կարճ ատեն մը ետք, եօթանասունէ աւելի արուեստագէտներ հաշուող նուագախումբի մը դիմաց կանգնած՝ Վերտիի «Ռեքվիեմ»ի հնչիւններուն կախարդական էլեկտրներով Օհան Տուրեան կրկին փոթորկեց Երեւանի երաժշտասէր հասարակութիւնը, որ ողողուն հրճուանքով, հպարտութեամբ ու յոտնկայս ծափահարութիւններով ողջունեց հայրենիքի հեղինակիչ մթնոլորտէն հարկադրաբար հեռացած իր պանդուխտ որդիին վերադարձը, ամոր արուեստը, անձնատրած խորհուրդը...

Մենք ի սրտէ կը մաղթենք, որ Օհան Տուրեանի երկրորդ վերադարձը վերջնական ըլլայ, չկրկնուին նախանձոտ ու փոքրոգի մարդոց իր դէմ շղթայազերծած հալածանքները, չար ոգիները չստիպեն իրեն կրկին հեռանալու հայրենիքէն, այն հայրենիքէն, որ «առաւել քան երբեւիցէ» պէտք ունի իր ընտիր զաւակներուն աբարշաւագործ շնորհներուն...

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.–Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ ..... Խօսք մարդ վիշապներու դէմ

4.–Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ ..... Միջօրէական

11.–Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ ..... Տենդեր

26.–Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ ..... Քեզ... պիտի կոչեմ

30.–Ց. ԱՂԱՋԱՆԵԱՆ ..... Խղճի խայթ

51.–Վ. ՕՇԱԿԱՆ ..... Հ.Ց.Դաշնակցութիւնը
եւ յեղափոխական գրականութիւնը

61.–Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ..... Վ. Սոլովեի երեք գրոյցները

62.–Վ. ՍՈԼՈՎԵԻ ..... Երեք գրոյցներ

81.–Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ..... Հայկական պատմուածքներ
եւ թարգմանական հարցեր

89.–ՈՒ. ԸԽԼԱՍԻ ..... Յառաջաբան

93.–Մ. ՄԻՆԱՍԵԱՆ ..... Մեթր Նազար Պ. Նազարեանի
յիշատակին

95.–Ս. Կ. ..... Համեստ ու հաւատարիմ՝
իբրեւ ստուերը իր գործին

97.–★ ★ ★ ..... Հանրի Վերնէօյի «Մայրիկ»ը՝
արաբերէնով

98.–★ ★ ★ ..... Նոյնպէս՝ «Հայկական Հարցը
եւ միջազգային օրէնքը»

99.–Ն. ՄՈՒՐԱԴԵԱՆ ..... Շնորհաւոր յոբելեանդ, մաեստրօ

100.–Ա. ՔՆԱՐԵԱՆ ..... Ոչ թէ միջնորդ, այլ ակուն
(Օհան Տուրեանը 70 տարեկան է)

102.–Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ..... Զբսէք պարոն,
ըսէ՛ք պարզապէս՝ Տուրեան

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԱ. ՏԱՐԻ 9-10 ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 1992 ՊԷՅՐՈՒԹ

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԽՕՍՔ ՄԱՐԴ ՎԻՇԱՊՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Արաքսի յորձանքէն անդին, Մասիսի ապարաժին վրայ
Երեւցաւ ծերունին մը, որ լեռնապարերուն վրայէն
Կը նայէր աղջամուղջով պատուած հինգ ցամաքամասերուն
Եւ Զոտիաքի աստղերը կլլել ուզող մարդ վիշապներուն։

Ան խօսեցաւ, եւ անդրշիրիմեան ձայնը լռեցուց ալիքները.
—Երբ մահուան մատները ծանրացան կոպերուս վրայ,
Դարերը անհետացան սրտիս վերջին զարկին հետ
Եւ անդենականին արոյրէ պատը փշրուեցաւ ապակիի պէս։

2000
digitised by A.R.A.R.@

Երկրագո՛ւնը, որուն վրայ կ'ապրէին ազգիս բեկորները,
Գիսաւորի մը պէս սուրաց դէպի մեռնող արեւը
Ու կորսուեցաւ անոր հրեղէն արգանդին մէջ,
Եւ ես որք մնացի դագաղիս կափարիչին տակ։

Լուսամուտս բաց էր Հայոց Աշխարհի լեռներուն վրայ,
Լիճերուն կապոյտ ջուրերը կ'երգէին ու կ'ողբային
Հովուն անտեսանելի ու ճարտար ձեռքերուն տակ,
Բայց երկրագունը չոքցած էր խորշակներու համբոյներէն։

Խաղաղ ու պայծառ էին օրերը արեւելեան կողմն աշխարհի.
Արեւին լոյսը կը շոյէր տաճարին սպիտակ քարերը,
Երբ անցաւ ստուեր մը՝ ծաղկեպսակ մը բռնած։
Բայց հողակոյտիս վրայ տակաւին քար չէր դրուած։

Ո՞ւր են առուակները, ո՞ւր է Արաքսի խելայեղ վազքը,
Ո՞ւր են Մասիսներուն ձիւնապատ գագաթները,
Ո՞ւր է ծառերուն երգը եւ ծաղիկներուն ժպիտը,
Արդեօք ե՞րբ պիտի վերջանան Փետրուարի գիշերները։

Երկինքը ծածկուած կը մնայ մոխրագոյն սաւանով.
Ո՞ւր են ջուրերուն վրայ կայտառող ճերմակ առագաստները։
Ձկնորսները յուսահատ՝ նստած են աւազափին վրայ
Եւ լալով կը դիտեն իրենց բզկտուած ուռկանները։

Ծովերուն տեղը կը տարածուին աղի եւ աւազի անապատներ,
Ապրիլի անձրեւները չէն կրնար բարեխառնել ջուրերը,
Որովհետեւ անոնք կազմուած են արցունքի կաթիլներով,
Եւ անառակ որդիներս կը շարունակեն խոցոտել սիրտս։

—Խաղաղութի՛ւն ձեզ, աւազի տակ պառկող միւս զաւակներս։
Թող Տիրոջ կամքը կատարուի յաւիտեանս յաւիտենից։
Հանգի՛ստ ձեր ոսկորներուն, հանգի՛ստ ձեր երազներուն։
Երգեցէ՛ք ձեր երգը եւ վար առէ՛ք դահիճներուն դիմակները։

☆ ☆ ☆

Այն ատեն Առագաստանաւուն ընդերքէն, կամրջակին տակէն,
Բարձրացաւ թիապարտներուն անժամանցելի բողոքը։
Ովկիանոսը զսպեց իր ալիքները, ջուրերը լռեցին
Եւ Զոտիաքին վրայ կանգնած եօթը թագուհիները սկսան լալ.

—Ո՞վ Ամենակալ, ո՞վ Ողորմած, ճգմէ՛ մեր գանկերը.
Մենք ճամբաներուն եզերքը կուտակուած աղբի կոյտերն ենք,
Աշխարհին ամբողջ ծանրութիւնը կրող անարգ գրաստներ,
Ճգմէ՛ մեր գանկերը եւ ոչնչացո՛ւր մեր երազները։

20552 digitised by A.R.A.R.

Կործանէ՛ մեր վրայ, անծիր եւ անոգո՛ւմ երկնակամար,
Թող աստղազարդ ապառաժները ճգմեն մեր մարմինները։
Ո՜վ Արեւ, արգանդիդ մէջ մոխրացո՛ւր մեր տառապանքները,
Թող մոլորակները մեզ աղաւ՝ ցորենի հատիկներու պէս։

Ընկլուզէ՛ եւ մարսէ՛ մեզ, ծովերու որովայն,
Թող ալիքներդ գնդակ խաղան մեր գլուխներուն հետ,
Միայն թէ մեզ տա՛ր բացերուդ անտարբերութեան գիրկը,
Ուր չկայ ո՛չ դահիճ, ո՛չ բանտապահ եւ ոչ շղթայ։

Դո՛ւն եղիր մեր մայրը, ո՜վ մահ գթասիրտ,
Օրօրէ մեր տառապանքը, ծովերու որովա՛յն։
Աա՜դ, մարդոց կիցերէն փախչող քոսոտ շուները
Մնցմէ երջանիկ էին իրենց աղբակոյտերում մէջ։

Մակընթացութի՜ւն, մեր մարմինները նետէ՛ ժայռերուն դէմ,
Թող անդունդներուն սրածայր խութերը հրնուելով
Ճեղքեն մեր գանկերը՝ հասուն հնդկընկոյզներու պէս,
Եւ խառնեն մեր ուղեղը աւազի անտարբեր հատիկներուն։

Տարէ՛ք մեզ հեռու մարդոցմէ, այն անանուն կղզիները,
Ուր յոգնած մարմինները կը հանգչին յաւիտեան
Եւ կը նոյնանան քարերու եւ հողերու անշարժութեան,
Ուր անտեսանելի ձեռքեր կը շոյեն ստրուկներու ճակատները։

Որովհետեւ, եթէ մեր բազուկները հանգիստ չգտնեն,
Կոտրելով մեր շղթաները՝ պիտի նաւարկենք ծովերէն անդին,
Պիտի շրջանցենք ճակատագրական միջօրէականը
Եւ ունայնութեան մէջ, մենք մեր աստուածները ըլլանք։

☆ ☆ ☆

Ու հողմածեծ ապառաժին վրայ կանգնած ծերունին,
Մազերը փետտելով եւ կուրծքը կոծելով, պոռաց.
—Տէ՛ր, թոյլ մի՛ տար, որ խեղճ զաւակներս
Գողցուած լումաներու պէս շարուին սեղանատրներուն առջեւ։

Թող վանաւորի ապրանք չդառնան կեղծաւոր ազգերուն,
Ծաղր ու ծանակ՝ անհաւատ ու սինիք դիւանագէտներուն։
Թուքի եւ արցունքի հետքերը սրբէ՛ անոնց երեսէն,
Որպէսզի լաւ տեսնեն իրենց բարեկամները եւ թշնամիները։

Մեծագոյն ողբերգութիւնը մարմնական վէրքերը չեն,
Ոչ ալ պարտութիւնը գերազանց ուժերու դէմ,
Այլ՝ անուղղայ եւ պիղծ հոպիտներուն կարեկցութիւնը,
Որոնք մեզ կը նուաստացնեն ատեանների բեմերէն։

digitised by A.R.A.R.@

«Արդարութի՜ւն հայ ազգին», կը պոռան կեղծաւորները,
«Ցեղասպանութի՜ւն եւ մարդկային իրաւանց բռնաբարո՜ւմ»,
Կը հռչակեն միջազգային թատրոններու հռետորները,
Մինչ դահիճները գնդակ կը խաղան մեր գանկերով:

ՓԱՍԱՏԵՆԱ, 4 ՕԳՈՍՏՈՍ 1991

ՄԻՋՕՐԷԱԿԱՆ

Զուրիխի ճամբաներուն վրայ կը ճեմեն այրի թագուհիներ,
Շրջապատուած իրենց եղերամայր նաժիշտներով:
Անոնք կը քալեն բիւրեղեայ հրապարակներու վրայ,
Բայց ո՛չ մէկ իշխան կը խաչաձեւէ իրենց ճամբան:

Զուրիխի շրջանակին վրայ կը ճեմեն եօթը հայ թագուհիներ,
Շրջապատուած իրենց սեւազգեստ նաժիշտներով,
Անոնք կը քալեն Ծիրկաթինի պողոտաներուն վրայ,
Բայց ո՛չ մէկ ասպետ կը խոնարհի անոնց առջեւ:

Փուշէ պսակ կրող Հայաստանի եօթը լուսածին թագուհիները
Կը սպասեն, որ յայտնուի երբէք կայմերով Առագաստանաւը,
Եօթը թագուհիները կու լան ու կը նային հեռուները,
Բայց ո՛չ մէկ ալպաթրոս կը թեւածէ ջուրերուն վրայ:

Եօթը շղթայուած թագուհիներ կը սպասեն Զուրիխին վրայ:
Կապարէ ամպ մը կը խափանէ Հիւսիսային Աստղը,
Ովկիանոսը կ'ոռնայ, կը մոլեգնի, կը լեռնանայ՝
Ցամաքամասերու նենգ աքցանը խորտակելու համար:

Ալիքները՝ սարսափած մանուկներու պէս կը փաթթուին իրարու,
Որովհետեւ ջուրերու յատակէն, ժայռերու խորշերէն,
Ծովամոյն եղած նաւաստիները եւ խեղդամահները
Կը փորձեն դուրս գալ իրենց հեղուկ գերեզմաններէն:

Ալիքները սարսափած կը լեռնանան, կը զարնուին իրարու,
Եւ, Զենիթի պորտին վրայ, Հարաւային Խաչը կը սարսռայ
Եւ կը կորսուի ամպերու կուտակումներուն ետեւը,
Մինչ Զուրիխին վրայ կը ճեմեն մեռած թագուհիներ:

digitised by A.R.A.R.@

Ովկիանոսին աղջամուղջը կը լուսատրուի յանկարծ,
Պողպատեայ կայծակներ կը հարուածեն անոր կողերը,
Հովը կ'այլեկոծէ միջոցը իր հսկայ փետուրներով,
Եւ ստուեր մը կը յայտնուի խաւարի Բարայրներէն,

Բերդանման զանգուած մը, որ կը սահի ջուրերուն վրայ։
Ան աւելի մութ է՝ Բան գինի շրջապատող աղջամուղջը։
Սեւ ջուրերուն վրայ կը սահի Մահուան Առագաստանաւը,
Մինչ վերը, Զոտիաքի վրայ կը ցեմեն եօթը թագուհիներ։

Առագաստները պարզած՝ հսկայ Լեվիաթանի մը պէս,
Նաւը կը սուրայ դէպի Բարիպտիսի դժոխային կիրճը։
Ողնափայտը կը ճռնչէ, կայմերը կը սարսռան ու կը ծռին,
Մինչ գերանները կը թառանչեն՝ չարչարուած ոսկորներու պէս։

Ոչ մէկ լամբար կը պլպլայ լուսամուտներէն,
Ոչ մէկ լապտեր կը լուսատրէ կամրջակին անկիւնները։
Միայն Բամիները կը շաչեն՝ պարանոներուն Բուելով,
Միայն գիշերը կ'ողբայ՝ խուժելով ճեղքերէն ներս։

Ո՞ւր են ճամբորդները, ո՞ւր է նաւապետը։
Նաւաստիները փակուած են իրենց խուցերուն մէջ,
Բանի մը նաւաստեակներ, հակած բազրիքին վրայ՝
Անփութօրէն կը դիտեն համայնակուլ անդունդը։

Հովը կը թրթռացնէ ու կը տանջէ լարուած պարանները,
Ալիքները՝ կատղած շուներու պէս՝ կը խածնեն անոր կողերը.
Բայց Առագաստանաւը՝ անդոհական Լեվիաթանի մը պէս՝
Պոչին մէկ հարուածով կը լռեցնէ շանածուկերու վոհմակները։

Ան կը սուրայ, կը խոյանայ դէպի մութ հորիզոնը։
Լպիրշ հեղուկը կը հոտուտայ ու կը լիզէ անոր մարմինը,
Բայց Մահուան Առագաստանաւը կ'անտեսէ անկուշտ ծովը
Ու կ'արհամարհէ ալիքները եւ ոռնացող անդունդը։

Երբ կայծակները կը պատռեն խաւարին վարագոյրները,
Ճերմակ կերպարանք մը կը յայտնուի կամրջակին վրայ
Ու շարժելով իր անտեսանելի ձիպտը, կափկափելով
Կը պոռայ.— «Մահուան թիապարտնե՛ր, յառա՛ջ, միշտ յառա՛ջ»։

Այն ատեն մեռելները կը շարժին, ոտքի կ'ելլեն։
Ղեկավարը կը դարձնէ անիւը իր կմախացած ձեռքերով,
Նաւաստիները կը խուճապին, կը վազեն աջ ու ձախ,
Ուրիշներ պարանոներ կ'ամրացնեն բարդ հանգոյցներով։

digitised by A.R.A.R.@

Ու բոլորը միասին, հետեւելով նիպոտի շարժումներուն,
Կ'երգեն ժամանակի անդունդին մէջ մոռցուած երգ մը,
Ու ձեռ ձեռի բռնած՝ կը սկսին կատաղի շուրջպար մը,
Մինչ Զոտիա՛ի վրայ կը ճեմեն շղթայուած թագուհիներ։

☆ ☆ ☆

Եւ Առագաստանաւը, ճեղքելով միջօրէականներու ցանկապատը,
Անցաւ արշիպեղագոսներու դարձդարձիկ նեղուցներէն,
Խուսափեցաւ ցամաքամասերու սրածայր հրուանդաններէն
Եւ մկրատեց զուգահեռականներու դաւադիր ուղղանը։

Եւ նաւահանգիստներ՝ այրիացած ու ցանկայարոյց կիներու պէս,
Պոռացին իրենց հրապուրիչ ու երազային անունները,
Ու, լայն բանալով իրենց ճկուն ու հեշտաբոյր բազուկները՝
Հանոյք ու հանգիստ խոստացան անցնող նաւաստիներուն։

Մութին մէջ, երբեմն, ջուրերու աղմուկին կ'ընկերանային
Երաժշտութեան ալիքներ՝ յիշատակներ սփռելով օդին մէջ,
Ու գոյնզգոյն լոյսերով զարդարուած բաբելոններէն
Կիներու ոգիները կը խառնուէին մարդոց ուրախ երգերուն։

Որովհետեւ նաւը կանգ չէր առներ այդ եղեմներուն առջեւ,
Նաւաստիները ծով կը նետէին իրենց երազներուն ծաղկեպսակը,
Մինչ կամրջակին վրայէն, իր հայրական ձայնով՝
Նաւապետը կը մխիթարէր աշխարհի գեհենապարտները.

—Մի՛ վհատիք, ո՞վ յոգնած ու կեղեքուած եղբայրներ,
Որբեր, անտունիներ, ճամբաներու վրայ թափառողներ,
Անկեղծ սիրոյ զոհեր, ձեր կիներէն խաբուածներ,
Մայրերու ցեխին մէջ հուրիներ փնտռող ընկեցիկներ։

Վա՛ղը, երբ յաջողինք շրջանցել Բարեյուսոյ Հրուանդանը
Եւ կտրենք խաւարը Լոյսէն բաժնող անտեսանելի միջօրէականը,
Խարիսխ պիտի նետենք Արջային Համաստեղութեան տակ
Եւ սպասենք, որ յայտնուին եօթը լուսաւոր թագուհիները։

Զոտիա՛ն պիտի անշարժանայ եւ, աստղերուն վրայ կոխելով՝
Եօթը թագուհիները պիտի իջնեն մեր Առագաստանաւուն վրայ
Եւ իրենց բազուկներուն մէջ առնելով ձեր յոգնած մարմինները,
Պիտի տանին յաւէտ կորսուած ու երազուած Էլտորատոն։

Հո՛ն, ուր կապոյտ ջուրերուն վրայ կը ծփան կանաչ կղզիներ,
Ուր քիւրեղեայ առուակներ կը վազեն թանկագին քարեր շոյելով
Եւ կ'ոռոգեն զմրուխտէ բուրումնաւէտ մարգագետիններ,
Որոնց վրայ կը պարեն տարաշխարհիկ պարմանուհիներ։

digitised by A.R.A.R.@

Հո՛ն, մշտադալար ծառերը եղանակ չեն ճանչնար,
Հո՛ն, կիները գեղեցիկ են, հաստատիմ ու անկեղծ,
Եւ Բնութեան սեղանը բաց է բոլորին համար,
Եւ կեանքը տօն, երգ ու խնճոյք է յաւիտենական։

Միայն աղօթեցէ՛ք, որ մեր ճամբուն վրայ չյայտնուի
Մարդոց մեղքերուն բարերով հիւսուած Սեւ Ապառաժը,
Որուն աչին կը լեռնանայ Զարին Միջնաբերդը,
Ու ձախին կ՚ոռնայ կորստեան Մեծ Անդունդը։

☆ ☆ ☆

Եւ անտեսանելի բարափներու վրայ խճողուած ամբոխներ,
Խնճոյքէ վտարուածներ, գայլերու մէջ տապլտկող փարիաներ,
Լքուած հայրեր, խաբուած կիներ՝ «մեղա՛յ, մեղա՛յ» պոռալով՝
Իրենց կմախացած նորածինները դէպի երկինք կը բարձրացնէին։

Փրկանաւը դպաւ բարափին։ Երկու նաւաստիներ իջան
Եւ ցնցոտիներ հագած մայրերու գիրկերէն առին
Անոնց կիսամեռ մանուկներուն թեթեւցած մարմինները
Եւ զանոնք զետեղեցին փրկանաւին նստարանին վրայ։

—Մե՛նք ալ կ՚ուզենք մեկնիլ,— պոռացին խումբ մը պատանիներ,—
Մեր ցաւը մեծ է եւ մեր տառապանքը անպատմելի։
Մեր մայրերը մեզ լքեցին անծանօթ մայրերու վրայ,
Որպէսզի ազատուէն պոռնկանան իրենց կաւատներուն հետ։

Քիչ մը անդին, խորունկ աչքերով եւ ոսկրացած մարմնով
Պարմանուհիներ իրենց վէրքերուն սպիները ցոյց տուին,
Եւ, գթասիրտ նաւաստիներուն ոտքերը համբուրելով՝
Աղաչեցին, որ զիրենք փրկեն մարդոց անգթութենէն։

—Օրերէ ի վեր կը թափառինք կապելաներու առջեւ,
Բայց մարդիկը չեն նայիր մեր երեսին, որովհետեւ
Կորսնցուցած ենք մեր մանկական թարմութիւնը։
Անոնք մեզմէ հաճոյք չեն առներ եւ կը նախընտրեն մանչուկները։

—Այս գիշեր պիտի տանինք միայն աշխարհ նոր եկողները,—
Ըսին նաւաստիները, ու գողերու պէս քալելով փոդոցներուն մէջ՝
Աղբակոյտերու մէջէն հաւաքեցին լքուած նորածինները,
Որոնց մեղաւոր մայրերը կը սպասէին բարափին վրայ։

—Այն մայրերը, որոնք անմեղ մանուկ չունին իրենց թեւերուն մէջ,
Պիտի չառնուին փրկանաւուն մէջ,— պոռաց նաւաստին,—
Անոնց անմեղութիւնն է, որ կրնայ սրբել ձեր մեղքերը
Եւ ձեզի տեղ մը ապահովել Երանութեան Կղզիներուն մէջ։

digitised by A.R.A.R.@

—Զի՛ս ալ տարէք, ազատեցէ՛ք այս աշխարհէն,—
Աղաչեց ստուեր մը, որ կանգնած էր պատի մը տակ։—
Ես մեղաւոր եմ, բայց զաւակս Անմեղութիւն պիտի կոչուի։
—Ի՞նչ է անունդ,- հարցուց նաւաստին։ —Մայր Արաքսի։

Առաջաստանաւը՝ ծանրաբեռնուած մարդկային խլեակներով,
Խնոյէ զրկուած մանուկներով, լքուած մայրերով,
Պղծուած պարմանուհիներով, մօր կաթ չծծած երեխաներով,
Անցաւ անանուն նաւահանգիստներէն, ուր կը տիրէր վիշտ ու խաւար։

Եւ Առաջաստանաւը՝ ծանրաբեռնուած մարդոց տառապանքներով,
Այրի մայրերու ողբերով, բռնաբարուած կոյսերու ամօթով
Եւ հրեշտակներէն աւելի անմեղ մանուկներու լացով,
Մտաւ խաւարամած հորիզոնի փէշերուն խորհուրդին մէջ։

Եւ այդ համայնակուլ երախէն անդին, կատղած ալիքներու մէջէն,
Ցայտնուեցաւ Նախնական Քաոսը՝ իր անդունդներով եւ կիրճերով,
Որոնք անցեալ եւ ապագայ մեղքերու սաղմերը կ'օղակէին,
Զանոնք պաշտպանելու համար ովկիանոսի մակընթացութենէն։

Ապառաժները ցից էին՝ Բաբելոնի աշտարակէն աւելի,
Եւ անոնց վրայ կը տողար սեւ ու գարշահոտ հեղուկ մը,
Որ կուպրի, զայրի եւ մեռած սաղմերու խառնուրդ մըն էր,
Եւ կ'ապականէր ջուրերը եւ կը պղծէր երկինքը։

Սեւ հեղուկը կը ծորէր ապառաժին անտեսանելի ծակտիկներէն
Եւ, անոր ցցուածքներէն կաթելով՝ կը կազմէր շքաբարեր,
Որոնց կեռէն կախուած էին ազգապիղծներու գլուխները
Եւ ձեռքերը բոլոր անոնց, որոնք անմեղ արիւն թափած էին։

Ապառաժի կատարին կանգնած էր տարաշխարհիկ կին մը,
Որուն մերկութեան շուրջ անասելի կիրքեր կը թեւածէին։
Նաւապետը խաչակնքեց, որովհետեւ ճանչցած էր
Օձէն ծնած յաւիտենական եւ անյագ Պոռնիկը։

—Նաւապե՛տ,— պոռաց նաւաստիներէն մէկը,— փոխեցէ՛ք ճամբան,
Որովհետեւ դժուար պիտի ելլայ շրջանցել Մեղքերու Ապառաժը։
Տե՛ս, ան երթալով կը ծաւալի, կը լեռնանայ,
Որպէսզի շեղինք դէպի հարաւ, դէպի Մեծ Անդունդին երախը։

Այն ատեն, այն նաւաստիները, որոնք՝ կառչած բազրիքին՝
Կը դիտէին զիրենք շրջապատող զարհուրանքը,
Խմբուեցան նաւապետին շուրջը դողացող մանուկներու պէս,
Որովհետեւ բանդագուշական արշիպեղագոսներ կը հալածէին նաւը։

digitised by A.R.A.R.@

Նաւապետը, որ գիտէր այս ուղեւորութեան գաղտնիքները,
Նայեցաւ դէպի վեր, դէպի Զոտիակի լուսաւոր շրջանակը,
Որուն վրայ կը սպասէին երկրի եւ երկինքի թագուհիները,
Եւ որուն կեդրոնը կը փայլէր Բեւեռային Աստղը։

Ցանկարծ Մեծ Անդունդին ջուրերը մոլեգնեցան,
Եւ անոնց մէջէն յայտնուեցաւ չարագուշակ Նեռը,
Որ Մեղքերու Ապառաժին կանգնած էզին զաւակն էր։
Նաւապետը կրկին խաչակնքեց եւ արտասանեց մոգական աղօթքը.

—Երկինքի Կայսրուհիին եւ եօթը թագուհիներուն անունո՛վ
Եւ կայմին վրայ կանգնած Քրիստոսի խաչին զօրութե՛ամբ,
Կը հրամայե՛մ ձեզ, Քառսը արգասաւորող մութ ուժեր,
Ո՜վ Լուսաբեր, Նեռ եւ Լիլիթ, հեռացէ՛ք մեր ճամբէն։

Այն ատեն, Տառապանքի կոգիները բախեցան Սեւ Ապառաժին,
Ու գայն ցեղքելով բացին լայն ջրանցք մը։
Եւ ձայն մը ահեղ սարսռացուց Համաստեղութիւնները,
Եւ տիեզերքը տատանեցաւ իր առանցքին վրայ։

Դարերը անհետացան ժամանակի հոսանքին մէջ,
Անտեսանելի բոունցք մը փշրեց Ցափտենականութեան Պատը,
Քառսը բռնաբարեց տիեզերքի հաւասարակշռութիւնը
Եւ սկսաւ ունայնութեան խելայեղ շուրջպարը։

Աստղերը սկսան գիրար ատել՝ խորթ եղբայրներու պէս,
Լուսինը չերեւցաւ՝ երկնակամարը զարդարելու համար,
Եւ արեւը՝ խորթ մօր մը պէս՝ հեռացաւ իր զաւակներէն,
Զանոնք մատնելով յուսահատութեան ու խուճապի։

Երկրագունդը՝ անզուսպ գիսաւորի մը պէս՝ սուրաց դէպի արեւը
Եւ անհետացաւ անոր հրեղէն արգանդին մէջ։
Երկրագունդը մեռած էր՝ անբուժելի հիւանդի մը պէս,
Եւ մարած էին աստղերը՝ ծոլուելով Տիրկաթիններուն։

Ովկիանոսները ծանր էին աղով։ Մեռած էր երկրագունդը։
Ո՞ր էին մարդիկը՝ իրենց զոհիկ ժպիտներով,
Կինե՞րը՝ զարդարուած եգիպտական կուռքերու պէս,
Ո՞ր էին ծովերու վրայ վազող ճերմակ առագաստները։

☆ ☆ ☆

Առագաստանաւը կը սուրար ամեհի ալիքներուն մէջէն
Դէպի Բեւեռային Աստղը, որ կայսրուհիին թագն է,
Փրկուելու համար Քառսի համայնակուլ ճիրաններէն։
Մեծ Անդունդը կ՚ոռնար ձախին, Ապառաժը կը ցցուէր աջին։

digitised by A.R.A.R.@

Այն պահուն, երբ անցան Բարեյուսոյ Հրուանդանը,
Նաւաստի մը յայտնուեցաւ կամրջակին վրայ ու պոռաց.
—Նաւապե՛տ, այս գիշեր մանուկ մը ծնաւ պարմանուհի մը։
Մայրը մեռաւ, հիմա ո՞վ պիտի նայի նորածինին։

Ու նաւապետը, որ աչքը չէր հեռացներ երկինքէն, պոռաց.
—Փրկութիւնը մօտ է, Մանուկ մը ծնաւ այս գիշեր,
Ան պիտի յաղթէ խաւարի Իշխանին եւ Գառոսի սադրանքներուն։
Արշալոյսը մօտ է, թագուհիները մեզի կը սպասեն։

Գառոսը թուլցուց յանկարծ իր հուժկու ճիրանները,
Խաւարը անէացաւ եւ կորսուեցաւ անհունութեան գիրկին մէջ,
Ատղերը երեւցան՝ խաղաղութիւն աւետելու համար,
Եւ ալիքները սկսան շոյել Ստագաստանաւուն կողերը։

Ու Զոտիաքի շրջանակին վրայ ճեմող լուսածին թագուհիները,
Լսելով նորածին Մանուկին լացերը եւ ճիչերը,
Վար իջան երկինքի անտեսանելի աստիճաններէն,
Աշխարհի որբերը եւ ժառանգաւորները սփոփելու համար։

Առջեւէն կը քալէր կայսրուհին, որուն թագը աստղի կտորներ էին
Եւ որուն հագուստը հիւսուած էր Ծիրկաթիններու շողերով,
Անոր կը հետեւէին եօթը լուսածին թագուհիները,
Շրջապատուած իրենց եօթանասուն իշխանուհի նաժիշտներով։

—Նորածինին մայրը վերն է,— ըսաւ կայսրուհին,— ան մեզի միացաւ։
Երբ ժամանակը գայ, ան պիտի հագնի լուսահիւս պարեգօտը
Եւ պիտի միանայ երկինքի եօթանասուն իշխանուհիներուն,
Որոնք կը բնակին Զոտիաքի բիւրեղէ պալատներուն մէջ։

Ու կայսրուհին, նորածինը առնելով թեւերուն մէջ՝
Անոր տխեղծ մարմինը սեղմեց անարատ կուրծքին վրայ
Եւ օրօր երգելով՝ բարձրացաւ երկինքի անտեսանելի աստիճանները,
Դէպի Բեւեռային Ատղը, որ իր բնակարանն էր։

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ՓԱՍԱՏԵՆԱ, ՅՈՒԼԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 1989

digitised by A.R.A.R.@

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ

IV

Ո՛չ, հնարաւոր չի թուիր, որ երբեւիցէ, գոբշ ու ծոյլ բունի մը մէջ հետզհետէ ծերացող այս քաղաքը վերադառնայ իր արքայական անցեալին։ Հնաբոյր ու քարէ բակերէն ներս հնչեն երկաթապատ դռներու մելամաղձոտ զանգերը։ Նկարագեղ կառքերէ, իրենց հագուստներուն հեշտաւէտ շրշիւններուն հետ, գրեթէ աւելով սալայատակը իրենց շրջազգեստներուն տտուններով՝ իջնեն միջնադարեան չբնաղ ու սեւաբիբ տիկիններ կամ Լուդովիկոսեան շրջանի արձակունակ ու շուայտ օրերէն վերադառնան այս գաղջ ու սահող, իրարու մէջ սպառող փողոցներուն տրտում բանաստեղծութեան՝ բարձրահասակ ու փրփրուն ժանեակներու, բրնձափոշիի եւ քաղցրաբոյր կեղծամներու մէջ կորսուած սպիտակ աղջիկներ։ Ո՛չ...

Անցեալյուշ տուներու խոյակները հետզհետէ կը թափին ու քսաներորդ դարու մեքենական ու սեւ դէմքը ահա՛ կ'երեւի փողոցներէն։ Միայն հանքային ջուրի աղուոր ցայտաղբիւրներն են, որ անցորդը կը տանին հեռաւոր օրերու։ Մերկ ու սպիտակ իրանններով սօսիներուն վրայ նպուտները լռած են արդէն ու մեծ յեղափոխութեան պազշոտ, տենդահար ու շուայտ տրիբուններէն մէկուն, հաստ ու տգեղ դէմքին վրայ ահա՛ նոյն մոխրանման, յուսահատօրէն միօրինակ անձրեւը կ'իյնայ աղտոտ փոշիի պէս։ Աշուն է, աշուն է...

Հարաւի ջերմ ու լուսոռոգ առաւօտներուն վերադարձին պէ՛տք է սպասել ամբողջ ձմրան ընթացքին։ Մինչ այդ պէ՛տք է սիրել այս թաց ու տարածական հեռանկարը, լռութիւնը, որ կը մակաղի քաղաքին վրայ ու քաղաքապետարանի ժամացոյցին խոնջ հարուածներուն ձայնը։ Կայարանը հեռու է ծառուղիէն։ Միայն հեղգ ու ծանրամարմին հանրակառքերու տհաճ աղմուկն է, որ կը խզէ հնաւանդ լռութիւնը, յիշեցնելով որ գարթուն է քաղաքը ու հո՛ս եւս մարդիկ կը կռուին իրենց ուրախութեան եւ ծուլութեան իրաւունքին համար։ Կը սիրեն ու կը տառապին։

digitised by A.R.A.R.@

Գլխաբաց ու նայուածքը մոլար՝ կը քալէ ընկղմած՝ մտքերու մանուածապատ բաւիղի մը մէջ։ Ու քանի անցեալասոյզ քաղաքը կը գրաւէ զայն իր աշնան թախիծովը, այնքան մտքերը կը հեռանան՝ անորոշ ափերով հեռաւոր ժամանակներու մէջ ու կը կառչին սիրոյ տեսիլներու։ Կարծես, որեւէ արուարձանային կուսանոցի մէջ, իրիկնային զանգակներ ահա՛ դանդաղ ու ծորուն ձայնով մը կը բակուին, դաշտերու անծայր տափարակին վրայ, խուցերու դռները կը բացուին գաղտնօրէն, հազիւ լսելի ընելով ծխնիներու ճռինչը ու բարէ ցուրտ միջանցքներու կիսալոյսին մէջ ահա՛ կը կազմուի քաղցրամարմին կոյսերու շնորհագեղ թափօրը։ Տէրունական հագուստներու տարփայեղց մութէն կ'անջատուին ամբողջովին զուսնատ ու փղոսկրեայ դէմքեր ու տխուր, այլ շատ հեշտագին դող մը կը քալէ կամարակապ եկեղեցիի մը լռութեան յատակին վրայ։ Հարաւի տաք աղջիկներ են, ձիթապտուղի պէս սեւ աչքերով՝ ուր սիրոյ տենդը անշէջ բոցի պէս կը վառի։ Գիշերը, իրենց սիրայեղց մարմիններուն մէջ կը բնակի Նազովրեցին, մինչ ցերեկը իրենց շուշանային սպիտակութեան վրայ՝ համբոյրի պէս կը քսուի աշտանակներուն ցոլցլուն ու սուրբ լոյսը, եկեղեցիէն ներս։

Անշուշտ աշնան առաւօտը չէ յանցաւոր, իր մաշեցնող ձանձրոյթովը եւ ոչ ալ այս վաղնջական քաղաքը՝ որ իր մարմինէն ներս կ'արթննան այսպէս սրբապիղծ ու գէշ ցանկութիւններ։ Գուցէ սօսիի մերկ բուներն են՝ որ կը յիշեցնեն, թէ աշնանային գոց գոյնով ու գրեթէ տաք ու թանձր հագուստներուն տակ՝ կնոջ մերկ, մաքուր ու անձնուէր մարմիններ կան, կարօտ սիրոյ եւ մեծ զգուանքներու։ Ամէն գիշեր, մութին հանապազօր անկումին հետ, շրջազգեստներ կան, որ ջղային մատներու տագնապահար անապարանքին տակ՝ կը բակուին ու կը թափին գետին։ Այս գրեթէ մեռած փողոցներուն ծանր նինջը եւ պատուհաններուն կուրութիւնը կը յայտնեն, վարագոյրներուն ետին, երկար ու տենդագին գրկախառնումներու ամբողջ գաղտնի խորհուրդը։ Նո՛յն բառերը, որ հակառակ դարաւոր գործածութեան, կարծես թէ կը պահեն իրենց սկզբնական թովչանքը՝ կը բովանդակեն բոլո՛ր կրքերուն, վայրի ու գաւառական յամառ կապերուն, սիրոյ գերութիւններուն ու հեշտութեան անզուգական պոռթկումներու ամբողջ բանաստեղծութիւնը։ Եթէ կարելի ըլլար, հարուստի ապարանքներէն սկսեալ մինչեւ աղքատներու իրարու վրայ դիզուած տուները՝ ուղղահայեաց հատումով մը կտրել, գիշերուան նո՛յն ժամուն, եթէ կարելի ըլլար առասպելական գործիքներու եւ ընկալուչներու մէջ ընդունիլ գիշերուան մը ընթացքին արտասանուած բոլոր խօսքերը, եթէ կարելի ըլլար միայն...

digitised by A.R.A.R.@

Մազլցուն ու դալարագեղ պատուտակներով շրջանակուած պատուհանէն էր, որ հարաւի այդ տաք ու դալար աղջկան դէմքը կը ցոլար երեկոները: Պատշգամը քարէ էր ու հին: Ամբողջ տունը արդէն կը յայտնէր, իր ծանր ու ցուրտ կառուցուածքովը՝ որ բազմաթիւ գարուններ եկած ու անցած էին, իրենց ծիծեռնակներով, այդ տանիքէն: Փղոսկրեայ ճակատը, այդ աղջկան, սեւ ու մեծ ալիքներով վարսերու շուքին տակ՝ կը յիշեցնէր, որ ո՛չ միայն կարելի, այլեւ գուցէ քաղցր է մեռնիլ կնոջ մը ոտքերուն տակ: Ուսերը քիչ մը նեղ էին, կուրծքերը՝ անառարկելիօրէն գարնանային ու մէջքէն վար՝ վտանգաւոր կերպով գրգռիչ էր ու ճապուկ, իր մարմնին անհանդարտ գեղեցկութիւնը: Ծածկըւած կիսով՝ դալարիքներուն մէջ, կը ժպտէր վարէն անցնող ուսանողներուն: Եւ իր աչքերուն մէջ՝ շատ էգ ու շատ հոսուն քաղցրութիւն մը կար: Տունին երկար պարեգօտը՝ այն պատրանքը կը ստեղծէր, թէ այս փողոցէն դուրս, չկան երկնակարկառ տուներ, մեքենաներու խուլ ձայն ու սեւ, յուսահատօրէն ճարտարարուեստական դաշտանկարներ: Ու կը ժպտէր բոլորին, այդ էգ, շատ հոսուն ու շռայլ աչքերուն ամբողջ ջերմութեամբը: Կը ժպտէր միայն: Եթէ մէկը համարձակէր լուրջ հրաւէրի մը պէս ընդունիլ՝ այդ դանդաղ հայեացքը ու խնդրէր յառաջիկայ հանդիպում մը, կ'ըսէր.—Այո՛...: Բայց երբեք, ո՛չ ոք կրցաւ հպիլ իր շրջազգեստին: Սկիզբները, ինք ալ բոլո՛ր իր ընկերներուն նման յուսահատ ու զայրացած փոխեց ճամբան, բայց քանի մը շաբաթներ յետոյ վերադարձաւ ամօթապարտ քայլերով՝ պատըշգամին տակ, նո՛յն դալար ու հեռաւոր գեղեցկութեան...

Նայուածքը մոլար՝ կը քալէ ու իր քայլերը կը հնչեն սալայատակին վրայ: Անձրեւը կը թրջէ զայն ու կարծես կը բարձրացնէ մարմնին խարխուլ տենդը: Առաւօտեան այս ժամուն սիրոյ այս հրատապ ծարաւը, խղճի ձայնի պէս՝ յամառ է եւ դառն:

Հիւսիսային թափառիկ գեղեցկութիւն մը, կապոյտ ջուրերու մէջ խեղդուած աչքերով, կ'անցնի որպէս ժամանակավրէպ, քըսւելով իր անօթի տեսողութեան:

Ո՞վ է, ո՞ր շրջմոլիկ հովը նետած է զայն հոս:

Արձանօրէն աղուոր ու սառնամանիքէ մարմնին վրայ՝ ամբողջ հարաւը գուցէ կրնայ զոհանալ իր տապէն: Բաց-գոյն վարսերուն խորը կարծես ծովի դալուկ ծիլեր կան: Աչքերուն խորը՝ սպիտակ կղզիներ, ընկղմած կապոյտ մշուշի մէջ ու ձեռքերուն վրայ՝ կարծես ցուրտ երկրի զով ծաղիկներ:

Ո՞վ է, ո՞ր շրջմոլիկ հովը նետած է զայն հոս:

Հիւսիսէն եկած՝ անցորդուհի մը միայն, վաղնջական այս քաղաքին մէջ:

digitised by A.R.A.R.@

☆ ☆ ☆

Հոգի՛ս, դուն առաջին օրն իսկ սիրեցիր այս լռակեաց ու հին քաղաքը, իր տուներուն հպարտ ու աւանդական գեղեցկութիւնով, աղբիւրներուն կարկաչով, ամրան՝ փողոցներուն զաղջ անդորրութեամբ, ու ձմրան՝ իր յորդ անձրեւներովը։ Սիրեցիր՝ մարդոց դիւրահաղորդ, այլ գոց նկարագիրը, իրենց բառերուն չափազանցութեան ու աղաղակող ուրախութեան հետ՝ նուրբ ու ծածուկ հեգնութեամբը։ Սիրեցիր՝ Օգոստոսի գիշերները, երբ ծառուղին ի վար, սօսիներու դալար ճիւղերուն մէջ, նպուտները կ'երգէին եւ կարծես թէ հարաւի տաք հողերէն, առուոյտի արտերէն ու ձիթենիներու չարքաշ անտառակներու խորէն՝ աղօտօրէն, իր դարաւոր թարմութեամբը, կը հնչէր հեռաւոր սրինգներու պզտիկ մարմիններուն մէջ Վիրգիլիոսի-դաշն ձայնը։ Սիրեցիր՝ հանքային ջուրի մամռապատ ցայտաղբիւրները, սալայատակին մէջտեղ, իրենց մնայուն հնութեամբը։ Սիրեցիր՝ հանգըստաւէտ ու ընդարձակ սրճարաններուն քացարձակ խաղաղութիւնը, որ կը խզուէր միայն ուսանողներու շաղակրատ աղմուկով ու հարաւի աղջիկներու հնչուն ծիծաղով։ Գարնան՝ սիրեցիր բնութեան շուայտ զարթօնքը, ծլարձակման ամիսին, ու հակասութիւնը՝ զարթնող բաներուն եւ այս հնամեան պատերէն բարձրացող անցեալի վայրահակ տրտմութեան միջեւ։

Սիրեցիր՝ դալար ու յորդաձեղ աղջիկներու տաք ու բորբ մարմինները, իրենց աչքերուն վայրի կրակովը ու թխագոյն մորքը իրենց՝ ուր խալի սեւ հատիկներ, կը գրգռէին քու անյագուրդ ախորժակդ։ Սիրեցիր՝ իրենց կարկաչուն ու տոհմիկ լեզուն, լատինական քաղցրահունչ դաշնութեամբ, որ ուրախութենէն խոխոջաձայն կը վազէր Ոպանէլի* աղուոր տաղերուն եւ Միսքրալի* բնարական երգերուն մէջ։ Սիրեցիր՝ արեւատապ կողերը, այս տենդահար երկրին, ուր վտիտ բուներով ձիթենիներ կ'այրէին, ինչպէս առասպելական մորենիներ, արեւին մեծ համբոյրէն։ Դեղին ու փոշեպատ ճամբաները, եզերուած մուրտի փուշերով ու անտառները՝ ուր օդը կը խեղդուէր արեւահեղձ հողին վրայ եւ փոքր ջրերը՝ գարնանադէմին, երբ վայրի մեխակները հազիւ կը ծլէին ու մանիշակները կը բացուէին հարիւրաւոր աչքերով։ Սիրեցիր՝ կաղենիներու գաճաճ ու յամառ թաւուտները, արտերուն եզերքը ու երգերը, ցանկայարոյց ու ջերմ, որ որպէս մարմնացեալ ծարաւ, կը մատչէին ի համբոյր, կոյսերու արեւահամ շրթներուն։ Սիրեցիր՝ խաղաղաւէտ ու ծոյլ գիշերները, նեղ փողոցներն ի վար, ուր քու կարօտդ մեծաքայլ կը վերադառնար

* Փրովանսցի բանաստեղծներ։

digitised by A.R.A.R.@

հայրենական հողերուն։ Սիրեցիր՝ աւատական դղեակները, իրենց հաստ ու միջնադարեան պատերով, վերածուած ագարակի, ու հոգմը՝ որ կարծես թէ անձրեւէ թրջուած արտերուն վրայ կը հեղուր յաւիտենական Միջերկրականի աղի բուրումը։ Տաք երկրի ժուժկալ բոյսերը ու անձրեւին գեղեցկութիւնը սիրեցիր՝ ամրաց տապ օրերուն։ Ցայգային պտոյտները հեռատր կածանները էն ներս ու լոյսը, հարաւի անսպառ, մեղկ, մերկ լոյսը առաւօտեան...

Ո՛վ հոգիս...

☆ ☆ ☆

Ցոգնութեան հետքեր կային աչքերուն տակ, կոպերը թեթեւորէն ուռած էին ու բիբերուն խորը՝ բաժանումի եւ լքումի ցաւ կար։ Ամառը դեռ չէր վերջացած, երեկոն կը խեղդուէր յարաւնուն տապէն։ Մեծ ամպեր՝ կարծես պիտի պատռէին կուպրով ծեփուած սալայատակներուն վրայ։ Սրճարաններուն յառաջամասերէն խուլ ու տաղտկալի աղմուկ մը կը բարձրանար։ Մեծ մարմինով ու դանդաղաքայլ հանրաքարշեր՝ երերալէն կը հեռանային։ Ուրախութիւնը կը թուէր շատ հեռու։ Ծառերը կը յօրանջէին։ Կոյր երգիչ մը՝ փողոցի շրջմոլիկ մեղեդի մը կը հեծկըլտար՝ իր կոյր ձայնովը։ Ամբողջ մայրաքաղաքը շնչատ կը հեւար։

Վաղը՝ պէտք էր մեկնիլ, հեռանա՛լ։

Համալսարանի տեղեկատուական դիւանի սրահին մէջ հանդիպեցաւ այդ բարձրահասակ գերմանուհիին։ Քիչ մը նեղ ու վայելուչ ամառնային հագուստներուն տակէն կը յայտնուէր երիտասարդ աղջկան՝ իր քիչ մը լեցուն ու պիրկ մարմինը։ Հակառակ մարմնի վարի մասին քիչ մը հեշտաւէտ թանձրութեան, կոնքի լայնքին, երկար ու ցանկայարոյց ազդրերուն՝ ուր արեւելեան կիներու յատուկ շամբուշ ու քիչ մը շուայտ գեղեցկութիւն մը զայն կարծես կը հրափրէր սիրոյ։ Սրունքները բարեձեւ էին, ջղուտ ու յայտնապէս մարզական։ Կեցած էր քիչ մը անդին ու կը սպասէր կարգի։ Ու բնաւ չէր նայեր իրեն։ Դէմքը քիչ մը լայն էր ու աչքերուն խորը՝ կար կարծես վայրի եւ արու վճռականութիւն մը։ Վարսերը սակայն, կողմնակի անկումով մը, դէմքին կու տային իր երկրի աղջիկներուն յատուկ լուրջ ու բանաստեղծական արտայայտութիւն մը։ Բերանը անդիմադրելիօրէն խենթ, տաք, մսեղ ու կարմիր բերան մըն էր։ Ռունգերուն շուրջ հազիւ նշմարելի գծեր կային, ականջները բարակ էին ու ձեռքերը՝ նուրբ, մարմնին անհամեմատ կերպով նուրբ։ Բիրերուն մէջ դեղնագոյն բիծեր կային, բիծեր՝ որ նշան են կա՛մ անգթութեան եւ կամ ջերմ, սիրահար արեան։

digitised by A.R.A.R.@

Նայուածքը կախեց գետին ու հակառակ մարմնին ամբողջ խոնջէնքին՝ բիբերուն մէջ բուսաւ նո՛յն մեղսակից ու անառակ ժպիտը, որուն ներկայութիւնը ինք այնքան լաւ կը զգար, ահա՛ տարիներէ ի վեր։ Յետոյ՝ շրթներուն վրայ կազմուեցաւ հեգնոտ ու շախախնդիր նախադասութիւն մը՝

—Ահա՛ աղջիկ մը,— ըսաւ,— որ առանց սիրոյ չի կրնար ապրիլ։ Ռունգերը բարակ են ու գրեթէ թափանցիկ, ինչ որ մատնիչ նշան է...

Յետոյ զայրացած, մարմնէն ներս փողոցի տղու այս յանկարծական վերադարձէն՝ ուսերը թօթուեց, հայհոյելով ինքնիրեն. ծխամորճը վառեց ու գլուխը դարձուց անդին։ Բայց իրենց նայուածքները հանդիպեցան իրարու, ծխամորճին ծուխին մէջէն ու գէշ եւ անմիջական արու մը, իր արեան մէջ՝ յաղթական քրքիջով մը խնդաց։ Աճապարանքով ստացաւ ուզած տեղեկութիւնները, բայց քայլերը կը յապաղէին։ Խարդախութեամբ՝ սկսաւ ծխամորճը լեցնել ու երբ նայուածքը վերցուց, տեսաւ գերմանուհին, որ կարծես կ'ուզէր խօսիլ իրեն։ Առողջ ու շատ պարզ ժպիտ մը կար դէմքին վրայ ու աչքերը այնքան քաղցր էին երիտասարդութեամբ, որ ակամայ ինք ալ ժպտեցաւ քիչ մը ծաղրածու ու քիչ մը մանկական յանդգնութեամբ մը եւ նայեցաւ անոր սլացիկ հասակին, կուրծքի գունդերուն ու կրկին նոյն անառակութեամբ՝ նուրբ, գրեթէ թափանցիկ ռունգերուն։

Յետոյ՝ աղջիկը, առանց իր յամառ նայուածքէն երկնչելու, ըսաւ, տաք ու քիչ մը խուլ ձայնով, ինք ալ իր կարգին քննելով զայն՝

—Ներեցէ՛ք անփափկանկատութեանս, կարծեմ երկուքս ալ նո՛յն քաղաքը կը մեկնինք, չէ՞ք կրնար քանի մը յաւելուածական տեղեկութիւններ տալ ինծի...

—Բայց անշուշտ,— պատասխանեց բերանը քմահաճօրէն բանալով ու կարծես մասնաւորաբար ծխամորճին ծուխը փչելով աղջկան դէմքին,— անշուշտ, օրիորդ, խնդրե՛մ...

Ու կողք կողքի սկսան քալել։

—Ընկերուհի մը ունիմ, որ կը յուսահատեցնէ զիս, կ'ըսէ՝ մեռած, ձանձրալի, անկարելի քաղաք մըն է։ Իսկ ես հոս մնալ չեմ ուզեր, աշխատիլ կարելի չէ...

Յիմար, անմիտ աղջիկ մըն է այդ ընկերուհին անտարակոյս։ Ու շրթներուն վրայ ահա՛ նախադասութիւնը, որ ճամբայ կ'ուզէ
—Արդէն բոլոր գերմանուհիները քիչ մը յիմար են, զգայնական ու անդարմանելիօրէն միամիտ...

Կը ժպտին։ Ան՝ իր շագանակագոյն աչքերուն խորէն, ինք՝ իր զգայասէր բերնին անկիւններով։ Յետոյ՝ ինք կը սկսի խենթ ու մեծ բառերով, հարուստ ապրած մարդու դիւրահաղորդ շա-

digitised by A.R.A.R.@

դակրատութեամբ խօսիլ իր սիրած քաղաքին մասին։ Ու քանի կը խօսի՝ այնքան կը մեծնայ իր ուրախութիւնը, աչքերը կը պայծառանան ու յաղթական երիտասարդի իր ստահակ ու ծաղրածու ժպիտը կը դառնայ տաք, հաճելի։ Ցիմար, անմիտ աղջիկ մըն է այդ ընկերուհին անտարակոյս։

—Ո՛չ, ո՛չ,— կը բողոքէ գերմանուհին։

Ու աչքերէն կը բուսնի նո՛յն առողջ եւ ուրախ ժպիտը։

Իսկ իր շրթներուն վրայ նո՛յն նախադասութիւնը.

—Ահա աղջիկ մը, որ առանց սիրոյ չի կրնար ապրիլ...

Անձրեւի կաթիլներ կ'իյնան տաղտուկով։

—Եթէ ժամանակ ունիք, քիչ մը նստինք,— կ'ըսէ, կեղծ անփութութեամբ, կլլելով ծխախոտին ծուխը։

Կը նստին։ Յետոյ կ'անձրեւէ։ Մութը կ'իյնայ ծանրօրէն։ Լոյսի կտուցները կը բուսնին։ Անշո՛ւշտ, անշո՛ւշտ կ'օգնէ իրեն։ Օր մը կրնայ յետաձգել իր մեկնումը։ Անապարելու պատճառ չկայ։ Երկուքով ճամբորդութիւնը անշուշտ աւելի հաճելի է։

Ինչպէ՞ս տաք է ձեռքը եւ նուրբ։ Ու սեղմումը՝ ինչպէս պինդ, կարծես ընտանի։

—Ցտեսութիւն։ Ուրեմն, երեկոյեան ժամը ինինն...

Կը զարթնուն յիշատակներ։ Ո՛չ, կարելի չէ անձրեւին տակ թափառիլ։ Ահա՛ իր հասակը, որ կորսուեցաւ մութին մէջ։ Ահա՛ նաեւ իր յանցաւոր ակնկալութիւնը։

—Աղջիկ մը, որ առանց սիրոյ չի կրնար ապրիլ, ո՛չ, չի կրնար...

—Սպասեակ, թուխ գարեշուր մը...

Եւ բաժանումի ցաւը, որ յանկարծ կ'արթննայ կրկին։ Եւ իր տխրութիւնը, որ կը բողոքէ։ Նուրբ, երկդիմի, գորովագին ժպիտ մը՝ որ մելամաղձոտութեամբ կը նայի աչքերուն։ —Այդքան շո՞ւտ,— կ'ըսէ մեղմօրէն,— այդքան դիւրութե՞մբ...

—Հանիա՛, Հանիա՜...

Օ՜, այս անյաղթուդ ծարաւը իր արեան մէջ, մարմնին բիրտ տենդը, որմէ ահա՛ կ'ամչնայ։ Հաւատարմութեան պակաս չէ ասիկա, ոչ ալ գռեհիկ շնութիւն։

—Ներող եղի՛ր, ներո՛ղ եղիր, Հանիա՛...

—Այդքան շո՞ւտ,— կը կրկնէ մեղմօրէն,— պզտիկ Աշո՛ւտ, այդքան դիւրութե՞մբ. մոռցա՞ր բոլոր արտասանուած խօսքերը եւ թեւանցուկ մեր պտոյտները, եւ գիշերները՝ քու սենեակիդ մէջ եւ մեր աշխատանքի ժամերը...

...Ու քու խոշոր բառերդ, պզտի՛կ յիմար եւ իմ համբոյրներս՝ որոնցմէ երբեք չյագեցար։

—Հապա՞ Իդան,— կը յարէ դաւադիր ու պզտիկ ձայնով մը,— Օ՜օ լաւ չէ ըրածդ, Աշո՛ւտ, բնաւ լաւ չէ...

digitised by A.R.A.R.@

☆ ☆ ☆

* Միթէ կարելի՞ է, որ երբեւիցէ կարենամ ճիշդ հաշիւը գտնել այն բոլո՛ր կնոջ մարմիններուն, որ յիշատակիս մէջ կը յամենան։ Սպիտակ կամ թխաթոյր մարմիններ, ըմբոստ կամ անձնատուր, ձեր թաթուն կամ յայտնի, ձեր կիսով տեսնուած կամ հազիւ զգացուած գեղեցկութիւններով, մարմիններ՝ որ գըրկած եմ թեւերուս մէջ, մարմիններ՝ որոնց վրայ, հեռուէն նայուածքս կորսնցուցած է իր մանկութեան անուշ ժպիտը, փողոցներու կիսամութին, ջուրերու կապոյտին, հագուստներու կրքայարոյց անգաղտնապահութեան, տենդահար շարժումներու ամբողջ խելագար կշռոյթով արբեցած, նկարներու վրայ եւ անկողիններու մէջ, կնոջ մեղապարտ, անհաւատարիմ, տրտում մարմիններ, ո՞վ գիտէ ձեր հաշիւը...

Երազներուս փափուկ հէնքերուն վրայ, կամ թրթռուն եղանակի մը մշուշին մէջ, ձեր աղուոր կուրծքերուն սպիտակ ցայտքերովը, ձեր ծունկերուն յամառ ջերմութեամբ, ձեր գիտուն ձեռքերուն անփոխարինելի գորովով, ձեր սրունքներուն հոսուն մերկութեամբը՝ կնոջ քաղցր մարմիններ, կատարելապէս անդիմադրելի մարմիններ, ո՞վ գիտէ, ո՞վ գիտէ ձեր հաշիւը...

Վայրկեանով մը, ժամով մը, օրերով ու տարիներով՝ ձեր անբացատրելի ու բռնակալ դիւթանքովը՝ հոգիս շղթայի տակ պահող, ահա՛ արբունքի առաջին տարիէն ի վեր ձեր անկորնչելի ու մեղկ ջերմութեամբը՝ արիւնս թունաւորող, ծաղիկներու, ծիլերու, անձրեւներու, երգերու, գազանի հրատոչոր աչքերու ու վերազարթնող, ննջող կամ յղութեան մէջ եղող բնութեան բոլոր շշուկներուն մէջ, ձեր յեղակարծ ներկայութեամբը յաղթանակող՝ կնոջ էգ մարմիններ, զէջ մարմիններ, չպիտի՞ ըլլայ որ գրքերուս եւ թղթերուս հետ, աշխատանքի սեղանիս առջեւ, կամ պայքարի տենդին մէջ, գիս հանգիստ ձգէք այլեւս, ազատէք գիս ձեզմէ...

Ձեր վրայ մարմինս ահա՛ հետզհետէ կը հինանայ, կը մաշի յաղթական երիտասարդութիւնս ու հոգիս կը կորսնցնէ իր չքնաղ մանկութիւնը։ Անկողին հեշտութեան, տկարութեան, բազմաթիւ լքումներու, պարտազանցութեան, անօթնե՛ր մեղքի, դուք թշնամիներս եղաք ու ամէ՛ն տեղ հալածեցիք զիս։ Ի՛նչ դիւրութեամբ, որ ցանկացի կամ ունեցայ ձեզ՝ նոյն դիւրութեամբ ալ ահա՛ իմ արհամարհանքս ու ատելութիւնս կ'ընդարձակուին դէպի ձեր չարագործ զօրութիւնը։ Ձեր տէրն ու ձեր գերին եղայ միաժամանակ ու հիմա չեմ գիտեր, թէ ո՞վ է տէրը, եւ ո՞վ է գերին...

Տասը, քսան, աւելի գուցէ, այս տարիներու ընթացքին, ուր օտար երկրի մէջ, կորսնցուցի պատանութեանս հրայրքն ու հը-

digitised by A.R.A.R.@

պարտութիւնը, մատադատի աղջիկներու կամ հասուն կնոջ մարմիններ, երբեք հարկ եղածին չափ չպիտի կրնամ ատել ձեզ։ Ձեր յիշատակին առջեւ ցասումս կը մեծնայ, կը տարածուի ու մեծ բոցով մը կը լափէ ձեզ, կնոջ՝ ոչ ոքի լրիւ պատկանող ու անազատ մարմիններ...

Ու մտածե՞լ, որ նախորդ օրը, երէկ, այսօր, դեռ վաղը, ներկայ էիք կամ ներկայ պիտի ըլլաք կրկին՝ անկողնիս վրայ կամ ի՛նչ որ աւելի գէշ է, պայքարի կամ աշխատանքի ժամուն, մրտիս կարկահին վրայ, ձեր վատ ու հասարակաց ընծայումովը։ Սենեակ մը չունիմ, որ ձեր յուսալքող ու գարշ շունչովը պղծած չըլլաք ու մարմնիս վրայ չկայ կէտ մը — Օ՛ գթութիւն —, որ ազատ ըլլայ ձեր անարգ հետքերէն։ Իրերուս, տեսարակներուս, բառերուս, ձայնիս ու տեսած բոլոր բաներուս վրայ՝ ձեզմէ հեռաւոր կամ մերձ նշոյլ մը, շե՛շտ մը կայ անպայման, կնոջ տարագիր, գերի, թշուառ, յանախ ծախու եւ յանախ վատ մարմիններ...

Ինչո՞ւ համար ամէն բան չմերժեցիք ինձ...

* Թոյնը փնտռէ՛ Քու սեփական արեանդ մէջ։ Հանոյքդ գործածել գիտցի՛ր։

Փնտռէ՛ ճշմարտութեան բեկոր մը այս դառնութեամբ թաթխուած էջին վրայ...

Զպիտի՛ գտնես զայն։

Ընծայուած ու ընդունուած բաները արհամարհելուն մէջ՝ հասարակ բինախնդրութենէ ու յանցաւոր տկարութենէ զատ ուրիշ բան մի՛ փնտռեր։

Եթէ ցանկութիւնդ գէշ անասունի մը պէս սողաց՝ կնոջ մարմիններուն վրայ, այդ միթէ կը բաւէ՞ ժխտելու համար յղացող մարմիններու ամբողջ կողոպտանքը։

Եթէ ամէնուրեք փնտռեցիր Քու հասարակ յազեցումդ, եթէ կարծեցիր, որ կնոջ մարմինը ուրախութեան գործիք մըն է միայն կամ երջանկութեան փորձադաշտ մը՝ հիմա կրէ Քաջութեամբ գոհացումէն յետոյ բարձրացող այս բարոյալքող դառնութիւնը։

Աւելորդ են բոլո՛ր հայհոյական բառերը։ Մարմնիդ տենդը խեղդէ՛ աշխատանքի ստեղծագործ ցաւին մէջ։ Սպառէ՛ արիւնդ, թափէ՛ զայն...

Ցաղթանակէ՛ զգայարանքներուդ։ Բարձրացի՛ր հեշտութեան այս սեւ ափերէն։ Ուսուցանէ՛ ինքզինքիդ բեղմնաւոր զրկումներուն գեղեցկութիւնը։ Ամբողջ մարմնով նետուէ՛ պայքարի մէջ ու խարազանէ՛ անդամներդ, որ անընդհատ Քեզ կը կանչեն չնչին հանոյքներու։ Գլուխդ բարձրացո՛ւր յաղթութեամբ ու նայէ՛ ընկերուհիներուդ հզօր ու ջինջ հայեացքով։

digitised by A.R.A.R.@

Տա՛ր իրենց վերջնական ձեւին ու իրագործումին՝ քու բոլոր դրական կարողութիւններդ։ Եղի՛ր մարդ մը, որ կը նայի բարձունքներու։ Արդիւնաբերէ՛...

☆ ☆ ☆

Երբ կառաշարը սողալով՝ ետեւ ձգեց քաղաքը, գիշերուան սեւ անյուսութեան մէջ ու խրեցաւ, ընկղմեցաւ՝ դաշտերու անափ լռութեան մէջ, տարափոխիկ մանկութեամբ մը նայեցաւ իրարու ու զգացին, որ այդ բանը կրնայ պատահիլ։ Ան կը մտածէր, որ գիշերը կրնար մեղսակից ըլլալ իրեն։ Ճամբորդութեան երկար ու քաղցր գիշերը։ Իսկ աղջիկը նայելով անոր լայն ու բարի ձեռքերուն, մտովի կ'ըսէր՝

—Տղայ մըն է՝ որուն կարելի է վստահիլ, կրնամ հանդարտ սրտով գլուխս հանգչեցնել ուսին վրայ ու ննջել...

Գլխարկը հանած էր ու վարսերը, իրենց կողմնակի անկումով, ստուերի մէջ կը ձգէին կիսադէմքը։ Աչքերուն մէջ կար մելամաղձոտ ու վայրի ցոլք մը ու իր բարակ, գրեթէ թափանցիկ ռունգերը, կիսալոյսին մէջ, կարծես թեթեւորէն կը բացխփէին։ Լռութեան մէջ կը հասունցնար խօսակցութիւնը։ Ներուն մը, միւս անկիւնը՝ թաղուած էր ընթերցումի մէջ։ Առաջին բառը դժուար էր արտասանել։ Յետոյ կրկին, նոյն տարափոխիկ մանկութեամբ նայեցան իրարու ու զգացին, որ՝ այո՛, կրնար պատահիլ այդ բանը։

Ծխամորճը խաղաղութեամբ լեցուց ու ընկերուհիին հարցուց, թէ գլանիկ մը կ'ուզէ՞։

Կ'ուզէր՝ բայց նախընտրեց չծխել։ Յետոյ հարցուց՝

—Անցեալ օրուընէ ի վեր անշուշտ անուանս մոռցած կ'ըլլաք...

—Օ՜, ո՛չ,— բողոքեց կրքով,— Հելլա՜, Հելլա՜...

—Ե՞րբ կը հասնինք...

—Վաղը կէսօրուան մօտ։ Քիչ մը երկար է ճամբորդութիւնը։ Եթէ կարելի ըլլայ քնանալ, դիւրաւ ժամանակը կ'անցնի, այլապէս կարելի է շատախօսել կամ կարդալ...

—Կարդալ՝ ո՛չ, բայց քնանալ՝ այո՛...

Աչքերը սակայն անառարկելիօրէն զարթուն էին, իրենց մելամաղձոտ ու վայրի ցոլքովը։ Կարծես կ'ուզէին թափանցել տրդուն հոգւոյն խորը։ Առաջին անգամն էր, որ այսպէս՝ գրեթէ յարձակողական յանդգնութեամբ մը, խօսք ուղղած էր անծանօթ երիտասարդի մը ու հիմա ահա՛ կարծես կ'երկնչէր անոր քիչ մը ծաղրածու ու մանուկ ժպիտէն։ Ձեռքերը տաք էին ու շփոթ ու չէր գիտեր, թէ ո՞ր կրնար զետեղել զանոնք։ Ինչպէ՞ս պիտի

digitised by A.R.A.R.@

վերջանար այս հասարակ արկածը...։ Ցամենայնդէպս, հարկ չը-կար երկար մտածելու։

—Ինչու՞ այդպէս կը նայիք,— ըսաւ նայուածքը բարձրացնելով տղուն դէմքին ու ողողելով զայն իր աչքերուն ջերմութեամբը,— ինչպէ՞ս, գեղեցիկ կը գտնէ՞ք զիս...

Գրեթէ կպած, սեղմուած էին իրարու։ Ամառնային հագուստին տակէն կուրծքերը կ'ուռէին թեթեւօրէն ու մարմնին վարի մասին կոր գծերը անգաղտնապահութեամբ կը յայտնուէին։ Անընդհատ՝ ջղային ձեռքերով պարեզօտը կ'իջեցնէր ծունկերէն վար ու ամէ՛ն անգամ մարմնին հեշտաւէտ ու քաղցր կորութիւնը աւելի կը յայտնուէր։ Ամբողջ անձին վրայ առոյգ ու կամակոր բան մը կար։ Միայն ժպիտն էր, որ կը խոնարհէր ու բառերը՝ որ չես գիտեր ինչո՛ւ, կը թուէր, թէ կը պարունակէին անմիջական խոստումի կարելիութիւններ։ Ձայնը ցածցնելով ու հակած տղուն վրայ, գերմանական իր բիչ մը խիստ արտասանութեամբ պըն-դեց՝

—Ինչո՞ւ կը նայիք...

—Տարօրինակ է,— յարեց տղան,— կը կարծէի, որ աչքերուդ գոյնը ուրիշ էր...

—Այո՛, ցերեկը շագանակագոյն է, իսկ գիշերը բոլորովին սեւ։ Մնաց որ, տարօրինակ չէ ատիկա...

Ցետոյ տղան կրկին մտածեց.—Ահա՛ աղջիկ մը՝ որ առանց սիրոյ չի կրնար ապրիլ...։ Ազա՞տ է արդեօք...։ Ցամենայնդէ-պէս, պէտք է զգոյշ ըլլալ, սկիզբները չխրտչեցնել զայն, գոհա-նալ պարզ բարեկամութեամբ։ Ջմրան գիշերները երկար են, ան-շուշտ յաճախ միասին պիտի ըլլանք։ Հարկ չկայ աճապարել...

—Կ'երեւի ձեր շաղակրատութիւնը պարբերական է,— ըսաւ աղջիկը մեղադրանքով,— ինչո՞ւ չէք խօսիր...

—Սպասեցէ՛ք, ամէ՛ն բանի ժամանակը կայ, դեռ բոլորովին չեմ վարժուած ձեր դէմքին։ Ձեր բերանը անդիմադրելիօրէն խենք, տաք ու անձնուէր բանի մը տպաւորութիւնը կ'ընէ վրաս...

—Այո՛, մի՛ շարունակէք,— ըսաւ պարեզօտը կրկին քաշելով ծունկերուն վրայ,— մնացեալը կրնամ մտովի աւելցնել...

—Բնա՛ւ ալ «մնացեալ» չկայ,— պատասխանեց իր ծաղրածու ժպիտով,— ամբողջը այդ էր...

Ցետոյ երկարօրէն, հպարտ ու յաղթական երիտասարդի աչ-քերուն ամբողջ վայրի ու յամառ ցոլքովը նայեցաւ աղջկան աչ-քերուն եւ անոնք այնքան յանդուգն էին, մելամաղձոտ եւ վայ-րի՝ իրենինները՝ նման, որ ձեռքերուն վրայ յանկարծ սիրոյ ծարաւը մեծցաւ, մարմինը դողաց ու շրթները բոնուեցան ջերմէ։ Դանդաղ, այլ վճռական շարժումով մը այդ գեղեցիկ գլուխը քա-շեց իրեն ու բերնին վրայ, գրեթէ վայրագութեամբ համբուրեց

digitised by A.R.A.R.@

զայն։ Աղջկան շրթները կը ցզմուէին յամառ դիմադրութեամբ մը, ձեռքերը սակայն կը մնային առանց բողոքի։ Յետոյ՝ ուժեղ ու տամ դող մը քալեց ամբողջ մարմնէն։ Լռութեամբ ու շատ զորովով լքեց զայն ու նայեցաւ անկիւնի ծերուկին, յետոյ՝ աղջկան մելամաղձոտ ու մեծ աչքերուն, որ կարծես քրջած էին։

—Եթէ վշտացաք,— ըսաւ քաջ ու տագնապահար ձայնով մը,— ըսէք եւ հաւատացէք, որ անմիջապէս կը բարձրանամ ու կ'երթամ ուրիշ մասնաբաժին մը...

Վայրկեան մը՝ նայեցան իրարու ու աղջիկը զգաց, որ՝ այո՛, տղայ մըն է, որ կը կատարէ իր խօսքը։ Ձայնին մէջ կար արուի ազնիւ հպարտութիւն մը ու անկեղծութիւն։

—Ոչ,— ըսաւ պարզութեամբ, թերթերունքները կախելով աչքերուն վրայ ու գլուխը հանգչեցնելով անոր ուսին,— միայն թէ լռեցէք, տեսէք, ինչպէս կը դողամ...

Ցոյց տուաւ իր սպիտակ ու նուրբ ձեռքերը։ Ռունգերը՝ հիմա յստակօրէն կը սարսռային ու բերանը քիչ մը բաց էր ու կարծես թէ բէնոտ։ Յետոյ աւելցուց՝

—Գիտէք, այս սկիզբը լաւ վախնան մը չի խոստանար, զէշ նախազգացում մը ունիմ։ Խոստացէք, որ երբեք չպիտի արհամարհէք զիս այս դիւրութեան համար՝ որով ստացաք ուզածնիդ. տեսէք, տարօրինակ է, ձեռքերս տերեւներու պէս կը դողան...

Պզտիկ թռչուններու պէս սեղմեց զանոնք իր ափերուն մէջ ու վերագտնելով իր ծաղրածու եւ հաճելի ժպիտը, հարցուց՝

—Ի՞նչ կը մտածէիք պատասխանելէ առաջ, երբ հարցուցի, թէ «վշտացա՞ծ էք»...

—Կը մտածէի՝ որ եթէ ցասում կեղծեմ ու թոյլ տամ, որ երթաք ուրիշ մասնաբաժին մը, անշուշտ հետագային աւելի ազդեցութիւն կ'ունենամ վրանիդ։ Հասնելէ յետոյ, անտարակոյս կը հանդիպէինք ու անյիշաչար կերպով կրնայի գալ ու բարեւել ձեզ...

—Յետո՞յ...

—Յետոյ կարելի էր վերսկսիլ, բայց կ'ըմբռնէք անշուշտ, որ դիրքս աւելի զօրացած կ'ըլլար, դժբախտաբար այսպէս է կեանքը, դժուարաւ շահուած բաները միշտ մասնաւոր գեղեցկութիւն մը ունին...

—Ինչո՞ւ այդպէս չըրիք հապա...

—Գիտէք, ուրիշ անգամ մը երկարօրէն կ'ըսեմ ձեզի...

Աւելի սեղմուեցաւ տղուն մարմնին. դէմքը ամբողջ ջերմութեան մէջ էր, ձեռքերը ազատեց ու գլուխը առաւ ափերուն մէջ։ Յետոյ կրկին նայուածքը բարձրացուց ու յարեց.

—Գուցէ լաւ է որ ըսեմ։ Մեկնելէ առաջ լա՛ւ գիտէի, որ կարելի չէ բոլորովին առանձին ապրիլ, օտար քաղաքի մը մէջ, կ'ըմբռնէք...

digitised by A.R.A.R.@

—Այո՛, առանց սիրոյ, ըսել կ'ուզէք...

—Այո՛, կարելի չէ առանց սիրոյ ապրիլ,— կրկնեց ու ամչցաւ առաջին անգամ ըլլալով. ձայնը դարձաւ գրեթէ լի աղապատանոթով ու թարթիչները կախեց մեծ ու գրեթէ թաց աչքերուն վրայ ու կարծես արդարանալու համար,— աղջիկներ կան, որ կրնան, ես երբեք չեմ կրցած...

—Հելլա՛, զուր տեղը արդարանալ կ'աշխատիք։ Թո՛ղ արդարանալ փորձեն միւսները...

—Մեկնելէ առաջ մեծ տխրութիւն մը կար վրաս։ Ու նաեւ անձկութիւն՝ հոգւոյս խորը։ Այնքա՜ն վատ ու գռեհիկ մարդոց կարելի է հանդիպիլ, մեծ քաղաքներու մէջ։ Մնաց որ, դժուար է խուսափիլ, հանդիպումները անընդհատ կը պարտադրուին։ Ու այնքան դժուար է ընտրելը, պաշտպանուիլը, կ'ըմբռնէ՞ք...

...Անցեալ դպրոցական տարեշրջանէն զէշ յիշատակներ ունէի։ Անշուշտ վերջին պահուն միշտ կարելի է ազատիլ անփափկանկատ ու յամառ հետապնդումներէ, բայց դէպքեր կան, որ կը խոցեն հոգիդ։ Ամէն հիասթափութիւն զէշ հետքեր կը թողու։ Ու մարդ չի գիտեր, թէ կոխած հողը խախո՞ւտ է, թէ ոչ...

—...Գիտէ՞ք,— շարունակեց՝ լքելով ձեռքերը արդէն յուզիչ մտերմութեամբ մը,— աղջիկները գրեթէ միշտ կը սխալին ընտրութեան մէջ։ Ու անգամ մը սկսուած կապը դժուար է քակել. մէկ զիջողութիւնը նամբայ կը բանայ միւսին։ Ու միշտ աղջկան մը ու տղու մը միջեւ գերազանցութեան կռիւ կայ։ Ի վերջոյ մէկը կամ միւսը պէ՛տք է պարտուին։

—Ձեր սխալը ճիշդ հոդ է, Հելլա՛,— պատասխանեց համբուրելով անոր տաք ափերը ու նայելով աչքերուն,— բոլո՛ղդ ալ այդպէս էք, անընդհատ թշնամական դիրքի մէջ դէպի մեզ։ Կարծես թէ թշնամիներ ըլլայինք։ Կա՛մ հարկ է հպատակիլ ձեզի ու ամէ՛ն օր քիչ մը աւելի նուաստանալ եւ կամ զերի վարել ու ձեզ համարել սեփականութիւն կամ իր...

—Տակաւին այդպէս է կինը,— ըսաւ ցաւով,— կա՛մ մանուկի պէս պիտի կծկուի իր սիրած տղուն կուրծքին վրայ ու ամբողջովին անձնատուր ըլլայ եւ կամ մօր պէս պաշտպանէ ու նախանձով զուրգուրայ զայն։ Մի՛ կարծէք, որ մենք եւս չենք զգար այս երկուութեան ցաւագին տխրութիւնը։ Միայն թէ դժուար է ազատագրուիլ մեր բնաւորութեան բռնութենէն...

Ուրեմն մեկնելէ առաջ, մտովի կ'ըսէի.—Ապրիլ առանց ընկերոջ, կարելի չէ։ Գուցէ լաւ է հրաժարիլ կանացի փոքր ու գծուծ խաղերէն ու ըլլալ պարզ ու քաջ աղջիկ մը։ Առաջին հանդիպած համակրելի երիտասարդին ըսել.— Ահա՛ աղջիկ մը, որ պէտք ունի ընկերոջ մը ազնիւ բարեկամութեան, զորովին ու պաշտպանութեան...

digitised by A.R.A.R.@

...Երբ հանդիպեցայ ձեզի՝ մտածեցի.—Ահա՛ տղայ մը, որուն կարելի է վստահիլ։ Հպարտ ու ազնիւ բան մը կայ աչքերուն մէջ։ Փորձե՛նք։ Վէրք մը աւելի, վէրք մը պակաս, մէ՛կ է...

Նայուածքը վերջին անձնատուութեամբ մը խեղդուեցաւ տըղուն աչքերուն մէջ ու ձեռքերը ջղայնութեամբ կը թպրտային։ Բերանը երկարեց՝ քմահաճ ու ամբողջովին անկեղծ նուիրումով մը ու երկարօրէն համբուրեց անոր մեծ, գրեթէ զգայասէր ու հրէական բերանը։ Ու այդ փոխարինումը՝ կարծես բարեկամութեան դաշինքի պէս էր։ Յետոյ երկուքն ալ լռեցին՝ զրկուած ու գրեթէ երջանիկ։ Ո՛չ մէկ բիրտ զգացում չէր եղծեր վայրկեանին գեղեցկութիւնը։ Իրենց աչքերը կը ցոլային ջինջ ու տաք լոյսով մը եւ գիշերը մեղսակցութեամբ կը գրկէր զանոնք։ Յետոյ՝ Հելլային թերթերունքները խաղաղութեամբ իջան իր մեծ աչքերուն վրայ ու ննջեց, մինչ ան դանդաղօրէն կը մեկնէր հեռուն, կ'անցնէր փողոցներէ, կը հասնէր ծանօթ տան մը առջեւ ու առանց ձայն տալու կը մտնէր ներս։ Շուն մը կը հաչէր դրացի տունէ մը։ Ու ամէն բան կ'ընկղմէր խաւարին մէջ։

—Իդա՜, Իդա՜...

Մրմնջեցին շրթունքները ու աչքերը պղտորեցան, դէմքը դարձաւ գէշ, մռայլ։

Նուրբ, երկդիմի, զորովագին ժպիտ մը կը բուսնէր, չե՛ս գիտեր ուրկէ ու անյիշաչար յանդիմանութեամբ մը կը նայէր աչքերուն։ Ձայն մը քաղցրութեամբ կը հծծէր՝

—Այդքան շո՞ւտ,— կ'ըսէր մեղմօրէն,— այդքան դիւրութե՞մբ...

☆ ☆ ☆

—Ո՛չ, կեցի՛ր Հելլա,— կ'ըսէր իր քաջ, հպարտ ու տաք ձայնովը, բազուկներով գրկելով գայն ու ճզմելով անոր տաք, զգայուն բերանը,— կեցի՛ր...

Աչքերուն մէջ պաղատանք կար սակայն ու ձեռքերը բռնուած էին տենդէ։ Անոր գիրգ իրանին բուրումը կը տաքցնէր իր երիտասարդ արիւնը, նեղ ու վայելուչ ամառնային հագուստներուն տակէն ահա՛ կը զգար անոր աղուոր ու պիրկ մարմնին հեշտաւէտ թանձրութիւնը։ Ազդրերը երկար էին ու արեւելեան կիներու յատուկ շամբուշ, խենթեցնող բան մը կար վրան։ Ծունկը սեղմուած էր անոր ծունկերուն միջեւ ու յանկարծ՝ ձեռքը հանդիպեցաւ տաք, պիրկ ու մերկ բանի մը, որ լեցուց ափը ու իր զգայարանքները խենթեցան։

—Հելլա՜, Հելլա՜...

digitised by A.R.A.R.@

Կը մրմնջէր, խուլ ու տենդահար ձայնով մը ու շրթները ագահութեամբ կ'իջնէին ու կը փնտռէին կուրծքերուն սպիտակ ցայտքը։ Յետոյ, գրեթէ վայրագութեամբ, զայն կ'ուզէր տանիլ, իր սենեակին ցած դիւանին վրայ։ Ձեռքերը կը դողային մակընթաց սիրոյ ծարաւէն։ Յետոյ կրկին ճմլեց, բերնին ամբողջ վայրագութեամբը անոր տամուկ շրթները ու մարմինը գրկած թեւերուն մէջ՝ տարաւ դիւանին վրայ։ Բայց Հելլայի աչքերուն մէջ այնքան մելամաղձոտութիւն կար՝ հակառակ մարմնին հաճութեան եւ ծունկերուն զաղջ սեղմումին, ձեռքերը այնքան կրաւորական էին՝ հակառակ իրենց յարանուն տենդին, որ իր անքեքելի հպարտութիւնը վերադարձաւ իրեն։ Ելաւ ոտ'ի ու հծծեց՝

—Եթէ յետոյ պիտի զղջամ, Հելլա՛, եթէ վաղը գէշ յիշատակի մը պէս պիտի ըլլայ այս գիշերը, լաւ է կանգ առնել հոս։ Կը ներես, Հելլա՛, բրտութեանս...

—Եկո՛ւր...

Հծծեց Հելլա խուլ ու ամօթահար ձայնով մը։ Բազուկներով փաթթուեցաւ տղուն վզին ու համբուրեց զայն, մինչ շրթները կը մրմնջէին՝

—Աւելի ուժով գիս սեղմէ՛ բեզի, պզտիկ աղջկան մը պէս կը վախնամ, տե՛ս, ինչպէ՛ս իրանս կը դողայ...

Ծունկերէն մէկը խրած էր անոր ծունկերուն միջեւ։ Կը զգար անոր մարմնին դողը։ Անապարանքով բարձրացաւ, մութին մէջ՝ գետին ձգեց հագուստները ու գրեթէ մերկ եկաւ կծկուեցաւ տղուն կուրծքին։ Կուրծքերը իրենց պաղպաջուն մերկութենէն կ'ամրչնային կարծես ու իրենց ամօթէն՝ կը մէջին։ Երկար ու գաղջ ազդրերէն՝ մարմնին դողը կ'իջնէր ծունկերուն եւ սրունքներուն։ Յանկարծ լոյծ ու խուլ յուզում մը բարձրացաւ կոկորդին, շրթներն ու ռունգերը սարսռացին ու սկսաւ արտասուել, կուրծքը աղմուկով կ'ելեւեջէր ու ձեռքերը յուսահատօրէն կը սիրէին զայն։ Իր արցունքներով կը թրջէր տղուն դէմքը ու կ'ըսէր՝

—Տե՛ս, ի՜նչ պզտիկ ու խենթ աղջիկ մըն եմ, խոստացի՛ր, որ միշտ ազնիւ պիտի ըլլաս հետս, մարդոցմէն այնքա՜ն կը վախնամ, Աշո՛տ...

—Այո՛,— պատասխանեց խուլ ձայնով,— այո՛, Հելլա՛...

Յետոյ փնտռեց անդիմադրելիօրէն խենթ, տաք ու անձնուէր բերանը անոր ու յագեցուց իր շրթներուն տենդը։ Երկուքն ալ լուռ էին, շատ լուռ, միայն իրենց խախուտ ու տագնապահար շարժումներուն մէջ էր, որ կը յայտնուէր իրենց մարմիններուն մեծ, գրեթէ խելագար ուրախութիւնը։

(Շար. 2) ՎԱՉԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԵԶ... ՊԻՏԻ ԿՈՉԵՄ

Դեռ մինչեւ ե՞րբ օրերն իմ շուրջ
պիտի անիմուն թափառին
եւ փոքրիկն ներաշխարհն իմ՝
անհայրենիք երգերով։

Դեռ ո՛չ մէկ օր,
ո՛չ մէկ ծիծառ ալեստաւոր
բերաւ ձայնն իր երգեցիկ՝
տենչանքներուս թախծակշռոյթ թաւալքին...

Բայց ես որքան կը ցանկայի յանձնուիլ
կեանքի թովիչ բուրմունքին
եւ բնութեան խայտածիծաղ կանչերուն.
շնչել բոյրը՝ աբստներու ծլարձակ,
գրկել եռգին՝ ծաղիկներու կենսախայտ.
ըլլալ ցոլքը ոսկեթոյր՝
անտառային երազներու ստուերոտ.
եւ անդրադարձն ըլլալ խոհուն՝
աշնանային խորերդայոյզ պահերու...

Կը ցանկայի ըլլալ մէկ տարրը ներզօր
այն հաւատքին բերկրայայտ,
որուն շունչով պիտի հոգիս լիանար
հանգիստութեամբն յանկուցիչ
ոլորտներու անծանօթ.
եւ կարենար հասնիլ լոյսի՛ն զեղազօր՝
առասպելին իր գոյութեան...

Կը ցանկայի ապրիլ թովչանքը սիրոյ՝
իր բնակերպ պարզութեամբ.
ապրիլ խաղաղ,
երերախոյզ ձգտումներով անրջացած՝
լճակի պէս սիգապատ.
շշունչն ըլլալ,
խաչքարերու լանջերուն տակ հեծեծող

digitised by A.R.A.R.@

սաղմոսաշունչ հովերու.
Ըլլալ յանկերգն օրօրուն
շոնենուագ բարձունքներէն արտածորող
հորովելին քախծանոյշ...

Որոնելով արեւազալն խնդութեան,
որ սիրատարփ ըղձանքներուս ճանապարհին
պիտի սփռէր նոր օրհնանքներ ծաղկայորդ,
ո՛վ Պատուհաս,
գիս յանձնեցիր դուն սակայն
նոր յոյզերու գետնադամբան բուիղներուն,
ուր ես՝ փոխան նառագայթին երկնաշող,
գրկեցի վիշտն ախտակէզ՝
խաւարակոծ վայրկեաններուն գիշերական...

Խորտակեցիր դուն իմ մէջ՝
ամէն ցնորք եւ ցանկութիւն.
ընդմիջեցիր
ներանձնայայտ տեսիլներով ծաւալող
ներհուն ընթացքն օրերուս.
եւ խլեցիր դուն ինձմէ՝
կենսազալար երգերն իմ բորբ.
եւ Քանդեցիր ամէն աւանդ,
որ կը տանէր երազանքն իմ
ծաղկածաւալ պարտէզներուն անցեալիս...

Թափառեցայ դաշտերու մէջ ամայակէզ,
դարանակալ Քու ստուերէդ հալածական,
զուր փնտռելով աղապատանքն անմատոյց
ցնորայուշ ակրերու...

Եւ ո՛չ մէկ օր,
ո՛չ մէկ տեսիլ փայլակնալոյս,
ո՛չ մէկ դիպուած հրաշազօր
կամ ո՛չ մէկ ձայն երկնաբարբառ
կերպարեցին անձիդ մէջ,
հոգեփոխման տեսլահիրաշ խորհուրդով՝
նոր էակ մը արթնի.
իր կործանիչ արարքներէն մաքրագրուած՝
ինչպէս Սաուղ՝
նամրուն վրայ Դամասկոսի...

Ես գիտէի,
որ դիմայայտ կրկներեւոյթն ես կեանքիս,
եւ կ'ընթանաս
ճակատագրիս ուղեգիծէն անսայթաք,

digitised by A.R.A.R.@

տանելով գիս դէպի ափերն անծանօթ՝
սխրանքի մը բախտորոշ...

Բայց ես որքան կը ցանկայի,
ո՜վ Պատուհաս,
դիմափոխել պահ մը բեզ,
օժտել հոգիդ բարեհամբոյր բնութեամբ,
որ զօրայաղթ մղումն ըլլաս իմ էութեան,
որ չդառնաս կեանքիս հեւքը բեկանող
խորշակաշունչ ներգործութիւնը բախտին...

Բեզ խղճմտանքի պիտի կոչեմ,
որ ծայնակցիս հոգեբրբիռ լարերուն՝
իրիկնային մահաղօղանջ լռութեան.
եւ տուայտիս խռհերուդ հետ խղճախայթ,
դարձած երգը վշտակիր
աշնանային ոգեմրմունջ յոյզերուն.
եւ վշտակցիս
թռ անցեալիդ անապաշաւ ցաւերուն՝
եղէգներու հառաչալիր հեծութեամբ.
բարեշրջես ամէն արարք ախտաժէտ
եւ շրջանցես ամէն հնարք նենգախոհ
արտասուաշիթ երկունքով.
պարազրկես ցաւոտ ամէն մշտավինակ՝
այգաբացի բերկրամատոյց ջերմութեամբ.
թողածածկես թախծոտ ամէն անդրադարձ՝
իմաստութեան երփնածաղիկ բոյրերով.
ո՜վ Պատուհաս, վշտակեղեր հեծիդ մէջ,
խղճմտանքի ներհուն ծայնով ազնուանաս...

Բեզ պիտի Կեանք կոչեմ ես,
որ ընդգրկես տարերքն ամբողջ
զարնանային տենչանքներու տարփայտրդ.
եւ ընդգրկես համապատկերն յարափոխ՝
ներաշխարհին մարդկութեան.
եւ բնակիս ծայներուն մէջ բնութեան,
ստեղնաշար զրգանքներով էացած՝
իբրեւ կեանքի համայնացած դաշնութիւն.
ծաղկի՛ս իմ մէջ՝
ծիթենաշունչ ծփանքներով ծաւալող
ցայգազուարճ լոյսի պէս.
աճի՛ս իմ մէջ՝
ցորեաններու տառապայեղց բերկրութեամբ.
ոգեղինես նանապարհն իմ երգերուս՝
ամէն անկում յաղթահարող զօրութեամբ.
եւ կեանքին պէս, ըլլաս ծաղկուն ու թովիչ,

digitised by A.R.A.R.@

ո՜վ Պատուհաս, թող ցաւիդ մէջ բեղմնաւոր՝
մրգահասի յոյդ բուրմունքով բաղցրանաս...

Քեզ Տառապանք պիտի կոչեմ
եւ կերպարեմ զգայաշունչ յատկութեամբ,
որ հրաշիք արտասուքով ողջունես
եղեռնակոծ իրավիճակն աշխարհի...
Ցանչնաս կեանքը՝ էութեամբ իր խորարմատ,
Ցանչնաս սէրը՝ տենդերով իր խորաշունչ,
Ցանչնաս վիշտը՝ լիախորհուրդ իր շունչով.
անցնիս ցաւի հրաբուղխ բովերէն՝
եղբայրացած ցաւերուն հետ մարդկային.
թող ցաւիդ մէջ տարփողերգէ վերստին,
հին հողմերու յանախանքէն ոգեսպառ՝
ամէն տենչանք անտէրունչ.
թող օրերու հողմազալար ճանապարհին՝
բարեյուսոյ նոր հանգրուան ըլլաս ծիծղուն,
ուր ո՛չ մէկ սիրտ մնայ կարօտ յափտեան
ճակատագրի կարեկցանքին գրաւատ.
ո՜վ Պատուհաս, տանջանքիդ մէջ կարեվէր,
Տառապանքի անկէզ հուրով գեղեցկանաս...

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց. ԱՂԱՋԱՆԵԱՆ

ԽՂՃԻ ԽԱՅԹ

(ԴՐԱՄԱ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ՝ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ԱՅԱՔՍ

ԱՅԱՔՍ
ԻՈՆԱՍԱ
ՄԱՐԿՈՍ
ՄԵԼԻՍԱ
ԹԵՐՍԻՏԷՍ - գինուոր
ՑՈՒՎԻԱ - ստրկուհի
Ցոյն կանայք եւ տղամարդիկ
Այաքսի պապի ուրուականը
Ոմն իմաստուն
Հովիւ
Երգչախումբ
Դիմակներ.-Մտքերի Ոգի
Զայրոյթի Ոգի
Քէն ու Ոխի Ոգի
Վրէժի Ոգի
Խղճի եւ Գութի Ոգի:

Անցքը տեղի է ունենում հին Տրոյան շրջապատող յոյների ճամբարում:

Ամրոցի բաց դարպասների ներսում երեւացող տերրասպատշգամբը. Իոնասա, Մելիսսա, յետոյ՝ Թերսիտէս:

ԻՈՆԱՍԱ.- *Ահա իմ ոսկեղէն մանեակը, կենտրոնում՝ երկու փայլուն աստղեր, ինչպէս երկու աչքեր բիւրեղաքարերից: Դու չե՞ս ափսոսում քո մանեակի համար:*
ՄԵԼԻՍԱ.- *Ես յօժարութեամբ այն տուել եմ քեզ:*
ԻՈՆԱՍԱ.- *Ո՛չ, վաճառել ես ոչ ցածր գնով:*
ՄԵԼԻՍԱ.- *Սակայն յօժարութեամբ:*
ԻՈՆԱՍԱ.- *Եւ պէտք է յիշես, որ սակարկեցինք:*
ՄԵԼԻՍԱ.- *Ցիշողութիւնը վատ խորհրդատու է:*

digitised by A.R.A.R.@

ԻՈՆԱՍԱ (յանկարծակի ցնցւում է խեղդող ծիծաղից).- Ո՛չ աւելի վատ տեսողութիւնից: Իսկ տեսողութիւնը ինձ չի խաբում, թէ այնտեղ, սեան ետեւում...: Ա՜հ, Մարկոսը փառքի մէջ է, աստեղային ժամն է նրա: Նա իրեն անմահ է կարծում: Նա ձգւում է, երկարում ձեռքը: Նա կկոցում է մի աչքը: Նա շրթունքներն է լպստում: Այնտեղ, սեան ետեւում մէկ մարմին են դարձել...: Ժամանել է երջանկութիւնից: Իսկ աչքը բաց է...

ՄԵԼԻՍԱ.- Սիւնազարդ տերրաս-պատշգամբի եօթներորդ սեան ետեւու՞մ...

ԻՈՆԱՍԱ.- Տես, տես, Մելիսա: (Ծիծաղից ափերն իրար է զարկում):

ՄԵԼԻՍԱ.- Այաքսի պարուհու աչքը մերկ է, Իսկ ձեռքը ստրուկի ձեռք է:

ԻՈՆԱՍԱ (չլռող ծիծաղով).- Բայց ձեռքն օգտւում է կատարեալ ազատութիւնից: Նրան կարող է նախանձել ամէն մէկը: Նախանձախնդիր չլինելը նոյնն է, թէ չիմար լինել նման դէպքում: Եթէ անաղմուկ բարձրանում է փէշը...

ՄԵԼԻՍԱ.- Լռի՛ր, Մարկոսը չէ:

ԻՈՆԱՍԱ.- Եթէ կինը լռում է ի նշան համաձայնութեան, լռութիւնը տղամարդուն ոգեւորում է: Եղիր անկեղծ, Մելիսա:

ՄԵԼԻՍԱ.- Նա չէ:

ԻՈՆԱՍԱ.- Ես կարող եմ գրաւ դնել... մանեակը, իսկ դու գրաւ դիր... հոդակտորը, որ ստացաւ Մարկոսը մանեակի դիմաց: Դու չփոթւու՞մ ես...: Հի, հի, Թերսիտէս...

Գալիս է Թերսիտէսը:

ԻՈՆԱՍԱ.- Տես, տես, Թերսիտէս, զգացմունքների մի հեղեղ... (Նորից բռնուելով ծիծաղով):

ԹԵՐՍԻՏԷՍ.- Խայթէ՛: Ծաւալի եւ տարածութեան համար ստեղծուել է մի ընդհանուր չափ, աչքի մերկութամբ:

ՄԵԼԻՍԱ.- Դա ստրուկի ձեռք է:

ԹԵՐՍԻՏԷՍ.- Բայց Մարկոսի քիթը տնկած է, դա ազատութեան նշան է: Եւ ոչ մի բան նրա ձեռքերը չի կապում: Եւ մենք նրա խաղը դաւաճում ենք:

ՄԵԼԻՍԱ.- Իմ դերն աւարտուած է: Ես թողնում եմ իմ փոխարէն աշխարհը մտածի: (Փորձում է հեռանալ):

ԹԵՐՍԻՏԷՍ.- Օ՜, ո՛չ, նա մի պահ զովանում է զաժան շոգի մէջ՝ աղբիւր գտնող քրտնաթոր որսորդի նման: Իսկ որսը վատը չէ: Ես ճանաչեցի երէկուայ պարուհուն:

ՄԵԼԻՍԱ.- Ո՛չ, բոլորովին: Դուք շողոմ լեզու էք թափում: Բոլորը խաւար է: Այն, ինչ որ չկայ, ինչպէ՞ս կարող է լինել:

ԹԵՐՍԻՏԷՍ.- Դէ, ո՛չ, Մելիսա: Ես նշմարում եմ ամէն ինչ, ստուերն ինձ համար ամենաշօշափելի գոյնն է: Ես գրուագներից որի՞ վրայ կանգառնեմ: Մեր առաւելութիւնը այն է, որ մեր տեսիլքները չեն խառնւում չփոխող յուշերին: Առկայ ճշմարտութեան դէմ ես անուժ եմ:

ԻՈՆԱՍԱ.- Տեսէք, տեսէք, նա զով է անում, միայն այդքանը:

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ո՛չ, սա այն դէպքը չէ:

ԻՈՆԱՍԱ.- Բայց ի՞նչ անուն տանք:

ԹԵՐՍԻՏԷՍ.- Ո՛չ, սա ձեռքը համբուրելու դէպքը չէ: Իսկ աչքերի արանքում...: Չէ՞ որ ձեռքը զբաղուած է:

ԻՈՆԱՍԱ (նորից բռնւում է ծիծաղով).- Բայց եթէ յետոյքը բարձրացած է:

digitised by A.R.A.R.@

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Իսկ դա խորհրդանիշ է։*

ԻՈՆԱՍ.- *Օ՜, այո՛։ Տնկած քիթ, որ յետոյքից այնքան էլ հեռու չէ։ Նա լաւ գիտէ, թէ ինչ է սէրը։*

ՄԵԼԻՍԱ.- *Սա խայտառակութիւն է։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Աչքերդ ծածկիր։ Ես սխալ արտայայտուեցի՝ շրջուիր հակառակ կողմ։*

ԻՈՆԱՍ.- *Մենք ամէն ինչ տեսանք։ Նրանք գետնից նոյն բարձրութեան վրայ են գտնւում, մարդու կէս հասակի չափով։ Պատմե՞մ...*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Երբ ծառերը իրարից հեռու չեն աճում, եւ հողի ամրութիւնը այնպիսին է, որ նրանց արմատները գուրս են գալիս հողի երես, ծառերը փաթաթւում են իրար։ Նրանք փաթաթւում են արմատներով եւ տերեւները աշխատում են ետ չմնալ։ Փաթաթուելը սիրային արտայայտութիւն է։ Ծառերի բները այդ արտայայտութեանը ձգտում են առաւել վառ ու վերջնական տեսք տալ։ Բների գրկախառնութիւնը աւելի է նշում, որ խօսքը սիրոյ մասին է։ Ամէն ինչ հասկանալի է։ Բայց տերեւները ուղում են սխսուալ։ Դա նրանց բացատրութեան ձեւն է, փաթաթուելու իմաստով։ Ամէն ինչ հասկանալի է։ Երկու ծառերի փաթաթուելու դէպքում չփոթութեանը տեղ չի մնում։*

ՄԵԼԻՍԱ.- *Ի սէ՛ր Աստծոյ, լռէք։ Սա ներկայացում է, խայտառակ ներկայացում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Մարկոսն է ներկայացում տուողը, Ես չե՞մ չփոթւում։ Ես գնալով նրան աւելի վա՞տ եմ տեսնում...*

ԻՈՆԱՍ.- *Հիմա ինչպէ՞ս է։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Ոչինչ տեսանելի չէ, այսինքն՝ անտեսանելի չէ, լաւ է երեւում։*

ԻՈՆԱՍ.- *Այսինքն՝ այդ տեսարանները քո աչքերի խորքերում չե՞ն։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Նայիր աչքերիս մէջ, այնտեղ ամէն ինչ պարզ երեւում է. սիւնազարդ տերրաս-պատշգամբի եօթներորդ սեան ետեւում...*

ԻՈՆԱՍ (Մելիսայիին).- *Քո կզաքիսի համբերութիւնը առասպելական է։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Հասկացիր ինձ, Մելիսա, իմ անկեղծութիւնն ապահովուած է, բայց մի մեղադրիր ինձ պարզաբանելու համար։ Ես ուզեցի նշել, որ ծառերի արմատները եւ տերեւների սխսուցը կարող են մեկնաբանել։ Ես փորձեցի գծերը տանել այն ուղղութեամբ, որ տեսնողի անկեղծութիւնն ապահովուած է։ Տուր ինձ քո ձեռքը։ Ոչ, այն Մարկոսին է պատկանում։*

ՄԵԼԻՍԱ.- *Այդպէ՞ս ես կարծում։ Բայց ես կարող եմ քեզ համբուրել, մինչեւ իսկ շրթունքներս յագեցնելով քո շրթունքների ծարաւով։ Կնոջ սիրոյ խոստովանութեան առաջին նշանը ո՞րն է...։ Ահա՛, շրթունքներս։* (Փաթաթւում է Թերսիտէսին եւ շրթունքի շրթունքի համբուրում)։

ԹԵՐՍԻՏԷՍ (ազատւում է Մելիսայից).- *Միայն եղբայրաբար։ Իսկ ստրուկը շարժւում է նրանց կողմը։ Մարկոսը եւ ստրկուհին վեր թռան։ Մարկոսը այս կողմն է գալիս։*

ՄԱՐԿՈՍ (մօտենալով ողջունելու ինչ-որ շարժում է ուզում անել)։

ՄԵԼԻՍԱ.- *Այո, իմ ամուսինը կնամոլ է։ Անպատկա՛ռ։*

ՄԱՐԿՈՍ.- *Հանդիսատեսների ներկայութեամբ...։ Ես անպատասխան եմ թողնում սեփական կնոջ անձիս դէմ ուղղուած վիրաւորանքը։ Քանզի այն բանի քաջ գիտակցումը, որ չարժէ ներկայացում սարքել, պարտաւորեցնում է։*

digitised by A.R.A.R.@

ՄԵԼԻՍԱ.- Աչքերիս տեսածը սեւ վստահ հանգստութեան դիմակի տակ ես պահում։ Իսկ ինձ գոհացում լուռեց իմ ասած խօսքի մէկ բարբառումը։ Ուզում եմ ասածս կրկնել։

ՄԱՐԿՈՍ.- Օ՛, կի՛նս, չէ՞ որ մօտենում է լիալուսնի առաջին գիշերը։

ՄԵԼԻՍԱ.- Օ՛, ցերեկով անողը, կ՛անի նաեւ լիալուսնի լոյսով։ Ամօթը կարծես հաւասար դրութեան մէջ է երկու դէպքում էլ։

ՄԱՐԿՈՍ.- Այսինքն... Ես ի՞նչ մեղաւոր եմ ամօթի համար։

ՄԵԼԻՍԱ.- Ամօթն էլ մեղաւոր չէ քեզ համար։ Դու ամաչեցնում ես ամօթին, նրան էլ վկայ դարձնելով, որ տեսնի...

ՄԱՐԿՈՍ.- Մա՛մ... Ի՞նչ...

ՄԵԼԻՍԱ.- Չես ուզում մատնե՞լ քեզ։ Բայց չէ՞ որ մենք տեսանք։

ՄԱՐԿՈՍ.- Ե՞րբ...

ՄԵԼԻՍԱ.- Ո՞վ էր քեզ հետ եօթներորդ սեան յետեւում։ Նա քեզ հետ էր, բայց հօ չե՞ս կարող ժխտել, որ դու նրա հետ էիր։

ԹԵՐՍԻՏԷՍ (առանձին՝ Մարկոսին).- Դու չես ամաչում, որովհետեւ առայժմ կարողանում ես դիմակաւորուել։ Քանի չէն մերկացրել քեզ, մի սուտ յօրինիր, որ կարողանաս չամաչել։

ՄԱՐԿՈՍ (առանձին՝ Թերսիտէսին).- Ես ամէն ինչ հասկացայ։ (Բարձրաձայն)։ Ես հէնց նոր մտայ տերրաս-պատշգամբ։ Երբ ձեզ տեսայ, քայլերս ուղղուեցին ձեր կողմը։ Իսկ իմ ճանապարհը անցնում էր եօթներորդ սեան ետեւով։ Ստրուկը սեան ետեւում էր, ինչ ուղղութեամբ մօտեցայ սեանը, հակառակ ուղղութեամբ ստրուկը հեռացաւ։

ՄԵԼԻՍԱ.- Ուզում ես ասել՝ ստրուկն էր պարուհու հետ, եւ նա՞ դուրս եկաւ սեան ետեւից։

ՄԱՐԿՈՍ.- Նա էր պարուհու հետ, նա հեռացաւ սեան ետեւից, իսկ ես մօտեցայ սեանը։

ՄԵԼԻՍԱ.- Դու՛ հեռացար, նա՛ մօտեցաւ։ Տեղերը փոխում ես, բայց ոչ չփոթութիւնից։

ՄԱՐԿՈՍ.- Չեմ փոխում։

ՄԵԼԻՍԱ.- Ո՞չ...

ՄԱՐԿՈՍ.- Ոչ։ Այսինքն՝ ոչ քո ոչ-ին։ (Մեկուսի՝ ինքն իրեն)։ Շնորհակալութիւն, Թերսիտէս, դու ինձ փրկեցիր։ Լաւ խրատ է։ Պէտք է կառչել ստից։ Ես ինձ բռնուած էի ոգում դէպքի վայրում, եւ սկսել էի ամաչել։ Բայց ամօթս փախաւ։ Երբ ամօթը ուրիշներն են մեր մէջ յարուցում, եւ եթէ հնարաւոր է ստով չամաչել, ասում ենք նրանց, եւ ամօթը կորցնում է ուժը։

ՄԵԼԻՍԱ.- Եւ յամառում ես չամաչելով։

ՄԱՐԿՈՍ.- Եթէ հայելին կոտրենք, արտացոլուող իրականութիւնը կը չքանայ։

ՄԵԼԻՍԱ.- Անամօ՛թ...

ՄԱՐԿՈՍ.- Ամօթը սահմանափակում է մարդու ցանկութիւններն ու գործողութիւնները։ Ամօթը սահմանափակում է մարդու ազատութիւնը։ Իսկ դրանք մարդկութեան բարձրագոյն ունեցուածքն են։

ՄԵԼԻՍԱ.- Չի՛ ստացուի։ Հերի՛ք է։ Անամօ՛թ։

ՄԱՐԿՈՍ.- «Անամօթ» գոչիւնը ու՛մ բերանից ասես չի հնչում։ Եթէ բոլորն են անում, ո՛վ, ո՛ւմ է մեղադրում...։ Եթէ ազդրերի արանքում ձեռքը զբաղուած է, ո՞ւմ ազդրերի արանքում... ո՞ւմ ձեռքն է զբաղուած...։ Ազդրերը կնոջ ազդրեր են լինում, ձեռքը տղամարդունն է լինում։ Ո՛վ այդ չի արել։ Բոլորդ, թէ՛ տղամարդ, թէ՛ կին, ո՞վ չի եղել այդ

digitised by A.R.A.R.@

դերում։ Մեղադրանքը բոլորին է ուղղուած, ոչ ոք չի կարող իրեն առանձնացնել։ Սակայն բոլորը ամօթ են խաղում։ Եւ մենք բոլորս ինչպէ՛ս ենք մէկս միւսի վրայ ամօթանք բարդում...,

ՄԵԼԻՍԱ.- *Հերիք է։*

ՄԱՐԿՈՍ.- *Բայց չեն ամաչում, որովհետեւ թաքցնում են։ Եթէ բռնուեցին դէպքի վայրում, ամօթ է։ Այսինքն՝ անելն ամօթ չէ, այլ՝ չթաքցնելը։ Ոչ թէ ամօթալի արարքն է ամօթը, այլ այնքանը, որ չես կարողացել թաքցնել։*

Գալիս է Այաքսը։

ԻՈՆԱՍԱ.- *Իմ Այաքս...։ Ի՞նչ...*

ԹԵՐՍԻՏԷՍ (կիսածայն՝ Իոնասային).- *Թող նրան...*

ԻՈՆԱՍԱ (կիսածայն).- *Ի՞նչ է եղել...։ Նա նայում է երկինք, կարծես ուզում է սպասել, թէ երբ կը յայտնուեն աստղերը։ Բայց դա կարծես հետաքրքրութիւնից չի։ Եւ նրա շարժուձեւը հոյակապ չէ, այլ մի տեսակ տխեղծ է նա, թալուկ... նա շարժուեց եւ կանգ առաւ. ինչ նշանակում է խորհել։ Նա մեզ հետ է, եւ մեզ հետ չէ։ Իբրեւ տեսնում է ինչ-որ բան։ Ինչ-որ բան...*

ԹԵՐՍԻՏԷՍ (միսներին առանձին՝ կիսածայն).- *Դուք դեռ չէք լսել այդ գաւեշտական լուրը, այդ ողբերգական լուրը։ Նա սրի է քաշել մի ամբողջ նախիր, շփոթելով յոյների հետ, կարծելով, թէ իր թշնամիներն են դրանք՝ Ագամեմնոնն ու Մենելաոսը։*

ԻՈՆԱՍԱ.- *Այդ ի՞նչ լուր է...*

ՄԵԼԻՍԱ.- *Ես գիտէի։*

ԱՑԱՔՍ.- *Մեռածներ, բացականներ, դուք, որ չկաք, եւ կաք ձեր հարցական հայեացքով...։ Դուք, որոնց մոռանալը այն վէրքն է, որ միայն քրքրում է յիշողութիւնը, եւ չի բերում մոռացութիւն։ Թէեւ ես առաջին անգամ չէ, որ սուր եմ բանեցնում, բայց այս անգամ...։ Նա էլ ունի այնպիսի մատներ...։ Բայց ուժ չէր մնացել ձեռքերի մէջ, ահաբեկուած էր, հալից ընկած...։ Սա էլ ունի այնպիսի մատներ...* (Նայում իր ձեռքերին)։

ԻՈՆԱՍԱ.- *Ո՛վ... Այաքս, ո՞ւմ մատները, ի՞նչ ձեռքերը։*

ԱՑԱՔՍ.- *Շատ նման են լինում մատները։ Եթէ մատները նոյնն են, ուրեմն, նման են նրանք։ Կամ նոյն թշուառութիւնն է սպասում երկուսին։*

ԻՈՆԱՍԱ (կիսածայն).- *Արդէն կատարուածը բորբոքում, թէ վախեցնում է նրան։ Էլ նրա այքերի մթագոյն խորքերը չեն վառում զայրոյթով։*

ԱՑԱՔՍ.- *Նախորդը երկու կոտոշ ունէր։ Այս վերջինը՝ երեք։ Միեւնոյնն է երեւում է։*

ՄԱՐԿՈՍ.- *Բայց ոնց թէ... ո՞նց կը լինի... ցուլ այստեղ, տերրասում, գարմանալի չի՞...։ Դու ուր վրայ երազում ես։ Դիրքդ փոխիր, Այաքս։*

ԱՑԱՔՍ.- *Միեւնոյնն է, երեւում է։*

ՄԱՐԿՈՍ.- *Նաեւ պոզե՞ր։*

ԱՑԱՔՍ.- *Ես ասացի՝ գուցէ պոզեր։*

ՄԱՐԿՈՍ.- *Ուրեմն՝ պոզաւոր ցուլեր։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Առանց պոզերի թշնամիներ էլ կան։*

ԱՑԱՔՍ.- *Ոչ, բանը դրանում չէ։ Ընդհակառակը՝ պոզաւոր մարդիկ, կոտոշաւորներ։ Թշնամիներ։ Թշնամիներ բոլորն են։ Ես ուզում եմ*

digitised by A.R.A.R.@

վարել լուրջ խօսակցութիւն։ Ես տանել չեմ կարող, երբ ինձ յիմարի տեղ են դնում։

ՄԱՐԿՈՍ.- *Ուրեմն՝ երեւո՞ւմ է։ Ամէն ինչ պա՞րզ է։*

ԱՅԱՌՍ.- *Մտածում եմ այն, ինչ որ կայ։ Մարդիկ իրար պոզաւոր թշնամի են։ Եւ ի զուր են ձեւանում։*

ՄԱՐԿՈՍ.- *Մեզ յիմարի տեղ չե՞ս դնում։*

ԱՅԱՌՍ.- *Եւ ի զուր ենք ձեւանում...։ Իսկ ինձ պատել էր վշտի մռայլ ամպը, երբ որ լսեցի գցուած վիճակի մասին։ Իմ զայրոյթը թէժանում էր դանդաղօրէն։ Թէեւ ես չկատարեցի զայրոյթի պահանջը՝ բարձր գոռալ կամ կուրծքը ծեծել, բայց ես զգում էի, որ ոչ մի այլ կիրք այդքան ակնյայտօրէն չէր դրսեւորում իր կուտակումն ու աճը։ Ես թաքցնում էի զայրոյթս եւ չէի ուզում կնոջս երեւալ այդպէս ահաւոր ու այլանդակ՝ սովորական զէմքս կորցրած, աղաւաղուած դոյն ու դիմագծերով, տեսքով վայրենի։ Ի՞նչը կարող էր յաղթանակ բերել այդ կրքի հանդէպ։ Նա ինքն էր յաղթանակում՝ Միտքս մի կողմ տանելով, եւ բանականութիւնս չկարողանալով նրա ձեռքից խլել նախաձեռնութիւնը, փոխւում էր վրէժի, ամէն ինչ ճակատագրին էր թողնում անելու։*

ՄԱՐԿՈՍ.- *Խելօք է անց որ Աստծոյ գառը։ Իսկ ո՞ւր է վրէժը։Վրէժը սրի ծայրից վայր է ընկել եւ մնացել գետնին։*

ԱՅԱՌՍ (սուրը հանում է պատեանից, պահում աչքերի առաջ).- *Զքուի՛ր, անիծեա՛լ, զքուի՛ր, ասում եմ, արեան կաթիլ։ Ա՛յն սուրը գցեցի, սրա վրայ էլ բիծ կայ, արեան կաթիլ։* (Սուրը շպրտում է գետնին։ Մարկոսը, Մելիսան, Իոնասան եւ Թերսիտէսը բոլորում են սրի շուրջբոլորը եւ ուշադիր դիտում)։

ՄԱՐԿՈՍ.- *Ոչ մի բիծ չկայ։*

ՄԵԼԻՍԱ.- *Սուրը փայլում է։*

ԻՈՆԱՍԱ.- *Դու զէմքդ ես փոխում...։ Կանաչ ու դալուկ զէմքով նայում ես քո սրի վրայ։*

ԹԵՐՍԻՏԷՍ (վերցնում է սուրը գետնից ու զննում).- *Ոչ մի բիծ չկայ։ Շողշողուն սուր է։*

ԱՅԱՌՍ (նայելով իր ձեռքին).- *Այս ի՞նչ ձեռքեր են...։ Վա՜հ, այս ձեռքերը երբեք չպիտի՞ մաքրուեն։ Տեսնում եմ սրիս եւ կոթի վրայ արեան կաթիլներ, որոնք քիչ առաջ չկային այնտեղ։ Իմ զոց տեսողութեան մէջ արիւնոտ գործն է, որ աչքիս արեան ձեւ է ստանում։*

ԻՈՆԱՍԱ.- *Քեզ ի՞նչ է պատահել։*

ԱՅԱՌՍ.- *Եթէ նրանցից արիւն է հոսում, յանցանքը իմն է։ Այստեղ հանդիսաւոր կարգով սիւներն են շարուել իրար կողք կողքի, իսկ նրանց ետեւում ովքեր են պահուած, գիտէ՞ք...*

ՄԱՐԿՈՍ.- *Հասկանալի է։ Այս սիւները հէնց լոկ պարզ սիւներ են։*

ՄԵԼԻՍԱ.- *Մենք էլ տեսնում ենք։ Սակայն ինչո՞ւ ես յուզում ու յուզում։*

ԱՅԱՌՍ.- *Այդ նրանք էին։*

Դիմակները գալիս-շարւում են սիւների յետեւում։

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Ողջո՞յն։*
ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ողջո՞յն։*
ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ողջո՞յն։*
ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ողջո՞յն։*
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ողջո՞յն։*

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- *Ինչո՞ւ եմ ցնցւում։ Սե՛ւ ու խոր իղձեր... մտապատկերնե՛ր...։ Հեռո՛ւ։ Հեռո՛ւ։ Բայց եւ կարծես չեմ էլ ուզում ինձնից վանել։ Ոչ էլ կ'ուզեմ ճչալ, գոռալ՝ փախչեմ ինձնի՞ց...*

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Դու հիմա ես ամօթ զգում, Իսկ դեռ մինչեւ չկատարուած քո արարքը դու ինքդ էիր ինձ թէժացնում։*

ԱՅԱՔՍ.- *Խօսքի խրատը չհասցրի իմ զայրոյթին եւ ամօթով դեռ զգում եմ, որ նա մոլի, անզիջում էր...*

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Ես զայրոյթի Ոգին եմ։ Դիմակիս վրայ զայրոյթից այլայլուած եւ կնճռոտուած դէմքի պատկեր է։ Իմ Ոգին փայլատակում էր քո աչքերի մէջ։ Պարսաւանքով հայհոյեցի եւ մոլեգնած քեզ մղեցի թշնամանքի, թէեւ ես չեմ կատարողը։*

ԱՅԱՔՍ.- *Քէնն ու Ոխն էին։*

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Դիմակիս վրայ դիմագծերի մի արտայայտութիւն կայ, որ նշանակում է, թէ չի կատարուել դաւադիր քայլը։ Կսկծում ենք մենք, ու անզուսպ քոր ենք։ Մեր թելադրանքով պիտի կատարւի։ Քէնը ու Ոխն եմ։*

ԱՅԱՔՍ.- *Զգայարաններս զողդողում են զարհուրանք տուող մի պատմութիւնից...*

ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ես իմ արհեստի գոյնով թաթախուած՝ դիմակս կարմիր, Վրէժի Ոգին եմ։ Մինչեւ չանէի, չէի յագենայ։ Իմ Նշանաբանն է՝ վրէժի համար մինչեւ իսկ արիւն։ Եւ ես գործեցի։*

ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Վա՜հ, ով կարող է միաժամանակ թէ խոհեմ լինել եւ անզուսպ լինել, կատաղի եւ մեղմ... դիտակցել գործը եւ խելամտութեամբ վրէժին խորհուրդ տալ...։ Տեսէք, Այաքսը ինչպէս է ձեռքերը տրորում...։ Ինչպիսի՜ հառաչանք, ծանր բեռ ունի իր սրտի վրայ...*

ԱՅԱՔՍ (չորրորդին).- *Դիմակիդ վրայ նկարուած է մի մտամոլոր, խոհական արտայայտութիւն։* (Հինգերորդ դիմակին)։ *Դու ի՞նչ Ոգի ես։*

ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ես Մտքերի Ոգին եմ, իսկ նա ինձնից է սերում, նա իմ զաւակն է։*

ԱՅԱՔՍ (ձեռքերը դնում է աչքերին, ծնկում եւ հակտում է հողին).- *Մրրիկն ու հողմը եռ են գալիս, իմ մտքերը պտոյտի մէջ գալարւում են, եւ տարածւում է սարսուռը...։ Ես չեմ կարող պատուար հանել մտքերիս դէմ, չկայ մակոյկ ծովի վրայ, որ փախուստով ազատ լինէր իմ վիճակին։ Մեռածի աչքերի ցաւոտ աշխարհն է...։ Մեռածի աչքերի ցաւոտ աշխարհն է...։ Իմ աչքերի մէջ լցւում է նոյն ցաւը...։ Հովիւ աղջկայ թալկացած մատների թալկութեամբ իմ մատները սարսռում են...*

ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Եթէ արարքի հիմքը մեղքի վրայ է դրուած, մարդու հոգում այն թողնում է իր նստուածքը՝ Մտքերի Ոգին։ Երբ մարդ ուրիշի ցաւը զգայ ինչպէս իր ցաւը, Մտքերի Ոգին կը լինի կատարեալ, կը լինի խղճի խայթ։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Դիմակիս վրայ անսահման բարին՝ ես Խղճի խայթն եմ։ Դաժան հատուցման դատակնիքը մտքիդ մատեանում է արձանագրուած։ Երբ դու ուրիշի տառապանքի մէջ այդպէս զգում ես տառապանքը քո մարմնի։*

ԱՅԱՔՍ (կանգնում է).- *Եւ Խղճի խայթի խարազանները իրենց երկարուկ շօշափուկներով պտղաւորւում են իմ մտքերի մէջ, եւ իմ արարքը ճնշում է հոգիս մեծ ժայռի նման։* (Ներից ընկնում է կիսուած հողին եւ ափերով երեսը ծածկած)։ *Սոսկ այնպիսի՞ն եմ, որ դատաստանի ձեռքով յանձնուած եմ իմ Խղճի խայթին...*

digitised by A.R.A.R.@

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԻՄԱԿ (Այաքսին).- *Քար չչպրտես ագռաւների վրայ, եւ տերեւները շնորհակալութիւն կ'ասեն քեզ։*

ՋՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ (Այաքսին).- *Կարո՞ղ ես քո շրջահայեացութիւնը կշռել։ Նրա կշիռը երբեմն շատ չնչին է։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Ես վրէժը արդարացնում եմ միայն յանուն մէկ այլ խղճահարութեան։*

ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿՆԵՐ (միաբերան).- *Մեր հորիզոնը չի համընկնում Խղճի հորիզոնին։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Երբ որ կը զգաք խղճահարութիւնը, այն ժամանակ կը զգաք, թէ չի կարող լինել այլ բան, քան նրա անհրաժեշտութիւնն է։*

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Այդպէս կարծողը նոյնքան ապուշ է, որքան չկարծողը։*

ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Մեռնողների ճիչերը կեղծ են հնչում։*

ԱՅԱՔՍ (յանկարծ վեր է թռչում եւ դրանով իսկ մի անճարակ շարժում է անում։ Յետոյ մտնում է մի սեան ետեւը, դուրս գալիս՝ անցնում միւսի ետեւը).- *Ժամանակի եւ տարածութեան համար ստեղծուել է մի ընդհանուր չափ՝ Խիղճը։ Հոգու վարագոյրները մի կողմ վանէք, մարդիկ, նայէք խղճի հայելուն, որին մարդ դժուարութեամբ է նայում։ Մարդիկ, խղճացէք իրար այնպէս՝ ինչպէս ինքներդ ձեզ կը խղճայիք։*

ՄԱՐԿՈՍ.- *Այդ սիւները հէնց սովորական ու պարզ սիւներ են։ Ի՞նչ ես նրանց հետ յուզւում ու յուզւում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Դու խօսում ես այդ սիւների հետ, բայց մենք ոչինչ չենք տեսնում նրանց ետեւում։*

ԱՅԱՔՍ (նորից ձեռքերը թափահարելով անճարակ շարժում է անում).- *Իմ տագնապները կարծես կապարից լինեն կամ մի օտար ծանրութիւն կայ սրտիս վրայ։ Զգիտեմ՝ ես, արդեօ՞ք, ես եմ...*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Այդ զգայապատրանքները մեղադրանք են, բայց իրական հողի վրայ։*

ՄԵԼԻՍԱ.- *Միայն կեղծաւորները կարող են ձեւացնել, որ չեն հասկանում։ Հնարաւոր չէ՛ թաքցնել, ինչպէս մախաթը տոպրակում։*

ՄԱՐԿՈՍ.- *Խե՞ղճ Այաքս...*

ԱՅԱՔՍ.- *Ես տէրն եմ իմ մտքերի։ Ինձ ինչու՞ էք ուսումնասիրում ինչպէս հետաքրքիր անասուն։*

ԻՈՆԱՍԱ.- *Վշտացնող խօսքեր են, Այաքս, բայց ճշմարիտ։ Դու է՛լ չես ասում թող չյայտնուեն իմ ճանապարհին, թէ չէ կը տրորեմ։*

ԱՅԱՔՍ.- *Ոչ ոք ինձ ձեռ չի առել, գիմակաւորուել։* (Փոխում է տոնը եւ մատը դնում շրթունքին)։ *Իրերն, ինչպէս որ կան, ցաւ են պատճառում։ Կեանքի բոյրը, թւում է, ինքը դժբախտութիւն է։ Աթոռները ճռռում են, նրանք դատարկ չեն։ Հիմա էլ մտովի տես մեռածներին։ Եւ կը լինի Խղճի, Վրէժի, Զայրոյթի անսպասելի ու յուզիչ իրարանցում։*

ԹԵՐՍԻՏԷՍ.- *Հեռանանք, եւ թող Այաքսը երես առ երես մնայ նրանց հետ։*

ԻՈՆԱՍԱ (Այաքսին՝ նրա ականջն առնելով ափերի մէջ).- *Ես կը մնամ, Այաքս։* (Զննում է մանեակը)։ *Ադամանդի ամէն մի ակը չարագուշակ մի աստղ է, որ պատմում է իր տէրերի ոչ ուրախ ճակատագրերի մասին։*

digitised by A.R.A.R.@

Ծովափին։
Ցոյներ, ոմն իմաստուն, Այաքս, յետոյ՝ երգչախումբ։

ՈՄՆ ԻՄԱՍՏՈՒՆ.- *Ծանր, մթնող երկնքի տակ ձիթանման ալիքները թնդում են, լեռնակոհակը փուլ եկաւ խլացուցիչ դղրդիւնով։ Ծովի յամառ անտարբերութեամբ վճիտ ջրերի երերուն հայելում ամբողջ աշխարհը դարձել է մի մանրիկ գնդիկ։ Իսկ հիմա ես ուզում եմ պատմել. իմ ձեռքին այն ապարատն է, որ պէտք կը գայ, յոյներ, ձեզ հակառակորդի զօրաքանակի դէմ, եւ կ'արժանանայ ձեր հիացմունքին։ Այդպէս է այն օրից, երբ որ մարդիկ խրախուսեցին սպանելու գիտութիւնը, եւ հասկացան, որ ամէն այլ բան՝ մեռածների համար կեղծաւոր պաշտպանութիւն է։*

Ամբոխը գոմռում է։

ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ.- *Պֆֆֆ՛...*
ԵՐԿՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Ինչպիսի՞ն է քո ապարատը, եւ որտե՞ղ է այն։*
ԻՄԱՍՏՈՒՆ.- *Էվրիկա՛։ Առայժմ միայն այստեղ։* (Ցոյց է տալիս ճակատն ու սիրտը)։
ԵՐՐՈՐԴ ՑՈՑՆ (մատնացոյց է անում իմաստունին).- *Բոլորը ապշահար նայում են նրան։ Բայց ինչու՞...*
ԻՄԱՍՏՈՒՆ.- *Դաղափարն այնքան պարզ է, որ ապարատը կարելի է ստեղծել կէս ժամում։* (Հագուստի ծալուածքից հանում է մի խոշոր, շատ սուր ու ծռմռուած պղնձէ մեխ՝ մօտ Քսան սանտիմետր երկարութեամբ)։ *Հարկաւոր է վերցնել մայրու լայն տախտակներ եւ ցիրուցան ծածկել դրանք այսպիսի մեխերով։ Պաշտպանուողների առաջ ցաքուցիր զցած հարիւրաւոր այդպիսի տախտակները՝ կը կանգնեցնի հեծելազօրի ուղածդ ամենակատաղի գրոհը։ Իսկ չէ՞ որ կարելի է պատրաստել ոչ թէ մէկ, այլ բազում հարիւրաւորներ։ Դրանք թեթեւ են տեղափոխութեան համար, եւ հեշտ են օգտագործուում։ Պատկերացնո՞ւմ էք որքան գործուն է այդպիսի պաշտպանութիւնը։ Մեխը կոխ տուող ձին ոտքը կը պոկի միայն սմբակը թողնելով, իսկ երկու ոտքը դնողը կ'ընկնի եւ ցած կը նետի հեծուորին։ Հեծուորը, եթէ տախտակները փռած լինեն բաւականաչափ լայնօրէն, նոյնպէս կ'ընկնի մեխերի վրայ, եւ վերջ, էլ երբեք չի բարձրանայ ծռմռուած մեխերից, կը մեռնի սոսկալի մահով։*
ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ (իմաստունին).- *Վրիժառութեան եւ մահուան ռահվիրա՛։*
ԵՐՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Դու ինչպէ՞ս յանդգնեցիր, մեքենագէ՛տ։*
ՉՈՐՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Կարեւորը քո բոցավառուող երեւակայութիւնն է։*
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Իսկապէս, շատ հասարակ եւ շատ գործուն պաշտպանութիւն է։*
ՎԵՑԵՐՈՐԴ ՑՈՑՆ.- *Դու մենա՞կ ես հնարել այդպիսի բանը, ուրիշ ոչ ոք չգիտի՞։*
ԻՄԱՍՏՈՒՆ.- *Ո՛չ։ Ո՛չ։ Մտածեցի, թէ կը գնահատուի իմ հնարածի ամբողջ կարեւորութիւնը։ Եւ պարզեւ եմ ակնկալում։*
ԱՌԱՋԻՆ ՑՈՑՆ.- *Այո՛... պարզեւ տալ...*
ԻՄԱՍՏՈՒՆ.- *Դուք բոլորդ խրախուսական նայում էք ինձ, գոհութեան այն տարօրինակ ներքին զգացումով, որից զերծ չէ ոչ մի մարդ։ Թէեւ ես գեռ ոչ ոքի չեմ մոլթել...*

digitised by A.R.A.R.@

Գալիս է Այաքը։

ԱՑԱՔՍ.- *Տէ՛ր Աստուած...*

ԻՄԱՍՏՈՒՆ.- *Եւ այսպէս, հարկաւոր է վերցնել մայրու լայն տախտակներ եւ ցիրուցան ծածկել դրանք այսպիսի մեխերով...*

ԱՑԱՔՍ.- *Տէ՛ր Աստուած...*

ԻՄԱՍՏՈՒՆ (Այաքսին).- *Դատարկ բան է։ Եթէ մի քիչ ձեր գլուխը պրտրտուեց պատմածից, դատարկ բան է։ Ամենեւին ուշաթափութիւն չի։ Թէեւ ձեր սեւեռուն հայեացքը իւրաքանչիւր ակնթարթ աւելի է փայլում եւ թափանցում իմ գիտակցութեան ու հոգու մէջ։*

ԱՑԱՔՍ (իմաստունին).- *Ո՛չ, մեր մէջ ինչ-որ տարօրինակ բան յայտնուեց։ Այն կարող էր ծագել նոյնիսկ խօսքից, շարժուձեւից, ինչ-որ տարօրինակ միտք, ակնարկ, եւ ես, եւ դուք դա հասկացանք...*

ԻՄԱՍՏՈՒՆ.- *Մեխ կոխ տուող ձին ոտքը կը պոկի, միայն սմբակը թողնելով...*

Ցանկարծ հեռաւոր մի հնչիւն, ասես երկնքից՝ տրտմագին, մեռնող մի հառաչ է լսում։

ԱՑԱՔՍ (ձեռքերով ծածկում է դէմքը եւ կախում գլուխը)։

ԻՄԱՍՏՈՒՆ.- *Ի՞նչ պատահեց Ձեզ...։ Հեծուորը, եթէ տախտակները փրռած լինեն բաւականաչափ լայնօրէն, նոյնպէս կ'ընկնի մեխերի վրայ եւ կը մեռնի սոսկալի մահով։*

ԱՑԱՔՍ (շուրթերը անզօր ծռմռում են, ջանալով ինչ-որ բան ասել)։

Գալիս է Առաջին Դիմակը եւ կանգնում Այաքսի կողքին։

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ (կիսաձայն՝ Այաքսին).- *Ես Խղճի խայթն եմ։*

Գալիս է Երկրորդ Դիմակը եւ կանգնում Այաքսի կողքին։

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ (կիսաձայն՝ Այաքսին).- *Ես Մտքերի Ոգին եմ։ Եթէ տանջուես, բեռդ աւելի թեթեւ կը լինի։*

ԱՑԱՔՍ (անզօր եւ թոյլ ժպիտով).- *Ես ձեզ ճանաչեցի։* (Իմաստունին յանկարծ հայեացքը յառելով)։ *Մեխերի վրայ, սոսկալի մահո՞վ... սոսկալի մահո՞վ... սմբա՞կը կը պոկուի ձիու...*

ԻՄԱՍՏՈՒՆ.- *Դիակները տախտակների վրայ...*

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Ես բոլոր նիւթերի Ոգին եմ, եւ բոլոր հոգիների նիւթը՝ Խղճի խայթը։*

ԻՄԱՍՏՈՒՆ.- *Բոլորովին մօտիկ երկու շներ եթէ արիւնլուայ են անում միմիանց, կծուում, խուլ ու կատաղի հաչոցով նեռուում իրար վրայ, ետ ցատկոտում, նորից գլորուում եւ միահիւսուելով դառնում գոմռոց ու արիւնոտ կծիկ, ինչու՞ կարեկցանքի դիմակներ հագնել։ Կեանքի բոլոր աղմուկները քրքիջով դուրս կը սուրան գլխիդ միջից...*

ԱՑԱՔՍ.- *Զուր մի չարչարիր լեզուդ։ Ես արդարացում չեմ գտնում ասածիդ համար։ Լոյս ու ստուերի արանքում անցումային շերտն է, եւ դաժանութիւնը ծածկուած է քնքշանքի երանգներով։ Քո հիմնաւորումը կը վերածուի բացասման, եւ իսկական տառապանքի կը վերածուի քեզ համար։*

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Մի ոտքով յենուիր մեռած աշխարհի վրայ, միւսով՝ նորի..*

ԱՅԱՔՍ.- *Ես ընդունել եմ պայմանը, եւ գերադասում եմ անընդհատ ջղաձգուել...*

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Երբ որ կը գտնես վերջին արդարութիւնը։*

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Անխուսափելի տուրքը, որ պիտի մուծես ինձ։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Ո՞մ հետ է խօսում։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Ուրիշ ոչ ոք չկայ։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ.- *Նա օդի հետ է խօսում։*

ԱՅԱՔՍ.- *Փորձանքների խաչմերուկում, երբ ամէն մի մարդ եւս մի խոչընդոտ է դառնում քո ցանկութիւնների իրականացման ճանապարհին, եւ դու անցնում ես մեղաւորութեան պատնէշը... եւ չես կարող յիշողութիւնից ջնջել սկիզբը...*

ԻՄԱՅՏՈՒՆ.- *Այնտեղ, ուր ծագում է արեւը, մարդը խորասուզուած զարմանալի խաղաղ լուսաբացի հայեցութեան մէջ, ներթափանցելով արդէնուածի մէջ, անողոքաբար մերկացնելով գաղտնի մտքերը եւ տարակուսելով, նման բաներ է յօրինում։* (Շուտումոտ է տալիս մատների մէջ պահուած մեխը։ Գնում է)։

ԵՐՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Դու աւելի դաժան ես, դանդաղ սպանող, որ հնարաւորութիւն ես տալիս նրանց՝ կեանքի վերջին կաթիլը խմելու։*

ՉՈՐՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Կան բաներ, որոնք չպիտի խախտի ո՛չ մահկանացուն, ոչ էլ նոյնիսկ աստուածները։*

ԱՌԱՋԻՆ ՑՈՅՆ (Այամսին).- *Ոճրագործի՛ կոյտ։*

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՅՆ.- *Մարդու ցեղի կշտամբանք։*

Ցոյները գնում են։

ԱՅԱՔՍ (ցնցում է).- *Հնարաւոր էր չսպանելը, եթէ իմանայի, թէ ինչով կարելի էր փոխարինել սպանելը։*

ԵՐՐՈՐԴ ՑՈՅՆ (հեռուից).- *Մարդը հանելուկ է։*

ԱՅԱՔՍ.- *Ես վերջացրել եմ գործս, եւ եկել եմ ձեզ մօտ։*

ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Մարդը չի կարող հանդարտեցնել անխուսափելի կրքերը։ Եւ քանի որ բոլորն ունեն քինոտութիւններ, բոլորը միասնական են։ Եթէ մի քիչ խառնեմ մարդու հոգու տիղմը, Քէնն ու Ռախը երեխայ էլ կարող են սպանել։ Մեր թեման է՝ մահ։ Մեղքի զգացումը վտանգաւոր է։*

ԱՅԱՔՍ (ճախաքազուկով ծածկում է աչքերը).- *Օ՜հ...օ՜հ...։ Այդ մասին ես կը լսեմ։*

ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ (հեռուից).- *Սկզբում լսում է Վրէժին կլանուած, յետոյ հաւատում է։ Ո՞վ ինձ չի լսում, արձան է խաղում հետս...*

ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ.- *Երբ ես մահանամ, եւ մարդն այդ խոստովանի, ուրեմն, մարդկութեան երակն էլ է կտրուած։ Մարդկութիւնը խղճահարութիւն է պահանջում։* (Մօտենալով Այամսին այնպիսի շարժում է անում, կարծես պիտի երդուի)։ *Եթէ խառնուի երկինքը ծովին, եւ մի դուռ բանայ, որ իմ ճամբան է, դու ինձ հետ կը գաս։ Թէ քո՝ ճամբան է, ինձ հետ կը գնաս։ Քո Խղճի խայթն եմ։*

Գալիս է երգչախումբը, որ կազմուած է ծերուկներից։

digitised by A.R.A.R.@

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Հիմա կը գայ նա, այն հովիւ տղան,
Որ մազապուրծն է Այաքսի սրից։
Իսկ դու կը տեսնէք Այաքսի վարքը։

Գալիս է հովիւ տղան։

ԱՅԱՔՍ (հովիւին).- *Կնիք են դրել քո դէմքի վրայ ցուրտը եւ քաղցը։*
ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ (առանձին՝ Այաքսին).- *Մտածիր, երբ դու քաղցած ես եղել, նա էլ է քաղցած։*
ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ (առանձին՝ Այաքսին).- *Դու խղճա՛ նրան։*
ԱՅԱՔՍ.- *Ահա իմ հացը, կիսում եմ քեզ հետ։ Ոչ, ամբողջութեամբ քեզ եմ տալիս։*

Հացը մեկնում է հովիւ տղային։
Վերցնում է հացը եւ ագահութեամբ ուտում։

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ (Այաքսին).- *Նա դողդողում է ցրտից իր բարակ ցնցոտիներում։ Մտածիր, ցուրտը երբ քեզ տանջել է։*
ԱՌԱՋԻՆ ԴԻՄԱԿ (Այաքսին).- *Դու խղճա՛, տաքացրու նրան։*

Այաքսը հագի բուրքը հագցնում է տղային։
Նստում են քարին։ Այաքսը ձեռքով գրկում է, սեղմում հովուին, ասես ուզենալով ջերմացնել։

ԱՅԱՔՍ.- *Եւ ձեռքիս հացը եւ ջերմութիւնս...*
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Եթէ մէկը բաղցած է, մրսած,
Եթէ տառապում է,
կամ եթէ նրա վէրքից արիւն է ծորում,
Մտքերի Ոգին խլրտում է մարդու մէջ,
եւ ուրիշի ցաւը յանկարծ իրենն է դառնում։
Եւ ուրիշի տառապանքի մէջ զգում է տառապանքը իր մարմնի...
Ուրիշի ցաւը մարդն զգում է, ինչպէս իր ցաւը,
Մտքերի Ոգուց ծնում է խիղճը։
Խղճի խայթը մարդու մտքի արգասիքն է։

Մի կատու գետնից վերցնում է հացի փշուրը, եւ սեղմում Այաքսի ոտքին։

ԱՅԱՔՍ.- *Կատուն էլ արտասուել գիտէ...*
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Զայրոյթը, Վրէժը, Քէնը ու Ոխը թափւում էին՝ ինչպէս յորդառատ անձրեւ։
-Նրանք ուզում էին խժռելու մի բան։
-Եւ նրանք ստացա՛ն։
-Կը լինի՞, որ միայն գութը լինի ուղղութիւն տուող մարդու արարքներին։
-Եւ խի՛ղճը դառնայ մարդկանց թանձր կրքերի՝ Զայրոյթի, Վրէժի, Քէնի ու Ոխի թունոտ գլուխների կառավար...

Երգչախմբին մասնակցող ծերուկները սկսում են փոխադարձ հարց ու փորձ եւ խօսակցութիւն։

digitised by A.R.A.R.@

Ծովափին, մենատոր արմատնի։
Այաքսը մենակ։

ԱՑԱՔՍ.- *Մեռելահարցուկի օրը պապս ասում էր, որ Մտքերի Ոգին է իմ մէջ խօսողը։ Նրա մօտ էլ է եղել այդպէս։ Պապս իր ճակատագիրը կապում էր իմի հետ։ Ես առընչւում եմ իմ հեռաւոր նախնիների զգացումներին։ Մտքերի Ոգին այդ կապը տանում է սերնդից սերունդ։ Թող պապս գայ մեռելահարցուկի։ Մեռած մարդկանց հոգիները աւելի իմաստուն խորհրդատու կարող են լինել իրենց անչափելի հեռուից մեզ՝ ապրողներիս համար։ Ինչքա՜ն իմաստուն, որից կենդանի ապրողներս գուցէեւ զուրկ ենք այսօր։ Կեանքը խորախորհուրդ աւելի հասկանալի է ծերուկին, քան թէ մանուկին։ Իսկ մեռած մարդու հոգին կեանքի իմաստուն քննիչը կը լինի։ Իմ խորհրդատու պապիս հոգի, ուզում եմ իմ ճակատագրի մասին հարցում անել քեզ...*

Ցանկարծ շուրջբոլորը մշուշապատւում է։ Ցետոյ պարզուող բոլորների մէջ հետզհետէ երեւում է սպիտակ հագած, ձերմակ մազ ու մօրուքով Այաքսի պապի կերպարանքը։

ԱՑԱՔՍ.- *Ես քեզ կանչել եմ։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ես գիտէի, որ դու իմ կարիքը կը զգաս։ Դու ազատ ուզում ես խօսել մէկի հետ, եւ իմ հոգին է քո խորհրդատուն։ Ես պաղ հայեացքով եմ նայում իմ անցած կեանքին։ Դա վերյուշ չէ, այնպիսին՝ ինչպէս ունեն կենդանի մարդիկ։ Դա ափսոսանք չէ, ոչ էլ գոհութիւն ապրածի համար։ Դա յաւիտենականութեան տխուր հայեացքն է յառուած իմ յուշերին։ Բայց ես ասելու բան ունեմ քեզ։ Ես ուզում եմ, որ քո լսելիքը պատրաստ լինի իմ խօսքերի համար։ Քո պապն եմ, Այաքս, որ հիմա ուրուական է։*

ԱՑԱՔՍ (ուզում է փարուել պապին).- *Կարօտած մարդու փափաքը, օ՜, ինչքան մեծ է։ Իր մերձաւորին կորցրածի վիշտը ինչ ուժգնութեամբ կարող է բոցավառուել։ Ես տեսայ քեզ, ես ուզում եմ շօշափել քեզ...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Հեռո՛ւ ինձանից, ես մշուշ եմ, թափանցիկ օդ, գոլորշու քուլայ, քամի, որ փախչում է ամէն ինչից։ Խօսիր ինձ հետ, ես քեզ պատասխանելու համար եմ եկել։ Մենք գալիս ենք ապրողների կանչով, մեր պաղ հայեացքը նայում է նրանց, բայց հեռուից։ Փորձ չանես հպուել ինձ, ես մշուշ եմ, քամի։*

ԱՑԱՔՍ.- *Պա՜պս... պա՜պս... կարօտս մեծ է...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Հեռո՛ւ, Այաքս... հեռո՛ւ...։ Լսիր իմ խօսքը եւ բաւարարուիր այդքանով։ Ինչու՞ ես խոնարհել այդ հպարտ գլուխդ։ Քեզ տանջում է Մտքերի Ոգի՞ն։*

ԱՑԱՔՍ.- *Դու գիտես, պապ, գիտես։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Եթէ աղէտի՛ փոխուած ընթացքը լաւ ու բարի մի ելք գտնի, դա սփոփանք կը տայ քեզ եւ հանգստութիւն։*

ԱՑԱՔՍ.- *Շատ իմանալը չի պակասեցնում անհասկանալին, այլ միայն բացում է վիշը, ոչ թէ սփոփում։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Բայց կայ ելքը, կայ ելքը։*

ԱՑԱՔՍ.- *Ես չգիտեմ, չգիտեմ ելքը։*

digitised by A.R.A.R.@

ՈՒՐՈՒԿԱՆ.- Առեղծուածի համար բանալի չկայ: Բայց մի կամք կայ: Զի դանդաղի, նա կը գայ, եւ դու միայն պարտքդ պիտի կատարես նրա հանդէպ:

ԱՅԱՔՍ.- Կէսը նոյնիսկ իմ տանջանքի ես չեմ կրել տակաւին: Ով բախտաւոր է կարծում իրեն, յաճախ է իր բախտը լացում:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Տխուր, ցաւալի բաներ մի՛ ասա. ես չեմ մոռացել ցաւերը անցած կեանքի պատճառած: Մեռածների հոգիներն էլ են քրքրում իրենց ապրած կեանքի յուշերը, եւ անթեղուած մոխրի տակից նորից ու նորից ուզում են զղջման ու ափսոսանքի սերմերը հանել: Թէեւ լաւ գիտեն, որ անվերադարձ կորցրածի մասին մտքերը որքան ի զուր են, ունայն: Եւ սիրտը այրող տառապանքի գառնութեան ամպը կը կուտակուի թանձրախիտ:

ԱՅԱՔՍ.- Սրտաճմլիկ յոյզերի մշուշը փաթաթուել է ինձ: Ես քեզ կանչեցի, որ իմաստանամ, թէեւ լաւ գիտեմ, որ սփոփանքի դուռը փակուած է:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Խաւարի միջով դանդաղ հեռացաւ Խիղճը վտարուած...: Վտարուած Խիղճը որտե՞ղ է հիմա թափառում անտուն: Լքուած Խիղճը իր մուժ անկիւնից ո՞նց է հառաչում...: Ե՞րբ կը տարանջատուեն մարդու մէջ եղած չարն ու ԲԱՐԻՆ...

ԱՅԱՔՍ.- Իմ մէջ բնակուող այդ երկու էակներին...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Կա՞յ հոգու դէմ գործուած յանցագործութիւն՝ աւելի աններելի մեղք, քան մարմնի դէմ գործուած ոճիրը:

ԱՅԱՔՍ.- Ե՞րբ ենք դադարում ամօթ եւ մեղաւորութիւն զգալուց:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Հոգուդ մէջ զբաղեցրու դատաւորի տեղը:

ԱՅԱՔՍ.- Կարողանալ տառապել ուրիշի ցաւից...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դժբախտը անգութ է: Բայց եթէ մի կամք կայ, սեփական թշուառութիւնը չի կարող սիրտը քարացնել, այլ կը սովեցնի ուրիշի կարիքին կարեկից լինել: Օրէնքի ուժով մարդիկ բարի չեն դառնայ, ոչ էլ բարի գործեր կ'անեն կախարդական լապտերի միջոցով: Բայց բոլոր մարդկանց մէջ մի փնտռիր միայն լաւը, ոչ էլ միայն վատը...

ԱՅԱՔՍ.- Տեսել եմ բազում դիակներ, Բայց չէի տեսել մեն-միակ մեռեալի, ծունկ չէի չոքել առաջը, որ նայէի աչքերին: Մեռեալը սոսկալի լուռ է, եթէ նրա հետ առանձին մնաս...: Երբ ուզենաս նորից ականջ գնել նրան...: Նա սոսկալի լուռ է...: Ես կարծես ծնրադրել էի հայելու առջեւ...: Եւ ինձ էի գիտում: Դա ինքնասպանութիւն էր: Իմ անձի սպանութիւնն էր: Լեռների գիծը կարծես երկաթալար լինէր, որ խեղդում էր ինձ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ինչի գնով է գտնուել այդ բառը՝ Խիղճ:

ԱՅԱՔՍ.- Ես չէի կռւում ինչ-որ անգրգռուելի բանի դէմ, եւ նա չէր յաղթում ինձ, ես յօժար յանձնուել էի նրա կամքին: Արդարացում չէի փնտռում կատարուածի համար, եւ ես նրա ճանապարհն էի հարթում:

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այո, չկայ կրակ առանց ծխի: (Դիմքոն շրջում է): Եւ ուրիշին տանջելը սխալուելու սարսափելի ձեւն է: Ժամանակը բերե՞լ է քեզ որեւէ լաւ բան, եւ որեւէ վատ բան տարե՞լ է արդեօք:

ԱՅԱՔՍ.- Այժմ սպասում եմ քո վճռին:

ՈՒՐՈՒԱԿԱՆ (ձեռքը բարձրացնում է).- Թէեւ զգուանքով վերաբերեցիր մարդկային սրտի տուայտանքներին, եւ քո ցասումն ու մոլեգնութիւնը փչեցին վայրագ անապատների շնչով, բայց հիմա խղճով կը սանձահարես ամէն ինչ: Կը լինես մեղմ:

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ (արտասւում է).- *Մեղմ։*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Եւ կը տանջուես։*
ԱՅԱՔՍ.- *Կը տանջուեմ։*

Մի պահ նայում են միմիանց։

ՈՒՐՈՒԱԿԱՆ (թափ է տալիս գլուխը).- *Գաղտնի զգացմունքների խորհրդաւոր խօսքերից անտեսանելի մի թել ձգւում է մեզանից մէկից՝ դէպի միւսը։*
ԱՅԱՔՍ.- *Մի արիւնաթաթախ երեխայ...*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ուշադիր պէտք է քննարկել ե՛ւ այս, ե՛ւ այն...*
ԱՅԱՔՍ (հանում է մեխը).- *Այս մեխով կարելի է սպանել։ Մի գիտուն ապարատ է հնարել։*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Գիտեմ։*
ԱՅԱՔՍ.- *Ես էլ այդպիսին չե՞մ...*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Մարդու մէջ ինչքան առեղծուածային բան եմ տեսնում։*
ԱՅԱՔՍ.- *Ես ուզում եմ մի բան ինձ նորից ապացուցել։ Մեր տիրակալը Զայրոյթի մէջ չէ՛։*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Թէ սուրը անտառում ինչ էին ասում տերեւները մեզ...*
ԱՅԱՔՍ.- *Օ՜, աւա՜ղ, աւա՜ղ, օ՜, գիշերային անսահմանութիւն... եւ փոքրիկ մի կայծ խաւարի գրկում... օ՜, դժբախտի աչքեր... աչքեր, օ՜, աչքեր...։ Ինչքան հեշտ է նայել մարդուն, արեւին, բայց ոչ աչքերին։* (Շշնջալով ուրուականի ականջին)։ *Ինչպէս կացինը փայտի մէջ, խրուել են սրտիս մէջ։*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Մնում է, որ մինչ ի մահ քարշ տաս քո կատարած ոճրագործութիւնը։ Նրա օրէնքն է դա։*
ԱՅԱՔՍ.- *Գթութի՛ւն...*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ա՜հ, այո՛, գթութի՛ւն...*
ԱՅԱՔՍ.-*Նրան մեղրի պէս կուլ են տալիս։ Մարդիկ նրան չեն նայում խէթ ու շեղակի։ Ա՜հ, այդ ի՞նչ էր, ի՞նչ էր, որ քիչ առաջ մահացաւ։* (Մի քանի քայլ ետ-ետ է գնում)։ *Ախր, այդ ի՞նչ էր...։ Այդ քողը ետ տանել չեմ կարող։ Նրանց պատկերներն են կախուած, որ լոյսը վարագուրում են իմ աչքերից։ Ինչպէ՞ս հրաժեշտ տամ այս արնոտ ձեռքերին...։ Ես խոնարհւում եմ նրանց աչքերի վրայ, եւ այդ հայելում տեսնում եմ իմ պատկերը։ Ե՞րբ իմ աչքերը կը դադարեն տեսնել այդ աչքերը...։ Օ՜, մոլեգնութեան տիրածիլ ծաղիկ, իմ սրտում բացուած կարմիր եւ ցաւալի, որ հիմա դարձել ես ուրիշ զգացում. եւ ճիշտ է, որ ես ունեմ Ղղճի խայթ...։* (Ձեռքերն է առնում մի քար)։ *Բարութիւն կայ իմ մէջ, եւ մամռոտ քարն է ինձ բարութեան դաս տալիս։ Ի՞նչ եմ մտադիր անել...*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Նետիր արնոտ ձեռնոցներդ։ Քո ամբողջ կեանքը կը նուիրաբերես քաւութեանը։ Այդ արարքը դու դատապարտել ես, բայց չես կարող քեզանից պոկել։*
ԱՅԱՔՍ (ձեռքից բաց թողնելով քարը).- *Միայն այդքա՞նը...*
ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Անպակաս արա քո աղօթքները եւ սրբութեամբ կատարիր քո ընդունած պատգամները։ Բայց մի՛ հաւատայ, թէ տեսիլները քո աչքերը կը թողնեն։ Դու աւելի շատ պէտք է հաւատաս նրանց կողմից քեզ տրուած փրկութեանը, քան այն տառապանքներին, որ նրանք պատճառում են քեզ։*
ԱՅԱՔՍ.- *Միայն այդքա՞նը...*

digitised by A.R.A.R.@

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ինչ ներելի չէ, չի ներուի երբե՛ք։

ԱՅԱՔՍ.- Ես քեզ պարտական եմ, պարտական եմ, որ նեցուկ ես ինձ, ինչքան փչոտ լինես։ Խօսքը ամենեւին դեռ այնքանը չի կարող կը-րել, ինչ որ ունի հոգին։ Խօսքը չի կարող արտաբերել այն, ինչ կը-րում է հոգին։ Խօսքը հոգու ընչին թարգմանը կարող է լինել։ Մ՚ւր են սեւեռած քո աչքերը, ո՞ւմ առաջ եմ ուզում ծունր իջնել...։ Դու ինձ նման ես...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Թպրտում է սիրտդ։ Մեռելները սիրտ չունեն, ոչ, հոգի՛ն է թպրտում նրանց կեանքում ապրած-կատարուածի համար։ Մարդու կեանքը չի ընդհատուում գերեզմանում։

ԱՅԱՔՍ.- Այդ հոգին իմ մէջ է։ Իմ մէջ այն հոգին է, որի թարգմանը դու ես։ Բայց ասա՛, պապ, ո՞րն է իմ ճակատագիրը։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ճակատագիրը ինքը կարող է գալ։ Ճակատագիրը գաղտնի վրայ է հասնում։ Ճակատագիրը յանկարծակին է, եւ նրա կամքը անյայտ է մարդուն։ Բայց քո ճակատագիրը ինքդ ես ընտրելու։

ԱՅԱՔՍ.- Ինչպէ՞ս։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Ճակատագրի ընտրութիւնն է քեզ բաժին ընկել, թէեւ ոչ ոքի ճակատագիր չեն բաժնում, եւ ոչ ոք չի ընտրում։ Բայց քեզ ընտրութիւնն է բաժին ընկել։

ԱՅԱՔՍ.- Ինչ...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այ, դու հարցնում ես, բայց պատասխանը չեմ կարող մէ-կէն տալ։ Սակայն պատասխանի մէջ թեթեւութիւն կայ, թեթեւու-թիւն, Այաքս, որ դու կամենում ես։

ԱՅԱՔՍ.- Մէկէն ասա՛, պապ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դու գիտես, Այաքս, գիտես՝ սեփական կամքով ընտրած մահ։

ԱՅԱՔՍ.- Մա՛հ. ճակատագրիս ընտրութիւնը այդ է։ Իմ մահուան հեղի-նակը ես եմ լինելու։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այո, Այաքս։

ԱՅԱՔՍ.- Աղճի խայթն այդ է ուզում։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Այո, Այաքս։

ԱՅԱՔՍ (շրջում է).- Ճիշտ է, պապ։ Մենք կը բաժանուենք խաղաղու-թեամբ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դու ընտրել էիր քո ճանապարհը։ Թէեւ ես եկայ մեռելա-հարցուկի, բայց դու դրանից առաջ գիտէիր, ինչ ինձնից լսեցիր։ Դու հարցրիր, որ ճչտես, թէեւ գիտէիր դրանից առաջ։

ԱՅԱՔՍ.- Նա իմ ետեւում էր, հիմա նա իմ առաջ է կանգնած, ես նրանից չեմ խորշում, բայց նա վանում է ինձ։ Ես նրանից չեմ փախչում, նա աւելի ու աւելի մօտենում է ինձ։ Այստեղ իմ Աղճի խայթն է...։ (Մի Բայլ ետ է տանում)։ Ա՜-ա՜հ...

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դու ընկար փոսը։ Դա իմ փոսն էր, դու ընկար իմ փոսը։ Բայց փոսը բոլորիս համար փոս է։ Մէկ է՝ մեր բաժին փոսն է, որ փորուած է գետնի մէջ։ Փոս է, պահուած մեր վերջին օրուայ հա-մար։ Բոլորի համար նոյնն է։ Ձեռքդ ինձ տուր, Այաքս, դուրս քա-շեմ քեզ փոսից։

ԱՅԱՔՍ (Բմծիծաղով).- Հա՛... պա՛պ... ինչու՞ ես ուզում դուրս քաշել ինձ փոսից։ Փոսը չէ՞ որ բոլորիս համար է, մէկ է, չուզենաս էլ՝ բաժին է, մէկ է, փոսն է սպասում մեզ։ Ինչու՞ ես ուզում դուրս քաշել ինձ փոսից։

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- Դու ուզու՞մ ես մնալ։

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- *Չէ՞ որ, վազ թէ ուշ...*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Այո՛ Բայց մարդիկ չեն շտապում յայտնուել փոսում։*

ԱՅԱՔՍ (Բմծիծաղով).- *Հա՛... պապ։ Ուզում եմ մնալ։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Մի՞թէ չես խորշում։ Քեզ խորթ է, ինչ կենդանի մարդուն յատո՞կ է։*

ԱՅԱՔՍ.- *Ամէն կենդանի մարդ շատ անգամ ինձ նման է խորհում։ Եւ մարդու փիլիսոփայութեամբ, երբեմն, կեանքի տաղտուկն ու հետաքրքրութիւնը այս փոսից աւելի չարժեն։ Ինչ որ ապրել ենք, կեանքի բոլոր ելեւէջները՝ թէ՛ տխրութեան ամպ եւ թէ հոգեպարար ուրախութիւն, ինչ որ տեսել ենք, տենչացել՝ ա՛յս վերջակէտում (Ցշում է փոսը) ի չիք, կորո՞ւմ են ընդմիշտ ու անգարձ։ Ուրեմն, ինչու ելնեմ իմ փոսից, եթէ նորից վերադառնալու եմ եւ մնամ այս փոսում։ Տեղաւորուել եմ արդէն եւ յարմար պառկել։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Ճակատագրի՛ անյաղթահարելիութեամբ։ Ճակատագիրը խաղում է բոլորի հետ, եւ գաղտնի է պահում իր մտքերը ապագայի մասին։ Չի կատարւում, ինչ կարծում ենք կատարուելիք։ Կատարւում է, ինչ համարում ենք անհնար։*

ԱՅԱՔՍ.- *Ա՜հ, շուտափոյթ թող կատարուի, ինչ ծրագրել է ճակատագիրը։ Ա՜հ, թող գայ, շու՛տ գայ։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Թէ որոշել է շուտափոյթ չգալ, նա քեզ չի լսի։ Եթէ ուզում է կենդանի տանջել, ուրեմն, սպասիր։*

ԱՅԱՔՍ.- *Պայծառ արցունք եմ ուզում թափել իմ աչքից։*

ՈՒՐՈՒԱԿԱՆ.- *Այնտեղ, ուր ժայռից բխում է մի ջուր պայծառ եւ վարար, այդ ջրերի մէջ շողշող աղբիւրի, երբ կը տեսնես քեզ, կը գտնես վախճան...*

Մէգի Բողը պարուրում է ծերունուն, ամբողջովին մէջն առնելով ծածկում է շուրջն ու փոսը։ Ցետոյ երեւում է Այաքսը՝ Բարերով ծածկուած ու մեզնից պարզուած փոսի տեղում։

ԱՅԱՔՍ.- *Քաղցրանուագ երգով սիրտս չի բուժուի, մեղքս յայտնեցի, որ անէծքով շոյուեմ։ Իսկ կոյր յոյսերը դեռ հեծեծում են։ Թէ նախաբանը այդ չէր գուշակում, բայց սուրբ արցունքն է իմ աչքերի մէջ։*

Գալիս է դիմակը։

ԱՅԱՔՍ (ոտքի է ելնում).- *Մի զգացում տարտամ, ժպիտի մի տապ, սրտի բաբախիւն զգացի, աւա՜ղ, լսեցի, այո՛ Դիմակի տակից ես քեզ տեսնում եմ։ Գիտեմ քո Ոգին։*

ԴԻՄԱԿ.- *Խղճի Ոգին եմ։ Դու ինձ ստացար։ Քեզ մօտ գաղափարի ճգնաժամ է, ես քեզ կը փրկեմ։ Դու արգարանա՞լ ես ուզում։*

ԱՅԱՔՍ.-*Այդ հայեացքից տերեւներն անգամ այն ծառի վրայ լուռ սրրթսրրթացին։ Դու գալկութեան տխուր մունետի՜կ, երբ մեր հոգու մէջ ինչպէս թալկութեամբ եւ ուրախութեամբ, նաեւ թեթեւ մի ապաշխարանքով յանկարծ զգում ենք, որ յայտնուել ես։ Ափի մօտ կանգնած, երբ որ քո ձեռքի կանչը տեսնում ենք, մենք իսկո՞յն, իսկո՞յն արձագանգում ենք։ Ահա, եկել ես...*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Դու վստա՞հ ես, որ համաձայն ես ինձ հետ։* (Նայում է ուղիղ)։ *Ինչ պէտք է անենք, ի՞նչ պէտք է անենք...։ Դու կը սպանես քեզ...*

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- *Երեկո՞յ է հիմա։ Առաւօտ չի լինի ինձ համար։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ես կարծում, որ ...։ Ո՛չ, մարդ արարածը...*
ԱՅԱՔՍ.- *Իսկ նրա աչքե՞րը։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ի՞նչ է եղել նրանց։*
ԱՅԱՔՍ.- *Վերջին չնչում նայում ինձ։ Ասես դուրս են ուզում թռչել իրենց որորտքից։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Մի հարց տուր նրան։ Ե՛տ։* (Այաքսը մի քայլ է անում ետ)։ *Աւելի՛։* (Եւս մի քայլ է անում։ Խիղճը քաշում է նրա թեւից)։ *Գը-նանք։*
ԱՅԱՔՍ (ասես երկմտելով երկու մտայնութեան միջեւ).- *Ես կապուած չե՞մ։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Կապուա՞ծ։*
ԱՅԱՔՍ.- *Կապուած։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Էականը չի փոխւում։*
ԱՅԱՔՍ (բռնազբօսիկ ծիծաղ։ Թեթեւ ժպիտ).- *Դու ինձ ստիպեցիր ծիծա-ղել։ Դա ինձ համար արգելուած է։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Մենք կապուած չե՞նք։ Մենք...*
ԱՅԱՔՍ.- *Ես կորցրել եմ իմ իրաւունքնե՞րը։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Դու դրանք ցրիւ ես տուել։*

Լռութիւն։ Այաքսը անշարժ է, թեւերը կախած, գլխահակ։ Ծնկում է գետին։

ԱՅԱՔՍ (հանգստութեան հոգոցներ).- *Նորից միասին, վերջապէ՛ս։ Ահա այդպիսին է մարդը։ Իր ձեռքի մեղքերի համար մեղադրում է արը-տին։* (Ձգում է ձեռքի դաստակը)։ *Վերջին լոպէն... Ասե՛մ...*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ո՛չ։ Որովհետեւ դա նրանց չի փրկի։*
ԱՅԱՔՍ.- *Դա կը սպանի ժամանակը։ Ուշացած յոյսը կը հիւանդացնի, բայց չի արդարացնի միջոցը։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Արի գնանք։*
ԱՅԱՔՍ.- *Իսկ եթէ ոչ այսօ՞ր...*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ուրեմն, վաղը։*
ԱՅԱՔՍ.- *Այսօր։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ես մտածում եմ՝ աւելի լա՞ւ չէր լինի մեզ համար բաժան-ւելը։*
ԱՅԱՔՍ.- *Ինչ է սա։*
ԽՂՃԻ ՈԳԻ.- *Երեւի արմաւենի։ Մառը լաց է լինում։*
ԱՅԱՔՍ.- *Մի ծառ։ Երեկոյ։*

Այաքսը քայլում է հապշտապ, ձեռքով տարօրինակ շարժումներ է անում։ Խիղճը կանգնած է։

ԱՅԱՔՍ (ծառի ետեւում).- *Եւ դուք՝ Մտքերիս ահաւոր փեթակի բզզոցով, որ դատապարտում եւ թարմացնում էք շեղուած յիշողութիւնը։ Դուք, դո՛ք... իրաւունք ունէք։ Նայէք ինձ անկիւնից, ելէք իմ ա-ռաջ։ Եւ երբ հայեացքս ուղղուած կը լինի ստքերիս, նայէք ինձ ծոծրակից, որ ես իմանամ, ինձ հետեւում էք։ Դուք, դո՛ք, դո՛ք... իրաւունք ունէք։ Ցետոյ արթնացող մի մտքից յանկարծ կարկամում եմ լուռ, եւ հալածելը ինձ ետ կանչելու մի պատրուակ է։ Նայէք ինձ, նայէք, հովիւ աղջկայ աչքեր եւ հրաբխային գոլորշու միջից, եւ արեւի լոյսից՝ առաւօտից երեկոյ, եւ մինչեւ առաւօտ...։ Դուք դուրս*

digitised by A.R.A.R.@

չէք լողայ իմ մտքերից կամ չէք հեռանայ, ինչպէս ծծմբի չոգու ա-հաւոր ալիքն է փախչում քամու բերանից։ Դուք, դո՛ւք, դու՛ք...

Լռութիւն։ Շրջանցում է ծառը։ Խիղճը թայլ է անում նրա ուղղութեամբ։

ԽՂՃԻ ՈԳԻ (բռնելով Այաքսի ձեռքը).- *Քո դէմքը ասես կայծակից ու կարկուտից աւերուած դաշտ լինի։ Դու ուզում էիր ինձ հետ խօսե՞լ։ Դու ինձ ասելի՞ք ունես։*

Այաքսը գլխահակ կանգնում է նրա առաջ։

Տու՛ր ինձ ձեռքդ։ Գրկի՛ր ինձ։

Գրկախառնւում են։

Գնանք, մեղապարտ։ Տուր ինձ ձեռքդ։

Այաքսի ձեռքը բռնած առաջանում է։

ԱՅԱՔՍ.- *Մենք անցանք արմաւենու ծառը։ Բայց հիմա...*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Հիմա, ի՞նչ։*

ԱՅԱՔՍ.- *Իմ առջեւ կայ միայն մի ճանապարհ, եւ Աստուած գիտի դա ուր է տանում։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Դու չես գտնի կանաչ դաշտեր եւ պարզ ջրեր, իսկ եթէ հարկ լինի լաց լինել, ինչ արած, լաց կը լինենք միասին։ Մի՞թէ վատ է, որ դու ինձ տեսնում ես եւ լսում։*

ԱՅԱՔՍ.- *Դու ես իմ ճանապարհը հարթում։ Դու այնպիսի մի ծանօթ ես...*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ես քեզ վրայ առաջ թոյնի պէս էի ազդում։ Մարդիկ շատ լաւ չգիտեն ինձ, բայց միեւնոյնն է։*

ԱՅԱՔՍ (շրջում է դէպի Ոգին, տատանւում է).- *Մարդիկ հազիւ գիտեն...։ Բայց, միեւնոյնն է, մարդկութեան խղճի մասին մենք պէտք է խորհենք։ Եթէ մայրը մանկանն է դաւում...*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ցոյսով եմ, ես քեզ չեմ քշում այստեղից։ Քո յօժար կամքով...*

ԱՅԱՔՍ (ձեռքը սրտին).- *Իմ սիրտը թփթփացնում է։* (Բացում է ձեռքերը՝ ուղղելով վեր, թեթեւացած)։ *Ինչու՞ այնպէս չանել, որ հանգիստ լինի։ Նա հանդարտուել է։ Ամէն ինչ հանդարտուել է։ Մի մեծ ջերմութիւն է իջել վրաս։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Հարց է տալիս։*

ԱՅԱՔՍ.- *Հարց։ Մո՛վ։ Ի՞նչ։*

ԽՂՃԻ ՈԳԻ (նայում է ուղիղ, հայացքը սեւեռում).- *Մի ձայն։ Ես եմ։*

ԱՅԱՔՍ.- *Ուղեղիս մէջ կրկնութիւն է։ Դա նշանակում է, որ դու՝ ես եմ, իսկ ես՝ դու ես։ Ես ու դու մէկն ենք, հասկանու՞մ ես։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Անպայման պէտք է լսես տկտկոցը։*

ԱՅԱՔՍ.- *Լռութի՛ւն...*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Առա՞ջ, առա՞ջ։*

ԱՅԱՔՍ.- *Առա՞ջ, առա՞ջ։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Օ՜։*

ԱՅԱՔՍ.- *Ի՞նչ ես ուզում։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Մօտեցի՛ր։*

ԱՅԱՔՍ (ետ է քաշւում, տատանւում է։ Երկար նայում են իրար, մօտենալով, ետ քաշուելով, իրար աւելի ու աւելի մօտենալով, եւ անսպասելի գրկախառնւում են).- *Վերջապէ՞ս։ Այո, արի գնանք։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Նայիր ծառին։ Ծառը այստեղ չէ՞ր։*

digitised by A.R.A.R.@

ԱՅԱՔՍ.- *Այստեղ էր։ Ես էլ։ Մառը եւ ես։ Երկուսն էինք։ Խիղճը երբ չը-կար։ Նա հիմա կայ։ Մարդը Խղճի հետ, եւ արմատներին։ Երեքն են։ Իսկ միւսնե՞րը։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ո՞ր միւսները։*

ԱՅԱՔՍ.- *Մարդիկ։ Նրանք Խղճի հե՞տ են։*

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Ո՛չ։ Նրանք պատճառներ ունեն։ Ա՜հ։* (Յուսահատուելով)։ *Ի՞նչ պէտք է անենք, ի՞նչ պէտք է անենք։*

ԱՅԱՔՍ (խոր հոգոց է հանում).- *Այնտեղ սրբագործող մահն է։* (Նայում է հորիզոնին, ձեռքով աչքերին շուտաֆ անելով)։ *Գնանք։ Արագ։ Արեւը մայր կը մտնի, լուսինը կ'ելնի։ Արեւը կը ծագի։ Խիղճը չպէտք է մոլորուած մնայ խորը անդունդի յաւերժական գիշերում։* (Տենդագին շարժւում է ետ ու առաջ, ձեռքերը պարզում է)։ *Խի՜ղճ...*

ԽՂՃԻ ՈԳԻ (գլխով համաձայնութեան նշան է անում)։

ԱՅԱՔՍ.- *Զարի եւ բարու խորհուրդների մէջ անձս տոչորող երկուութեան ձայնի յորձանուտներում նա կանգնած է որպէս համաձայնութիւն։ Եւ իր ձայնի մէջ դրած խորհուրդը իր դատաստանի, ինձ է հասցը-նում վայ ու ողբաձայն աղաղակների ինձ մահուան կոչող մի լուռ քարաւան։ Սասանուած մտքով, բայց նրա ձեռքը առած որպէս ինձ փրկութեան խարիսխ՝ եկել եմ, ահա, պատասխան տալու։ Նա յոր-դորում է մի մեծ բաղձանքով ինքնասպան լինել։ Սրի դաստակը յե-նում է գետնին։ Սուր ծայրը պահում է կրծքի առաջ ու նետում վր-րան։ Պատկերը համարեա՝ թէ նոյնն է։ Նոյնն է ծովը, միայն ժայ-ռերն են աւելի հողմահարուած ու քայքայուած։ Մառի տեղում մի ուրիշ ծառ է։ Մերունիներից կազմուած երգչախումբ։*

ԱՌԱՋԻՆ ԾԵՐՈՒԿ (երգչախմբից առաջ գալով).- *Դարեր են եկել ու անցել։ Սերնդից սերունդ հաղորդուել է Մտքերի Ոգին եւ իր ասոյթները՝ «Որ խղճով ապրես, եւ քեզ չտանջեն սեփական մեղքի կտտանքնե-րը, մի արա ուրիշին այն, ինչ չես ուզում, որ քեզ անեն»։ Կամ «Կարողանալ տառապել ուրիշի ցաւից, ուրիշի ցաւը զգալ ինչպէս իր ցաւը»։* (Ետ է գնում իր տեղը)։

ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ (առաջ գալով).- *Դարեր հոսել է կարմրաշիթ արեան գետը։ Մտքերի Ոգուց մարդը փոխուում է։* (Կանգնում է իր տեղը)։

ԵՐՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ (մի քայլ է անում).- *Մտքերի Ոգու եւ Խղճի խայթի ժա-ռանգական հունդերը իրենց միջոցով փոխանցում էին անհրաժեշտ տարրեր։ Եւ կատարելագործւում էր մեզանից առաջ եկած ու գնա-ցած էակների ամփոփած մարդկային հոգին։ Ու դարերի հետ Մըտ-քերի Ոգու եւ Խղճի խայթի ըմբռնումներով՝ սովորութիւններ, բարբ-քեր եւ բնաւորութիւն, ցեղային ու աշխարհագրական գործօններով նաեւ, բարբարոսից ծնում էին քաղաքակիրթ մարդ ու քաղաքակիրթ ժողովուրդ։ Մարդիկ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը հե-տզհետէ դառնում են աւելի բարի եւ լաւ։* (Կանգնում է տեղը)։

ՉՈՐՐՈՐԴ ԾԵՐՈՒԿ (տեղից).- *Իսկ դեռ որքա՞ն կայ բարբարոսութիւն։ Մէկի մօտ տարրեր, միւսի մօտ՝ այլ։*

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ.- Տեսէք, սիրտ է նա երկաթից
Կամ ինչպէս քար, ինչպէս քար։
Կոյր է հիմա, որ գալիս է։
Կուրացրել են, այրել են նրա աչքերը
Երկաթով շիկացած։
Ամողը բարբարոս է. մարդու գործ է։

digitised by A.R.A.R.@

Դա արուել է Այաֆսի գոյութեան ժամանակից դարեր յետոյ։
Իսկ որտե՞ղ էր Խղճի Ոգին...

Ցայտնուում է Խղճի Ոգին։

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Կոյրն ինչ կ'անի իր կուրացնողի՞ն...*
Կոյրի ձեռքը դրէք շիկացած երկաթ,
Իր կուրացնողին տուէք կոյրին։
Կոյրի հոգում Ոխ ու Քէ՞ն է, Ցասու՞մ, Վրէ՞ժ...

Կոյրը մէկ ոտքի թեից կախուած, շնչասպառ ու սաստիկ յուզուած, թեւերի անկարգ ու խարխափող շարժումներով առաջ է շարժուում։ Գալիս են միւս դիմակները։ Նրա ձեռքն են տալիս մի ծայրում շիկացած երկաթ։

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Բերէք բարբարոսին։*

Դիմակները առաջ են մղում կապած մեղսագործին։

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Կուրացրու՛։*
ԵՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Այրիր աչքերը քեզ կուրացնողի։*
ՉՈՐՐՈՐԴ ԴԻՄԱԿ.- *Մենք երեքով յորդորում ենք՝ Զայրոյթը, Քէն ու Ոխը եւ Վրէժը։*

Կոյրը բարձրացնում է ձեռքում պահած շիկացած երկաթէ ձողը։ Ձեռքը դողդողում է, թուլանում։ Երկաթն ընկնում է ձեռքից։

ԽՂՃԻ ՈԳԻ.- *Իրեն կուրացնողին չի՞ կարող կուրացնել...։ Նրա գլուխը գութ է, սիրտը՝ գութ, ձեռք ու ոտքը՝ գութ, ա՜հ, նրա ամէն ինչը գութ է։ Ես յաղթեցի։*

ԵՐԵՒԱՆ, ՅՈՒՆՈՒԱՐ 1990 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱՋԱՆԵԱՆ

(Վ Ե Ր Ջ)

digitised by A.R.A.R.@

Իմացական Շարժում

Վ. ՕՇԱԿԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Թուցիկ ակնարկ)

«Յեղափոխական գրականութիւն» արտայայտութենէն երեք տարբեր սահմանումներ կամ իմաստներ կարելի է արտաբերել։ Առաջինը, որ ամէնէն բնական ճամբով կու գայ մտքին եւ որ սակայն զուրս կ'իյնայ քաղաքական կուսակցութեան մը մտաւորական հետապնդումներէն՝ կը յատկանշէ այն գրական հոսանքը կամ իմացական նոր ու յանդուգն պացքը, որ յեղափոխութիւն կը յառաջացնէ գրական արուեստին մէջ։ Վերջին երկու հարիւր տարուայ ընթացքին մօտ հինգ յեղափոխութիւն տեղի ունեցաւ Եւրոպայի մէջ, սկսելով վիպապաշտական յեղափոխութենէն մինչեւ 1960ական թուականներու ֆրանսական «Նոր վէպ» շարժումը։ Երկրորդը՝ կը նշանակէ այն գրականութիւնը, որուն նիւթը յեղափոխական պայքարներու, ոգեւորութեան կամ տառապանքին նկարագրութիւնն է, ինչպէս Պաստեռնաքի «Տոքթոր Ժիւակո»ն կամ Անտրէ Մալրոյի վէպերը։ Այս Բաթէկորիին մէջ կ'իյնան այն բոցաշունչ եւ վրիժախանձ խմբագրականները, յօդուածները եւ կոչերը, որոնք քաղաքական մամուլի էջերէն կը ջանան սրտապնդել յեղափոխական անհաշտ պայքարի մէջ նետուած բազմութիւնները եւ որոնց լաւագոյն օրինակը՝ Դաշնակցութեան առաջին տասնամեակներու «Դրօշակ»ներն են։ Յեղափոխական գրականութեան էն կարեւոր մէկ ճիւղը՝ գաղափարաբանական եւ տնտեսական խնդիրներու շուրջ մտածումի աշխատանքն է, որ ողնասիւնն է քաղաքական կուսակցութեան մը եւ առանց որու՝ յեղափոխական շարժում կամ կուսակցու-

digitised by A.R.A.R.@

թիւն մը չի կրնար ինքզինքը նորոգել, չի կրնար շահիլ նոր սերունդներու խանդավառութիւնն ու զօրակցութիւնը։ Իսկ երրորդը՝ այն գրականութիւնն է, որ թէ՛ պատճառ է եւ թէ ալ հետեւանք յեղափոխութեան, այն՝ որ մարդիկ երգելով մահուան գիրկը կը նետէ ու վերապրողներուն նոր պայքարի ներշնչում կու տայ։ Ժան-Ժաք Ռուսոյէն մինչեւ Քարլ Մարքս ու Մաօ Ցէ Թունկ՝ պատմութեան մեծ քանդիչներն ու կերտիչները կը լեցնեն այդ գրականութեան արխիւները։

Երկրորդ ու երրորդ սահմանումներն են մեզ հետաքրքրողները։ Մենք՝ հայերս, մեր յեղափոխական գրականութիւնը սկսած ենք էսթոնական Դորպատ համալսարանի ուսանող Խաչատուր Աբովեանի եւ իր սերնդակիցներու բանաստեղծական, ազգայնական ազատատենչ ու զգացական պոռթկումներով, 1880ական թուականներուն, Ժ. Ժ. Ռուսոյի փիլիսոփայութեան եւ գերմանական ռոմանթիզմէն եկած ազդեցութեան ճամբով։ Աբովեանի վրայ մեծ ազդեցութիւն ունեցած են նաեւ՝ ֆրանսական 1880 Ցուլիսի յեղափոխութիւնը եւ անոր անմիջական հետեւանքը հանդիսացող լեհական Նոյեմբերեան ապստամբութիւնը ընդդէմ ցարական կայսրութեան։ Այդ թուականներուն, արեւմտահայոց մէջ գաղափարական ոչ՛ մէկ շարժում նշմարելի է, ոչ ալ գրական որեւէ ստեղծագործում, իսկ Մ. Թաղիադեանցը Կալկաթայէն, Գ. Պատկանեանը Թիֆլիսէն Կամ Ց. Հիսարեանը Պոլսէն իրենց թերթերուն մէջ գլխաւորաբար ազգային լուսաւորութեան հարցով տարուած էին։ (...)։ Ամէն անդին չէր կրնար երթալ, բառին լայն իմաստով՝ «յեղափոխական գրականութիւնը», ընթերցող ու զայն գործի վերածելու ատակ հող ալ չկար Թրքահայաստանի մէջ մինչեւ 20րդ դար։ Երկու հոգի միայն բացառութիւն կազմեցին — Խրիմեան Հայրիկ եւ Մկրտիչ Փորթուկալեան։ 1870-1880ական շրջանին Խրիմեան կը խորհրդանշէր մտածումի եւ գործի մարդը նոյն ատեն, դիւանագէտն ու զեկավարը, որ չէր վարաներ եկեղեցւոյ խորանէն ժողովուրդը յորդորելու, Պերլինի Վեհաժողովէն դարձին՝ «Մէկ-մէկ զէնի տարէք, զէնի առէք եւ դարձեալ զէնի։ Ժողովուրդ, ամէնէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին եւ քո բազուկին ուժ տուր, մարդ ինքնիրեն պէտք է աշխատի, որ փրկուի»։ Իսկ 1877ի Վան քաղաքի ահաւոր հրդեհին իրը հակազդեցութիւն՝ ան կը գրէր իր նշանաւոր «Վանզոյժ»ը, ուր կ'աղաղակէր՝ «Ցուշ, յուշ, ո՞վ Հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, դեռ պիտի մորթուիք, քանի որ անգէն, անեղջիւր անասպար կ'ապրիք... Ո՞վ դու մաշած եւ հիւծած հիւանդ... թէ ստոյգ ազատութիւն կը ցանկանաս, օ՛ն, ուրեմն, փոքր ինչ խլրտիր մահնիդ մէջէն...»։ Մ. Վարանդեանի համար, «հայ յեղափոխական գրականութեան ամէնէն պաթեթիկ էջերէն են ատոնք...»։

«Կայծեր»եան էջեր են... եւ Րաֆֆիի «Կայծեր»ու մէջ դժուար է գտնել ապստամբութեան աւելի բացորոշ, աւելի ցնցող քարոզ ու յորդոր»։ Իսկ Փորթուկալեան որ, աւելի ուշ, 1886ին Մարսէյլի մէջ պիտի հիմնէր «Արմենիա» հակաթուրք բուռն պայքարի հանդէսը, 1880ի սկիզբը Թիֆլիսի «Մշակ»ին ու Պոլսոյ «Մասիս»ին էջերէն Հրանտ ծածկանունով կրակոտ յօդուածներով թուրք բռնապետութեան լուծին դէմ ապստամբութեան կոչ կ'ուղղէր ժողովուրդին։

Մ. Փորթուկալեանի երկրորդ իրագործումը եղած է Արմենական կուսակցութեան կազմութիւնը 1885ին, Վանի մէջ։ Իր ժամանակն ու պայ-

digitised by A.R.A.R.@

մանները նկատի ունենալով՝ այս կազմակերպութիւնը յեղափոխական ու գաղափարաբանական նկատառելի աշխատանք տարած է, խարիսխ ունենալով 1878ին Փորթուգալեանի հիմնած Վարժապետանոցը Վանի մէջ ու ապա «Մշակ»ի խմբագիր Գ. Արծրունիի հետ կազմած «Հայոց Միացեալ Ընկերութիւն»ը, 1881ին, կրկին Վանի մէջ։ Արմենականներն էին, որ մշակեցին արեւմտահայութեան ազատագրական պայքարի գործնական ու տեսական ծրագիրը։ Տեսականը, որ հայ յեղափոխական գրականութեան առաջին պաշտօնական հռչակագիրն է՝ ամփոփուած է «Վարդապետարան Հայաստանի ազատագրութեան» կոչուած գրքոյկին մէջ, ըստ որու՝ «Հայ ազգը ինքը պիտի ազատէ Հայաստանը օտարներու ձեռքէն, ըստ հնարաւոր միջոցներու - երբեմն սեփական զէնքով, երբեմն փողով եւ երբեմն օտարի օգնութեամբ։ ...Մէն մի հայու սրբազան պարտքն է պահպանել իր ազգի լեզուն, իր զաւակները հայկական ոգիով դաստիարակել, անոնց գէնքի գործածութիւնը սորվեցնել, ձեռք բերել հողային կալուածք եւ օգնել «Հայրենասիրական միութեան»։

Արեւելահայաստանի մէջ, հայրենասիրական ու յեղափոխական երակը Աբովեանէն ետք մեծ թափ ստացաւ, 1850ական ու 1860ական տարիներու Դորպատի ուսանողութեան, Սէն Փեթերզպուրկի երիտասարդութեան ու մանաւանդ «Հիւսիսափայլ»ի շնորհիւ։ Այդ հանդէսի բերքն էր - Միքայէլ Նալչանտեան, Ստեփան Նազարեանց, Սմբատ Շահազիզ, Մանուկ Մատաթեանց, Գէորգ Բարխուդարեան եւ ուրիշներ - ինչպէս են Ռաֆայէլ Պատկանեանի (Քամառ-Քաթիպա) եւ Գրիգոր Արծունիի «Մշակ»ի խմբակին պէս մտաւորականներու լուսաւորութեան գործը, որ կարելի դարձուց յեղափոխական գաղափարաբանութեան տարածումը հայութեան որոշ խաւերուն մէջ եւ Դաշնակցութեան նման քաղաքական ու ռազմական կազմակերպութիւններու հիմնադրումը 1890ական թուականներուն։ Այս բոլորին մէջէն հաւանաբար Ռաֆֆին էր, որ իր վէպերու հայրենասիրական եւ հերոսապաշտ ոգիով շարունակեց զինք կանխող գրողներու յեղափոխականի տիպին աւանդութիւնը ու զայն հասցուց մինչեւ քաղաքական կուսակցութիւններու ծնունդը։ Ինչպէս Ա. Աստուածատուրեանը կը գրէր Արամ Մանուկեանի մասին իր մենագրութեան մէջ. «...Ռաֆֆիի «Կայծեր»ը... դառնալու էր «Հաւատոյ հանգանակ» հայ-ազգային-յեղափոխական մտածողութեան համար»։ Հայրենիքի, ազատութեան ու ըմբոստացումի թեմաները այնքան հզօր արձագանգ կը ձգէին հայոց մտքերուն մէջ, որ ան գաղափարական առաքեալի դեր մը ստացաւ ժողովուրդէն, յատկապէս իր «Կայծեր» վէպով որու մէջի հերոս Վարդանն ու իր Երազը տեսակ մը դրախտավայր Հայաստանի մը խոհալը կու տային հայերուն։ Եւ ինչպէս Մ. Վարանդեանը շատ չիտակօրէն կ'ըսէ, Ռաֆֆիի՝ «Հայկական ռոմանթիզմը առաջին իսկ օրերէն ստացաւ քաղաքական-արմատական գունաւորում»։ «Գրիգոր Արծրունի եւս,— կը գրէ Մ. Վարանդեան,— ստեղ մը յեղափոխական քարոզներ ըրեր էր — Խրիմեանի պէս — եւ 1878ի դէպքերու միջոցին, «Մշակ»ի մէջ ըմբոստացումի կը հրատիրէր թուրքահայերը»։

80ական թուականներու յեղափոխական գրականութեան երկրորդ պաշտօնագիրը՝ 1887ին Ժընեւի մէջ հիմնուած Հնչակեան կուսակցութեան ծրագիրն է, իր «հեռաւոր» եւ «մօտաւոր» երկու նպատակներով։

digitised by A.R.A.R.@

Հնչակեան կուսակցութեան առաջին յայտարարութիւնները «հեռաւոր» նպատակը կը բնորոշեն իբրեւ «սոցիալիստական կազմակերպութիւնը» հայու հայրենիքին, մինչ «մօտաւոր» նպատակը կը բանաձեւուի իբրեւ «ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատութիւն եւ ազգային անկախութիւն»։ Հնչակեան յեղափոխական մտաւորականները «ժողովրդի մէջ, ժողովրդի հետ եւ ժողովրդի համար» բնաբանին կը հետեւէին ու կ'աւելցնէին՝ «Լինել միշտ ճնշուածի կողմը եւ դէմ ճնշողին, արդարութեան պաշտպանութեան տակ անցնել, մարտնչելով անարդարութեան դէմ, ազատութեան անձնուէր եւ բռնութեան հալածող, լսող խելքի ձայնին եւ թշնամի նախապաշարումներին, լինել գարգացող ժողովուրդների կողմը եւ դէմ՝ փտած կառավարութիւնների՝ ահա մեր նշանաբանը, ուղղութիւնը ու պարտականութիւնը»։ Ասոնք առողջ ու վարակիչ մտածումներ են ու յեղափոխական՝ յատկապէս Արեւմտահայաստանի յաճախ անուս եւ ստրկացած զանգուածներուն համար։

Այսպէս էր, որ երբ 1890ին Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակ կ'իջնէր՝ արդէն յեղափոխական գրականութեան աւանդութեան մը կորիզը գոյութիւն ունէր սաղմնային վիճակի մէջ, գլխաւորաբար մշակուած «Հնչակ»ի էջերուն մէջ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակեց ու զարգացուց այդ աւանդութիւնը իր պարբերական օրգան «Դրօշակ»ի մէջ։ Արդարեւ, առաջին թիւէն իսկ կը զգացուի գրական այն ոճը, որ ամբողջ տասնամեակներու ընթացքին պիտի գործածուի, կատարելագործուի՝ արթնցնելու համար հայ զանգուածները իրենց ստրկային վիճակի գիտակցութեան եւ ապա, ընկերային միութիւն ստեղծելու բոլոր դասակարգերու միջեւ։ Երկու փորձերն ալ միայն մասնակի յաջողութիւն պիտի արձանագրեն։ Իսկ այդ «ոճը» ուրիշ բան չէր կրնար ըլլալ, եթէ ոչ հռետորական եւ զգացական, եւ որուն կատարելագոյն օրինակը Սիամանթոյի յեղափոխաշունչ քերթողութիւնը եղաւ, աւելի ուշ։ «Միանանք ամէնքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով այսօր երեսը կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւիր նրան, այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...։ Ուրեմն, եղբայրներ, միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ։ Եւ դուք, երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէք ժողովրդի հետ։ Եւ դուք, ալեզարդ ծերունիներ, ոգեւորեցէք ձեր որդոց, եւայլն, եւայլն» կը գրէր Դաշնակցութեան Մանիֆէսթը։ Յեղափոխական գրականութեան գերազանց զգացական նկարագիրը ի յայտ կու գայ այն միամիտ ու բուռն հաւատքէն, որ կը դրուի «ժողովուրդ»ի իմաստութեան վրայ՝ հակառակ որ հայ բոլոր յեղափոխական կազմակերպութիւնները, մէջն ըլլալով Դաշնակցութիւնը՝ շատ լաւ գիտեն, թէ այդ հայ «ժողովուրդ» զանգուածին ահաւոր յետամնացութիւնը, տգիտութիւնն ու պահպանողականութիւնը անհրաժեշտ կը դարձնեն, որ իրենց միջազգային եւ գաղափարական ձգտումները մէկդի դրուին ոչ թէ պահ մը, այլ կէս դար մը առնուազն՝ մինչեւ որ զարգանայ հայութիւնը։ Այս կէս դարը սակայն ո՛չ Պատմութիւնը, ո՛չ Յեղափոխութիւնը, ոչ ալ կեանքի ներքին լոժիքը պիտի զլանան մեզի։

Այսպէս, Դաշնակցութեան յեղափոխական գրականութիւնը կ'ուղղուէր նախ հայութեան, զայն սթափեցնելու, միացնելու եւ նաեւ պայքարելու համար համատարած յուսալքումին, շուարումին դէմ։ Առաջին տասնամ-

digitised by A.R.A.R.@

եակին «Դրօշակ»ներուն մէջ տպուած խմբագրականները, յօդուածները, նամակները, ներքին թէ արտաքին տեսութիւնները այս նպատակին կը ծառայէին, սակայն այդ գրութիւններէն յստակօրէն կը հասկցուի, թէ հայութեան իմացական մակարդակը այնքան ցած էր, որ թերթը չէր կրնար գաղափարաբանական եւ յեղափոխական հարցերով զբաղիլ։ Նոյնիսկ 1893ի տակաւին Զաւարեանի եւ Քրիստափորի ստորագրած «Այր ու բեն» խմբագրականները պահանջը կը զգան «ազատութիւն» բառը բացատրելու իրենց ընթերցողներուն։ Յովնանի, Ռոստոմի, Ակնունիի խմբագրականները տարօրինակ հակադրութիւններու պատկեր մը կը գծեն մեր առջին — մէկ կողմէն գաւառէն եկած սրտաճմլիկ նամակներու եւ թղթակցութեանց ընդմէջէն երեւցող անգլուխ, անկազմակերպ ու տագնապահար ժողովուրդը եւ, միւս կողմէ՝ Դաշնակցութեան բոցաշունչ, լաւատես եւ գիւղացիի կեանքի ահաւոր իրականութենէն անջատուած յեղափոխական գիտակցութեան մը շատ դանդաղ ծնունդը։ Ահա յատկանշական խմբագրական մը, որ կը կոչուի՝ «Յեղափոխական գիտակցութիւն»։

«Միշտ կոիւ, միշտ սարսափ ու արհաւիրք, երբեք խաղաղութիւն։

«Տէրրոր ընդդէմ հակայեղափոխականների, տէրրոր ընդդէմ սուլթանի կառավարութեան։

«Երբե՞ք խաղաղութիւն, Բանի դեռ կանգնած է Համիդ բռնաւորի արիւնաթաթախ գահը, Բանի դեռ կանգնած է սուլթանական բարբարոս ռեժիմը, իր հաւատարիմ շուն լրտեսների անվերջ լեգէոնների, կեղտի եւ անբարոյականութեան մէջ ներխուած զազան փաշաներով, գայմազամներով, փոլիսներով, զափթիաներով...

«Միշտ հեռու եւ հեռու տարածուած է յեղափոխութեան փրկարար հոսանքը, միշտ աւելի եւ աւելի հաստնանում է ժողովրդի մէջ յեղափոխական եռանդը։

«...Կար ժամանակ, երբ սուլթանը մտածում էր թեթեւ հարուածով մեռցնել հայկական յեղափոխութիւնը, խեղդել Հայկական խնդիրը, որ նոր է մարմնանում, որ տակաւին իր խանձարուրին մէջն էր։ Այդ այն ժամանակն էր, երբ չկար յեղափոխական կազմակերպութիւն, չկար յեղափոխական հանրային գիտակցութիւն, ասպարէզը անհատներինն է...

«...Այն ժամանակից անցան տարիներ... Անհատական շարժումները փոխուեցին խմբական շարժումների, յեղափոխական ալիքը տարածուեց կեդրոններից բովանդակ Հայաստանի ամենախուլ անկիւնները, ծնունդ առաւ եւ մարմնացաւ յեղափոխական կազմակերպութիւնը։

«...Եւ այսօր, երբ մեր աչքի առջեւ փռուած է սգաւոր Հայաստանը երբեմն շէն, այժմ աւերակ ու փլատակ դարձած գիւղերով, քաղաքներով... Յեղափոխական այդ տխուր ու անմխիթար իրականութեան առջեւ մենք դարձեալ մխիթարւում ենք, խրախուսւում։ Մենք խրախուսւում ենք նրանով, որ տասնեակ տարիների մեր բաղձանքներն իրագործուած ենք տեսնում, որ ունենք յեղափոխական գիտակցութեամբ տոգորուած մի ամբողջ ժողովուրդ, ունենք յեղափոխական մի մասսա, որ երբեք այլեւս, ոչ մի Հէրոիլեսի առաջ չի խոնարհուի»։(«Դրօշակ», 15 Յունիս 1896)։

Ահիկա զուտ լրագրութիւն է, իր արժանիքներով ու թերութիւններով եւ որ, գիտակցաբար թէ անգիտակցաբար, կը շպարէ, կ'այլակերպէ յեզա-

digitised by A.R.A.R.@

փոխական գաղափարին ու եռանդին ժողովրդականութիւնը՝ խրախոյս տալու համար ժողովուրդին եւ ինքզինքին...։ Արդարեւ, երբ մարդ կը կարդայ Արեւմտահայաստանի բոլոր անկիւններէն եկած ողբալի նամակները, լուրերը, թղթակցութիւնները, որոնք շաբաթներով, ամիսներով ու տարիներով կը լեցնեն «Դրօշակ»ի էջերը հայ գիւղացիներու տառապանքով, քրտական ջարդերու, թալաններու, աւերածութիւններու, հալածանքներու սրտաճմլիկ պատմութիւններով՝ մարդ կը տարուի մտածել, թէ խմբագիրներու արտառոց լաւատեսութիւնը միակ միջոցն է, որ կուսակցական ղեկավարութիւնը ունէր՝ իր մտային հաւասարակշռութիւնը պահելու եւ այդ ահաւոր պայմաններուն տակ չխենթենալու համար...

Սակայն բուն յեղափոխական գրականութիւնը զարգացաւ աւելի զուսպ եւ չափաւոր մակարդակի վրայ։ Կ'ակնարկենք կուսակցութեան վարքագծի ու քաղաքական կացութեան վերլուծումներուն «Դրօշակ»ի մէջ եւ որ մեծ յառաջդիմութիւն էր կուսակցական գրական տաղանդին մէջ։ Այդ գրութիւնները կը միտին զգաստութեան հրաւիրել ժողովուրդի մէկ որոշ խաւը, մշակելով նոյն ատեն յեղափոխական տեսութեան մը, գաղափարաբանութեան մը կորիզը որ, իր ժամանակին՝ մեծ մասով արձագանգն է ռուսական populist *շարժումին, որուն կը պատկանէին մեծ թիւով կուսակցականներ։*

«Ժողովուրդը» սակայն ամէն տեսակ դատի կոուան է, որովհետեւ գրեթէ միսթիք յղացքի մը վերածուած է յեղափոխականներու կողմէ – ան թէ՛ յեղափոխական մաքառումին նպատակն է, թէ՛ անսպառ ուժի եւ տկարութեան աղբիւր է, հոնկէ կու գան անթիւ մատնիչներն ու հերոսները ազատագրական պայքարին, ան է գերագոյն հեղինակութիւնը ու միակ սրբութիւնը յեղափոխականներուն համար, որոնք կ'ապրին ու կը նահատակուին՝ խորհրդաւոր էակին սիրոյն, որ «ժողովուրդ» կը կոչուի։

«Բռնապետութիւնները ջարդուել են, ժողովուրդը նրան մեռցրել. իւր արեան հոսանքի մէջ արիւնահեղձ է արել եւ մինչեւ իսկ բռնակալին կախաղան է հանել. ահա պատմութեան դասը», *կը գրէ Քրիստափոր (հաւանաբար) 1896ին («Դրօշակ», թիւ 6)։* «Եւ հէնց այս պատմութիւնն է մեզ ուսուցել յեղափոխութեան դիմել, ուղղել կռուի գլխաւոր ուժը դէպի ներկայ ռեժիմը, Բար ու Բանդ անել նրա գոյութիւնը պայմանաւորող հիմնարկութիւնները, ոչնչացնել բոլոր այն ֆակտորները, որոնք նպաստում են, պահում են նրա գոյութիւնը, որպէսզի սուլթանական բռնակալ կառավարութեան աւերակների վրայ բարձրանայ ժողովրդական-ռամկավարականը։... Հայ ժողովուրդը իբրեւ մարդկութեան անդամը, կռւում է իւր մարդկային իրաւունքների համար... Վաղը կամ միւս օրը նա կը խրի յեղափոխական սուրը բռնակալութեան սրտի մէջ նրան մեռցնելու. միայն բռնակալութեան մահը կարող է աւետել ժողովրդների եղբայրութիւնը, միայն նրա դիակի վրայ կարող է բարձրանալ ժողովրդների ազատութիւնը...»։

Ասոնք այդ օրերու ամէնէն զտարիւն ընկերվարական գաղափարներն են – ժողովուրդի ուժը, ժողովուրդներու ազատութիւնն ու եղբայրութիւնը, բռնակալութեան անխուսափելի անհետացումը։ Դժբախտաբար սակայն, գաշնակցական մտաւորականութիւնը երբեք ժամանակը չունեցաւ հայկական ընկերվարական տեսութիւն մը զարգացնելու։ Աւելի ուշ էր, որ Քրիստափոր պիտի փորձէր ընկերվարական յեղափոխութեան «պատմա-

digitised by A.R.A.R.@

կան անխուսափելիութեան» տեսութիւնը պատշաճեցնել հայ ժողովուրդի կացութեան։

«...Ամէն մի յեղափոխութիւն պատրաստուելով տասնեակ տարիների ընթացքում եւ ամբողջ սերունդների գործակցութեամբ, առաջ է գալիս որոշ պատմական բոպէում իբրեւ մի երեւոյթ, որ կատարուելու է անխուսափելի կերպով», *կը գրէ ան 1899 Մարտ 31ի «Դրօշակ»ի մէջ։ «Սակայն,— կը շարունակէ Քրիստափոր իր մտածումը,—* պէտք է միամիտ լինել՝ կարծելու համար, թէ ժողովուրդը կարող է բնել ստրուկ եւ զարթնել ազատ։

«Մտրկութիւնը օձի շապիկ չէ, որ կարելի լինի միանգամից փոխել։ Նա մտնում է ժողովրդի հոգու մէջ, նա ստորնացնում է զգացումները, նա փչացնում է բնաւորութիւնները։... Ազատութիւնը չի ընդունում պլատոնական սէր. նրան կարելի է սիրել միայն իրական սիրով, որ չգիտի տարբերութիւն խօսքի եւ գործի մէջ։... Կռուի եւ միմիայն կռուի միջոցով կարող է մի ժողովուրդ պատրաստուել յաղթական պատերազմի համար։... Կռիւ յարատեւ, կռիւ անընդհատ, յաճախ՝ անյաջող։ Չկայ ոչ մի ազգ, որ նախքան ազատուելը անհրաժեշտօրէն անցած չլինի փոքրիկ եւ վիժուած բռնկումների բովով»։

1899էն մինչեւ 1903 «Դրօշակ»ի մէջ իր կուռ ու բուխ յօդուածներով, Քրիստափոր կը յաջողի տեսական մտածումի որոշ ուրուագիծ մը ստեղծել, պայքարի հեւիհեւ թափէն ու հայկական տառապանքի եղերական տրամադրութենէն տարուած կուսակցական մտաւորականութեան մտքին մէջ։

Յեղափոխական մտածողութիւնը առհասարակ իր գաղափարներու գնացքին, իր գործունէութեան թափին ուղած է միշտ պատմական ճակատագրականութիւն մը, անխուսափելիութիւն մը, գրեթէ գերբնական արդարացում մը տալ։

Քրիստափորի սերունդը բացառութիւն չէ եւ ինքը այդ ոգիին լաւագոյն ներկայացուցիչն է։ Այսպէս, «Ամբոխային տրամաբանութիւն» յօդուածաշարքին մէջ («Դրօշակ» 1899 թիւ 5, 6, 7 եւ 1900 թիւ 2, 3 եւ 4), Քրիստափոր կը բացատրէ ինչու հայկական յեղափոխութիւնը «անխուսափելի, իրաւացի, հասկանալի, նպատակայարմար, շատոնց սպասելի, պատուաբեր եւ սրբագործուած Դատ մըն է»։ Յետոյ կը յայտնէ, թէ ապստամբութեան ամբողջ ծրագիրը – ցոյցեր, արշաւանքներ, հրոսակային խումբեր, ժողովրդային շարժում, զէնքերու մատակարարում, կազմակերպական գործեր — պատրաստ է։ Ապա Քրիստափոր կը պարզէ հայկական շարժումին ընդհանուր միւս պայմանները — դիւանագիտական ռազմավարութիւն, Մեծ պետութեանց դիմումներ, հայութեան զանգուածին հանդէպ կեցուածք, ժողովուրդի իմացական, հոգեբանական ու ռազմական պատրաստութիւնը, յեղափոխական զեկավարէ մը պահանջուած արժանիքները, եւայլն։ Յետոյ կ'անցնի հայ ազգի «խոտերուն» — անմիաբանութիւնն ու ստրկական ոգին — զորս «Պատմական չարիք» կը կոչէ, ձաղկելով յատկապէս հայ կղերը, մտաւորականութիւնը (արեւմտահայ եւ արեւելահայ), հարուստ դասակարգը, դիւանագէտները եւ անտարբերներու բազմութիւնը։ Կը յաջորդեն հոյակապ էջեր՝ նուիրուած այլասերումի վտանգին եւ յեղափոխականի տիպարի ուրուագծումին, եւ բացատրելէ ետք ինչու ո՛չ երիտթուրքերու, ո՛չ քիւրտերու հետ գրեթէ անկարելի է հաւասարակաց ճակատ կազմել, եւ ինչու ռուսերը այնքան ատելի են որքան թուր-

digitised by A.R.A.R.@

քերը՝ Քրիստափոր կը յանգի այն եզրակացութեան, որուն կը գիմէր իր մտածումը սկիզբէն, այսինքն՝ Օսմանեան բռնատիրութեան դէմ միջազգային, անհաշտ ու յեղափոխական պայքարը միայն կրնայ մեզ փրկել։

Այս մտածումները, տրուած իր «Դէպի երկիր» զմայլելի խմբագրականի («Դրօշակ», Յուլիս 1900) ոգիին եւ առոյգ ոճին ընդմէջէն, ինչպէս եւ այլ գրութիւններ Ռոստոմի, Ակնունիի, Մ. Վարանդեանի, Յովնան Դաւթեանի եւ ուրիշներու կողմէ՝ «Դրօշակ»ի առաջին տասնամեակները կը վերածեն հայ քաղաքական մտածումի կարեւոր աշխատանոցի մը։ Հոն էր, որ Դաշնակցութեան բոլոր կարեւոր միտքերը իրարու կը հանդիպէին ու յեղափոխական գաղափարաբանութեան մը սկզբունքներու շուրջ կը վիճէին։ Բայց հիմնականին մէջ, մտածումի երկու գլխաւոր ուղղութիւններ մշակուեցան հոն – զուտ ազգային գաղափարաբանութեան մը հարցը եւ ընկերվարական վարդապետութեան հետ կապուած տեսական հարցերը։

1905էն ասդին, սակայն, տեսաբանական հարցերու հանդէպ յուրջ հետաքրքրութիւնը կը նուազի ու Անդրանիկի յորդորները ուղղուած նոր հայդուկներու, Սիամանթոյի քերթուածները տակաւ աւելի կարեւորութիւն կը ստանան։ 1907էն ծայր կու տայ ընկերվարութեան շուրջ գրութիւններու շարքը, սակայն կը պակսի գաղափարաբանութեան հարցերով զբաղող բացառիկ իմացականութիւնը ու յեղափոխական գրականութիւնը նկարագիր կը փոխէ, կը կեդրոնանայ գլխաւորաբար պատմական-ընկերային ու դիւանագիտական հարցերու վրայ, յուշեր, թարգմանութիւններ, կենսագրականներ կը հրատարակուին՝ զոհացնելու համար միջին դասակարգը մեծ քաղաքներու։

Այս տարիներուն, Դաշնակցութիւնը Սփիւռքի յուսաբեկ, անդեկ զանգուածներու բարոյական ու մանաւանդ իմացական վերազարթնումին կը լծուէր նաեւ, կրկին յեղափոխական գրականութեան ճամբով։ Այս նպատակին կը ծառայէին «Հայրենիք» ամսագիրը (հիմնուած 1922ին) եւ «Վէմ»ը (հիմնուած 1933ին) իրենց քննական աւ յուշագրական յօդուածներով։

Յեղափոխական գրականութեան սահմանումին մէջ կարելի է առնել նաեւ Վահան Նաւասարդեանի ամբողջ քաղաքական գրականութիւնը, ինչպէս եւ Աւետիս Ահարոնեանի գրական վաստակը, սկսած իր ազգայնաշունչ առաջին գործերէն («Մրրիկի սուրբը») մինչեւ աւելի ուշ իր գրութիւնները, ինչպէս 1917-1918ի Թիֆլիսի «Հորիզոն»ին մէջ երեւցած «Հայրենիքիս համար»ը, եւայլն։

Իրականութեան մէջ, Սփիւռքեան պայմաններու մէջ, Դաշնակցութեան մտաւորական գործունէութիւնը ծայր աստիճան բարդ նկարագիր կը ներկայացնէր։ Դէպքերու ընկերային ու մանաւանդ մտաւորական նոր պայմաններու բերումով, Դաշնակցութիւնը ստիպուած էր հայ կեանքէն ներս շատ մը ոչ-քաղաքական այլ կալուածներու մէջ եւս գործել, պայքարի մտնել բազմաթիւ ճակատներու վրայ նոյն ատեն եւ կազմակերպել գաղութները, կրցած չափով։ Գուսակցութիւնը ցարդ երկու բնոյթ փոխած էր — սկսած էր իբրեւ ազատագրական կռուի ու յեղափոխութեան գործիք, յետոյ վերածուած Հանրապետութեան ատեն պետական մեքենայի ու հիմա կը ստանձնէր մտաւորական-ընկերային-քաղաքական պատասխանատուութիւններու աշխարհասփիւռ ու հապճեպ, պատրաստուած կառոյցի մը պաշտօնը...

digitised by A.R.A.R.@

Բաւեցի՞ն իր ուժերը — խնդրական է։ Հաւանարար այդ գլխաւոր պատճառը, որ համայնավարութեան դէմ 70 տարիներ տեւող իր անողոքմ հակադրութեան ընթացքին, Դաշնակցութիւնը չէ կրցած իր բնոյթին յարիր ու իր պայքարին համապատասխանող քաղաքական անհրաժեշտ զաղափարաբանութիւն մը մշակել, իր ընկերվարական եւ ազգայնական սկզբունքները արդարացնող։

Ըստ ոմանց, դժուար չէ այդ տասնամեակներու վրայ երկարող Համայնավարութեան եւ Դաշնակցութեան միջեւ գոյութիւն ունեցող ատելութեան ետին ընդնշմարել էապէս անձնական ոխերն ու փառամոլութիւնները մարդոց, որոնք 1920էն առաջ նոյն դեկավարութեան մաս կը կազմէին։ Հարցին մէկ ուրիշ երեսը, գէթ Դաշնակցութեան պարագային՝ արեւելահայ-արեւմտահայ մտաւորականութիւններու իրարու հանդէպ անհանդուրժող, յաճախ նոյնիսկ թշնամական վերաբերումը եղած է, Մարտկոցական շարժումէն առաջ եւ ետք, մինչեւ այսօր։

Ամէն պարագայի, 1925–1933 շրջանին, Դաշնակցական մտաւորականութեան մէկ ուրիշ խումբը — Սիմոն Վրացեան, Արշակ Զամալեան, Վազգէն Շուշանեան, Շաւարշ Միսաքեան եւ ուրիշներ զաղափարական եւ տեսական հարցեր կրկին կուսակցական մտածողութեան կեդրոնը բերաւ, հակահամայնավարութեան դէմ իր պայքարին առընթեր։ Ընդհանուր առմամբ, կարելի է ըսել, թէ իր հարիւր տարուայ պատմութեան ընթացքին, Հ. Յ. Դաշնակցութեան հրատարակած մօտ 210 պարբերականները եւս պայքարի զէնքեր եղած են, հայութեան մէջ վառ պահելով յեղափոխական ոգին։ Վերջապէս, այն 250 հատոր գեղարուեստական ու այլ նկարագրի գիրքերը, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան զանազան մատենաշարները ի լոյս ընծայած են իր պատմութեան առաջին 60 տարիներուն ընթացքին՝ բոլորն ալ իրենց բաժինը բերած են կուսակցութեան ազգային-ընկերվարական-յեղափոխական մտածողութեան ժողովրդականացման մէջ։

Այս բոլորին մէջ, կ'արժէ հոս վերյիշել Գ. Նժդեհի հոյակապ բանաձեւումը, զոր ան կու տայ Դաշնակցութեան էութեան մասին, «Ցեղի ոգու շարժը» (Սոֆիա, 1932) իր հատորին մէջ, գրուած Հ. Յ. Դ.ի 40ամեակի առթիւ։ Կը մէջբերենք կարճ հատուած մը՝ ուր հեղինակը կը փորձէ նորոգել «յեղափոխութիւն» յղացքը, տալով անոր բացառաբար «բարոյական» բնոյթ մը։

«Հ. Յ. Դ.ն «բարոյական» յեղափոխութիւն է,— կ'ըսէ ան,— արժէքներու գնահատման նոր չափանիշ։ Առանց նուիրումի՝ չկայ բարձր ստեղծագործութիւն, իսկ նուիրումի գաղափարը հայութեան համար եռզեբանութիւն դարձաւ Դաշնակցութեան մարտիրոսագրութեան ու հերոսականի շնորհիւ։

«Այդ է պատճառը, որ «Դաշնակցութիւնը, իբր ցեղի ներքին հոգեկան կարողութիւն» չի խորտակւում անգամ արտաքին պարտութիւնների դէպքում։ Նա մնում է իր ստեղծագործ ապագային հաւատացող իտէալիստ հայութեան հոգեւոր կորիզը։

«Դաշնակցութիւնը, սակայն, պիտի ունենայ նաեւ իր ողբերգակը։ Չէ՞ որ ամէն հերոսական ըստ էութեան ծնունդ է մի ողբերգակի։

«Իրսն եկ եւ Իրքն գնա ոչ ընկալան»։ Ոչինչ, ոչինչ է այնքան խոր՝ որքան տառապանքը զոհաբերողի՝ որ զոհաբերում է իր նմանների համար եւ մնում չհասկցուած»։

digitised by A.R.A.R.@

Անկասկած որ չիտակ է Նժդեհի վերլուծումը։ Դաշնակցութիւնը այսօր ամէն բանէ առաջ ոգեկան իրականութիւն մըն է հայութեան կեանքին մէջ, մեր Եկեղեցիին ու լեզուին նման։ Այդ իմաստով է, որ մեր կուսակցութիւնը կը նոյնանայ հայութեան լաւագոյն արժանիքներուն հետ, ուրկէ ան կ'առնէ իր ուժն ու իմաստութիւնը։ Եւ այսօր ալ Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական պայքարը կը շարունակուի հայ ժողովուրդի չէզոք կամ անտարբեր խաւերը ազգային լինելութեան եւ ոգիի տաք կեդրոնէն հեռացնող ուժերուն եւ ձգտումներուն դէմ։ Ու եթէ կայ ժամանակ մը, երբ յեղափոխութիւն մը միտքերու եւ կենցաղներու մակարդակին՝ աւելի քան կենսաբեր պիտի ըլլայ մեր ազգին համար՝ այդ ալ ներկայ տարիներուն է, թէ՛ Սփիւռքի եւ թէ մա՛նաւանդ Հայաստանի մէջ։

Յեղափոխութիւն՝ ո՛չ միայն գաղափարներով, ճառերով կամ մելանով, այլեւ արիւնով եթէ հարկ ըլլայ՝ փրկելու համար ազգն ու հայրենիքը, ինչպէս կը ջատագովէր Քրիստափոր իննսուն տարի առաջ։ Իր մէկ դարու վաստակով ու փորձառութեամբ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը միակ հեղինակութիւնն է, որ կրնայ գլխաւորել մեր ազգի բոլոր ուժերու զօրակոչ մը այդ նպատակին համար, ներկայ ժամանակներուն։

Իր պատմութեան երկրորդ դարաշրջանի սեմին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը գտնուի իր գաղափարաբանութիւնը եւ գործելակերպը այժմէականացնելու եւ նոր սերունդներու աշխարհահայեացքին մօտեցնելու հրամայականին առջեւ։ Այն բոլոր փտանգներուն դէմ, որոնք կը սպառնան հայութեան ֆիզիքական գոյութեան՝ Լիբանէն Պարսկաստան ու Հայաստան-Արցախ՝ հաւանաբար մեծագոյն զէնքը իր յեղափոխական ոգին է, առանց որու ո՛չ կեանքի, ո՛չ հայրենիքի, ոչ ալ մեծութեան կրնանք տիրանալ մենք՝ հայերս։ Մենք համոզուած ենք, որ այդ բարոյական ուժը գոյ է Դաշնակցութեան մէջ։

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

10 Յուլիս 1990, Սան Ֆրանսիսքօ

ՀԱԿԻՐՃ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

1.–Աճեմեան Լ., «Յուշեր Արմենակ Եկարեանի», Գահիրէ, 1947։

2.–«Դրօշակ», Ա. հատոր, 1890-1897, Բ. հատոր, 1898-1901։

3.–«Հ. Յ. Դ. Վաքսունամեակ (1890-1950)», կազմ. Ս. Վրացեան, Պոսթըն, 1950։

4.–«Հնչակ», Նոյեմբեր, 1887, Հոկտեմբեր-Նոյեմբեր, 1888։

5.–Միքայէլեան Ռ., «Յեղափոխականի մտքեր»ը, Աթէնք, 1931։

6.–«Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան (1890-1950)», հրատ. Հ.Յ.Դ. Բիւրոյի, Պոսթըն, 1950։

7.–Վարանդեան Մ., «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», Ա. հատոր Փարիզ, 1932։

8.-Ter Minassian A., *"Nationalism and Socialism in the Armenian Revolutionary Movement", Cambridge, 1984.*

digitised by A.R.A.R.@

Վ.ՍՈԼՈՎԵՎ

ԵՐԵՔ ՁՐՈՅՑՆԵՐ

Այսօր, երբ մենք կարծես թէ հրաժեշտ ենք տալիս ռուսական մշակոյթին, երբ երեւում են այն երեւոյթի նշանները, որ զալիք սերունդի մտաւորականների մէջ այլեւս չեն լինի ռուսական կրթութիւն ունեցող հայեր, անհրաժեշտ է շտապել ռուս գրականութեան եւ փիլիսոփայութեան գանձերը թարգմանելու մէջ։ Դանի դեռ կենդանի են ռուսական կրթութիւն ունեցողները, անհրաժեշտ է մեր ժողովրդի սեփականութիւնը դարձնել Սոլժենիցինի, Բերդեաեւի, Ֆրանկի, Վիշեսլաւցեւի, Շեստովի եւ շատ ուրիշների ստեղծագործութիւնները, որոնց մէջ, անշուշտ, առաջինը պիտի լինի փայլուն փիլիսոփայ Վլադիմիր Սոլովեւը։ Նրա աշխատութիւնները, արեւմտեան մասնագէտների գնահատականով, չեն կարող հնանալ, քանի դեռ գոյութիւն ունի մարդը։ Մեր օրերին, երբ սրընթաց փոփոխութիւններ են տեղի ունենում քաղաքական եւ բաղաքական արժէքների դաշտում, երբ դասական մտաւորականութեանը փոխարինել են կրթութիւն ստացածները, երբ արդարութիւնը, ազատութիւնը, հայրենասիրութիւնը, իրաւունքը, սէրը դարձել են ո՛չ թէ բացարձակ, այլ՝ միայն յարաբերական արժէքներ, երբ զինուորներին առաջարկում են չենթարկուել հրամանատարի հրամաններին, իսկ հայ-ադրբեջանական բախման մէջ նոյն մակարդակի վրայ են դրւում դահիճը եւ զոհը, մեզ օգնութեան են հասնում ռուս փիլիսոփաները, որոնք շատ լաւ գիտեն սեփական ժողովուրդը եւ որոնց ճշմարտութիւնները տնժամանցելի են։

Այսօր, ինչպէս 100 եւ 1000 տարի առաջ, մենք որոնում ենք այն հարցի պատասխանը, թէ արդեօք Բրիստոնէական «Մի սպանիր» սկզբունքը բացառո՞ւմ է պատերազմը եւ ազգային ազատագրական պայքարը, թէ արդեօք չարիք կրող մարդու ապանութիւնը յանցագործութիւն է։

Ո՞րն է կարեւոր զինուորի համար. հրամա՞նը, թէ՞ հրամանի բովանդակութիւնը։

Ի՞նչ վերաբերմունք ունէին առաջին հայկական ջարդերի նկատմամբ Ռուսաստանի մտաւորականները։

Ի՞նչ արժէք ունի հայրենասիրական զգացմունքը կայսրութեան նկատմամբ։

Բոլոր այս հարցերին պատասխանում է Վլադիմիր Սոլովեւը, որի ժողովածուն ի վերջոյ, 1990 թուականին հրատարակուեց

digitised by A.R.A.R.@

նրա հայրենիքում։ Նրա աշխատութիւնների մէջ կայ մէկը, որը հեղինակի իսկ խոստովանութեամբ ամենակարեւորն է։ Այդ աշխատութիւնը կոչւում է *«Երեք զրոյցներ»*, որոնք վարում են հինգ հոգի,– ծերացած մարտական մի զօրավար, Քաղաքագէտ, երիտասարդ մի իշխան, որը ունի յեղափոխական տրամադրութիւններ, միջին տարիքի հետաքրքրասէր մի կին եւ մի պարոն, որին հեղինակը անուանում է պարոն Զ. եւ որի բերանով հեղինակը արտայայտում է սեփական մտքերը։

*«Երեք զրոյցներ»*ից մեր ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում միայն առաջինը, ա՛յն յոյով, որ մնացած զրոյցները կը թարգմանուեն ու կը հրատարակուեն Հայաստանում։ Աւելի՛ն վատ չէր լինի, որ Հայաստանի ռուսալեզու հանդէսները, օրինակ, *«Լիտերատուրնայա Արմենիա»*ն հենց ռուսերէնով հրատարակէր Սոլովեւի այդ ստեղծագործութիւնը, որը կարող է մեծ ազդեցութիւն թողնել ռուսների վրայ։ Հաստատոր փիլիսոփայական աշխատութիւնները այսօր կարդում են միայն մասնագէտները, իսկ հանդէսներում հրատարակուած յօդուածները, այս կամ այն ճամբով՝ հասնում են ժողովրդին։

Է. Յովհաննիսեան

* * *

ԶՐՈՅՑ ԱՌԱՋԻՆ

ԶՕՐԱՎԱՐ (նստում է յուզուած, տեղից բարձրանալով ու կրկին նստելով, ձեռքերը արագ շարժելով).– *Ո՛չ, թոյլ տուէք ինձ հարցնել, պատասխանեցէք միայն մէկ հարցի. գոյութիւն ունի՞ այսօր Ռուսաստանի քրիստոնէասէր եւ հայրենասէր բանակ։ Այո՞, թէ՞ ոչ։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.– *Գոյութիւն ունի՞ արդեօք ռուսական բանակ։ Հաւանաբար, ունի։ Մի՞թէ ձեզ լուր է հասել, թէ նա ցրուած է։*

ԶՕՐԱՎԱՐ.– *Դերասանութիւն մի արէք, դուք շատ լաւ հասկացաք, որ իմ խօսքս այդ մասին չէ։ Ես հարցնում եմ. ունե՞մ ես նախկինի պէս բանակը յարգելու իրաւունքը, այն նկատառումով, որ այդ բանակը ունի քրիստոնէասէր ու հայրենասէր զինուորներ։ Թէ՞ նման ածա-*

digitised by A.R.A.R.@

կանները զինուորների համար այլեւս անտեղի են ու պիտի փոխարինուեն ուրիշ ածականներով։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Ահա՛ թէ ինչն է ձեզ մտահոգում։ Ես կարծեմ, որ այդ հարցով դուք սխալ տեղ էք դիմել։ Աւելի լաւ կը լինէր, որ դուք դիմէիք պարգեւների վարչութեանը, չէ՞ որ նրանք են տարբեր կոչումներով զբաղւում։*

ՊԱՐՈՆ Զ.— *Իսկ պարգեւների վարչութիւնը զօրավարի հարցումին, հաւանաբար, կը պատասխանի, որ նախկին կոչումների օգտագործումը օրէնքով արգելուած չէ։ Մի՞թէ վերջին Լուսինեանը չէ՞ր կոչւում Կիպրոսի թագաւոր, չնայած նրան, որ ո՛չ միայն Կիպրոսը ղեկավարելու, այլ Կիպրոսի գինի խմելու ընդունակ չէր՝ իր նիւթական եւ առողջական վիճակի բերումով։ Ուրեմն՝ ինչու՞ ժամանակից բանակը չկոչել քրիստոնէասէր զինուորութիւն։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Կոչե՛լ։ Ուրեմն՝ սեւը եւ սպիտակը կոչումնե՞ր են։ Քաղցրը եւ դառը կոչումնե՞ր են։ Հերոսը եւ սրիկան՝ կոչումնե՞ր են։*

ՊԱՐՈՆ Զ.— *Սակայն ես չխօսեցի իմ կողմից, ես միայն օրէնք հսկողների անունից խօսեցի։*

ՏԻԿԻՆ (Դիմելով Քաղաքագէտին).— *Ինչու՞ էք ձեր շեշտը դնում խօսքերի վրայ։ Հաւանաբար զօրավարը ուզում էր մի ինչ-որ բան նշել, երբ օգտագործեց քրիստոնէասէր զինուորականութիւն հասկացութիւնը։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Շնորհակալ եմ ձեզանից։ Ես ուզում էի ասել եւ ասում եմ հետեւեալը։ Դարերից ի վեր, մինչեւ երէկուայ օրը, ամէն մի զինուորական՝ պարզ զինուորից մինչեւ ֆելդմարշալ, գիտէր եւ զգում էր, որ ինքը ծառայում է կարեւոր եւ լաւ գործի։ Ո՛չ միայն օգտակար գործի, ինչպէս օգտակար են լուացքը կամ աղը թափելը, այլեւ՝ բարձր իմաստով լաւ, ազնիւ ու պատուոյ գործի, որին ծառայել են լաւագոյն եւ առաջնակարգ անձեր, ժողովրդի առաջնորդները, հերոսները։ Մեր այդ գործը մեծարւում ու լուսաւորւում էր եկեղեցիներում, փառաբանւում էր ժողովրդի մէջ։ Եւ յանկարծ, մի գեղեցիկ առաւօտ, մեզ ասում են, որ մենք այդ ամէնը պէտք է մոռանանք եւ մեր տեղը Աստուծոյ աշխարհում ճիշտ հակառակ ղիրքերի վրայ է։ Գործը, որին մենք ծառայում էինք եւ ինչով պարծենում էինք, յայտարարուած է վատ, կործանիչ եւ անընդունելի գործ։ Պարզւում է, որ Աստուծոյ պատուիրանների եւ մարդկային զգացումների համաձայն այդ գործը չարիք է եւ աղէտ, որի դէմ պայքարելու եւ վերջնականապէս ոչընչացնելու համար պէտք է միանան բոլոր ժողովուրդները եւ որ նրա վերջնական կործանումը միայն ժամանակի հարց է։*

ԻՇԽԱՆ.— *Այսինքն, մի՞թէ դուք երբեք չէիք լսել, որ մարդիկ դատապարտում են պատերազմը եւ զինուորական ծառայութիւնը դիտում են որպէս նախնադարեան մարդակերութեան մնացուկ։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Դէ, ինչպէ՞ս չէ։ Լսել ու կարդացել եմ տարբեր լեզուներով։ Բայց բոլոր ձեր այդ ձայները, ներեցէք անկեղծութեանս համար, մեզ թւում էին դատարկ խօսքեր, մենք նրանց վրայ ուշադրութիւն չէինք դարձնում, լսում եւ մոռացութեան էինք մատնում։ Բայց այժմ կացութիւնը փոխուել է, ուշադրութիւն չե՛ս կարող չդարձնել։ Եւ ահա ես հարցնում եմ. մենք ի՞նչ պիտի անենք։ Ամէն մի զինուորական՝ ինքը իրեն ի՞նչ պիտի համարի, ի՞նչ է ինքը իր սեփական աչքում. իսկական մա՞րդ, թէ՞ մարդկային ցեղի ճիւաղ։ Պէ՞տք է ես ինձ յարգեմ՝ կարեւոր ու բարի գործի՞ն ծառայելու համար, թէ՞ պի-*

digitised by A.R.A.R.@

տի սարսափեմ իմ անցած ճանապարհից, զղջամ եւ ծերագիր աղաչեմ բոլոր քաղաքացիներից, որ ինձ ներեն իմ մասնագիտական բարբարոսութիւնը։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Սա ի՞նչ երեւակայական հարցի դրուածք է։ Կարծես թէ ձեզանից մի յատուկ բան է պահանջւում։ Նոր պահանջները ուղղուած են ո՛չ թէ ձեզ, այլ՝ դիւանագէտներին եւ այլ քաղաքացիական ծառայութիւններին, որոնք շատ քիչ են հետաքրքրւում թէ՛ ձեր մեղքերով եւ թէ ձեր քրիստոնէութեամբ։ Իսկ ձեզ, առաջուայ նման, ներկայացւում է մէկ պահանջ. առանց վերապահութիւնների կատարել հրամանատարութեան հրամանները։

ԶՕՐԱՎԱՐ.— Քանի որ դուք չէք հետաքրքրւում զինուորական գործով, ապա այդ գործի մասին դուք ունէք միայն երեւակայական պատկերացումներ։ Դուք, հաւանաբար, չգիտէք, որ կան դէպքեր, երբ հրամանատարի հրամանը կայանում է նրանում, որ դուք չսպասէք նրա հրամանին ու նրանից չհարցնէք, թէ ի՞նչ պէտք է անել։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Ի՞նչ էք ուզում ասել։

ԶՕՐԱՎԱՐ.— Պատկերացրէք, որ հրամանատարութեան կամքով ես նշանակուած եմ մի ամբողջ շրջանի ղեկավար, ինչը նշանակում է, որ ես պէտք է ամրապնդեմ զինուորների մարտական ոգին ու դաստիարակեմ նրանց։ Այս նպատակի համար ինձ տրուած է իմ անունից հրամաններ արձակելու իրաւունքը։ Բայց եթէ ես իմ հրամանատարներից խնդրեմ, որ նրանք արձակեն հրամաններ, նրանք թելադրեն ինձ իմ անելիքները եւ կամ գոնէ ինձ խորհուրդներ տան, առաջին անգամ ինձ կ՛անուանեն «ծերացած ապուշ», իսկ երկրորդ անգամ ինձ կը պաշտօնազրկեն։ Սա նշանակում է, որ ես պէտք է ղեկավարեմ ինձ վստահուած գօրքերը այն ոգով, որը նախօրօք եւ մէկընդմիշտ որոշուած է ու հաստատուած վերին հրամանատարութեան կողմից։ Հարցնել այդ մասին կա՛մ յիմարութիւն է, կա՛մ յանդգնութիւն։ Իսկ այժմ այդ «մէկընդմիշտ» որոշուած ոգին, որը նոյնն էր Աշուրբանիպալից մինչեւ Վիլհելմ 2րդ, այսօր կասկածի տակ է դրւում։ Մինչեւ երէկուայ օրը ես գիտէի, որ իմ զինուորներին ես պէտք է ներշնչեմ ո՛չ թէ մի ինչ-որ ոգի, այլ՝ սոսկ մարտական ոգի, այսինքն՝ ամէն զինուորի պարտականութիւնը՝ կոտորել թշնամուն եւ սպանուել հարկ եղած դէպքում։ Բայց դրա համար զինուորը պէտք է համոզուած լինի, որ պատերազմը սուրբ գործ է, իսկ նրանից այդ բանը խլում են եւ զինուորական գործը կորցնում է իր բարոյական եւ կրօնական հիմքերը։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Այս ամէնը չափազանցուած է։ Տեսակէտների մէջ ոչ մէկ արմատական փոփոխութիւն չի նկատւում։ Մէկ կողմից բոլորը գիտեն, որ պատերազմը չարիք է եւ որքան քիչ պատերազմ, այնքան լաւ, միւս կողմից՝ բոլոր լուրջ մարդիկ այսօր էլ հասկանում են, որ դա այնպիսի չարիք է, որը մեր օրերին ամբողջովին վերացնելը անկարելի է։ Ուրեմն, խօսքը ոչ թէ պատերազմների ոչնչացման, այլ նրանց նեղ սահմանների մէջ դնելու մասին է։ Իսկ սկզբունքային տեսակէտը պատերազմի մասին մնում է անփոփոխ՝ անխուսափելի չարիք, որը հանդուրժելի է միայն ծայրայեղ դէպքում։

ԶՕՐԱՎԱՐ.— Միա՞յն։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Միայ՛ն։

ԶՕՐԱՎԱՐ (Ցատկելով տեղից).— Իսկ դուք սրբերի գիրքը թերթե՞լ էք։

digitised by A.R.A.R.@

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Այսինքն օրացո՞յցը։ Այո, թերթել եմ, անուանակոչիկնե-րի մասին տեղեկութիւններ հաւաքելու համար։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Իսկ նկատեցի՞ք, ովքեր են մեր սրբերը։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Սրբերը տարբեր են լինում։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Բայց նկատեցի՞ք նրանց կոչումները։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Կոչումներն էլ տարբեր են։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Հենց նրանումն է հարցը, որ ոչ, տարբեր չեն։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Մի՞թէ նրանք բոլորը զինուորականներ են։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Ոչ բոլորը, բայց կէսը։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Նորից չափազանցութիւն։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Վիճակագրական տուեալներ չէ, որ մենք հաւաքում ենք։ Ես միայն պնդում եմ, որ մեր ռուսական եկեղեցու սրբերը պատկանում են միայն երկու դասի. կա՛մ հոգեւորականներ են եւ կամ էլ զինուորականներ, ուրիշ սրբեր մենք չունենք։ Կա՛մ հոգեւորական է, կա՛մ զինուոր։*

ՏԻԿԻՆ.— *Իսկ Աստուծոյ խենթերին մոռացա՞ք։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Ո՛չ, չմոռացայ, բայց Աստուծոյ խենթերը ոչ-օրինականացուած հոգեւորականներ են։ Այն, ինչ կոզակներն են զօրքի համար, այն էլ Աստուծոյ խենթերն են հոգեւորականութեան համար։ Եթէ դուք գտնէք սրբերի մէջ գոնէ մէկ հատ ամուսնացած հոգեւորական կամ առեւտրական, ծառայող, գիւղացի, քաղքենի, մի խօսքով՝ որեւէ այլ մասնագիտութեան տէր, բացի հոգեւորականից ու զինուորից, ձեզ կարող էք վերցնել այն ամէնը, ինչ եկող Կիրակի օրը կը բերեմ Մոնտէ-Կառլոյից։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Շնորհակալ եմ, ձեր գանձերը թողնում եմ ձեզ սրբերի հետ միասին։ Միայն թէ ուզում եմ հասկանալ, թէ ի՞նչ կարելի է եզրակացնել ձեր յայտարարութիւնից։ Մի՞թէ այն, որ միայն հոգեւորականները եւ զինուորականները կարող են լինել բարոյական տիպարներ։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Կռահումը այնքան էլ ճիշտ չէր։ Ես անձամբ շատ բարոյական անձնաւորութիւններ եմ տեսել գիւղացիների, ծառայողների, դրամատէրերի մէջ, իսկ ամենաազնիւ անձնաւորութիւնները իմ բարեկամներից մէկի դայեակն էր։ Բայց մենք այդ մասին չենք խօսում։ Սրբերին ես յիշեցի այն առումով, որ ինչպէ՞ս կարող էին այդքան զինուորներ սրբերի շարքը մտնել, եթէ զինուորական գործը անտանելի չարիք լինէր։ Մեզ համար պարզ է դառնում, որ քրիստոնեայ ժողովուրդները ո՛չ միայն յարգում, այլեւ յատուկ յարգանք ունեն զինուորականների նկատմամբ եւ համարում էին, որ երկրային մասնագիտութիւններից զինուորական մասնագիտութիւնը միակն էր, որ կարողանում էր սրբեր դաստիարակել։ Այ, հենց այդ տեսակէտը անհամատեղելի է՝ պատերազմի դէմ այսօր կատարուող արշաւների հետ։*

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— *Մի՞թէ ես ասացի, որ ոչ մէկ փոփոխութիւններ տեղի չեն ունենում։ Անկասկած ցանկալի որոշ փոփոխութիւններ տեղի են ունենում։ Կրօնական թագը, որով ամբոխի աչքում պսակուած էին պատերազմները եւ զինուորականները, այժմ հանում է, դա այդպէս է։ Բայց դրան մենք արդէն վաղուց նախապատրաստուում էինք։ Եւ իրականում դա ու՞մն է խանգարում։ Գուցէ հոգեւորականներին, որոնց պարտականութիւնների մէջ է մտնում թագեր պատրաստելը։ Հաւանաբար, նրանք ստիպուած կը լինեն վերանայելու որոշ արտ-*

digitised by A.R.A.R.@

ժէքներ։ Ինչից անկարելի կը լինի հրաժարուել, նրանք կը բացատրեն թաքնուած ձեւով, իսկ մնացածի մասին, խելացիօրէն կը լռեն ու մոռացութեան կը մատնեն։

ԻՇԽԱՆ.— Եւ արդէն սկսուել են յարմարուելու ընթացքները։ Ես իմ հրատարակութիւնների համար ծանօթանում եմ մեր հոգեւորական գրականութեան հետ։ Եւ արդէն երկու հանդէսներում կարդացի, որ քրիստոնէութիւնը դատապարտում է պատերազմը։

ԶՕՐԱՎԱՐ.— Չի կարող պատահել։

ԻՇԽԱՆ.— Ես ինքս չէի հաւատում աչքերիս, բայց կարող եմ ցոյց տալ։

ՔԱՂԱՔԱԳԷՏ (Դիմելով զօրավարին).— Տեսնո՞ւմ էք։ Բայց դուք այս առիթով ի՞նչ մտահոգութիւն ունէք։ Չէ՞ որ գործի, այլ ոչ գեղեցիկ ճառերի մարդիկ էք։ Մասնագիտական ինքնասիրութի՞ւնը, թէ՞ փառասիրութիւնն է ձեզ մտահոգում։ Եթէ այդպէս է, դա լաւ բան չէ։ Իսկ գործնականում, կրկնում եմ, ձեզ համար ամէն ինչ մնում է նախկինի պէս։ Չնայած նրան, որ այն ռազմատենչութիւնը, որը ահա արդէն 30 տարի է, ինչ մարդկանց շնչելու հնարաւորութիւն չի տալիս, որը պէտք է այժմ վերանայ, այնուամենայնիւ, զօրքերը որոշակի սահմաններում մնում են։ Եւ քանզի նրանց գոյութիւնը օրինականացուած է, նախկինի պէս նրանցից կը պահանջուի մարտունակութիւն։

ԶՕՐԱՎԱՐ.— Այո, դուք սատկած եզից կաթ խնդրելու մասնագէտներ էք։ Իսկ ձեզ ո՞վ կը տայ անհրաժեշտ այդ մարտական յատկութիւնները, եթէ յատկութիւններից կարեւորագոյնը ոգու առողջ լինելն է, մարտական ոգեւորուածութիւնը, որը յենւում է իր գործի սուրբ լինելու հաւատքի վրայ։ Ինչպէ՞ս պիտի ծնուի այդ ոգեւորուածութիւնը, եթէ պատերազմը ճանաչուի չարիք ու ոճրագործութիւն, որին ծայրայեղ դէպքում ստիպուած դիմում են։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Բայց զինուորականներից ամենեւին էլ նման խոստովանութիւն չի պահանջւում։ Թող իրենք իրենց համարեն աշխարհի ամենաառաջատար խաւ, ո՞ւմն է դա հետաքրքրում։ Չէ՞ որ ձեզ արդէն բացատրեցին, որ թագաժառանգ Լուսինեանին թոյլ տուեցին, որ ինքը իրեն Կիպրոսի թագաւոր ճանաչի, միայն թէ մեզանից Կիպրոսի գինի ըմպելու համար դրամ չխնդրի։ Ունեցութիւններ մի ունեցէք մեր զրպանի դրամի վրայ, աւելի քան պահանջւում է, ապա կարող էք ձեր աչքում լինել աշխարհի աղը եւ մարդկութեան լաւագոյն տիպարը։ Ո՞վ է ձեզ խանգարում։

ԶՕՐԱՎԱՐ.— «Ձեր աչքում կարող էք լինել»։ Ի՞նչ է, լուսնի վրա՞յ ենք վարում մեր այս խօսակցութիւնը։ Տորիչելեան դատարկութեան մէջ պիտի պահենք զինուորներին, որ նրանց ականջին ոչ մէկ խօսակցութիւն չհասնի։ Եւ դա պիտի արուի համընդհանուր զինուորական ծառայութեան եւ ժամանակին թերթերի քարոզչութեան պայմաններում։ Ոչ, ամէն ինչ արդէն պարզ է։ Եթէ զինուորական ծառայութիւնը գարձել է ստիպողական պարտականութիւն բոլորի համար եւ եթէ սկսած կառավարութեան ներկայացուցիչներից, հենց ձեզանից, բացասական գնահատական է տրւում զինուորական գործին, ապա այդ տեսակէտը իւրացնելու են նաեւ զինուորները։ Եթէ բոլորը, սկսած հրամանատարներից, զինուորական ծառայութիւնը դիտեն որպէս առայժմ անխուսափելի չարիք, ապա նախ ոչ մէկը կամաւոր կարգով զինուորական մասնագիտութիւն չի ընտրի, բացի որոշ թափթփուկներից, որոնք ուրիշ բանի ընդունակ չեն, իսկ յետոյ,

digitised by A.R.A.R.@

ժամանակաւոր զինծառայողները իրենց պարտականութիւնները կը կատարեն այն զգացմունքով, որով բանտարկեալները կրում են իրենց շղթաները։

Ինչպէ՞ս պիտի այս պայմաններում մենք խօսենք մարտական յատկութիւնների ու ոգու մասին։

ՊԱՐՈՆ Զ.— *Ես միշտ համարում էի, որ համընդհանուր զինուորական ծառայութեան օրէնքը ընդունելուց յետոյ զօրքերի, ինչպէս նաեւ առանձին պետութիւնների վերացումը միայն ժամանակի հարց է։ Իսկ պատմական մեր արագընթացի պայմաններում, այդ ժամանակը երկար չի տեւի։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Հաւանաբար, դուք իրաւացի էք։*

ԻՇԽԱՆ.— *Իսկ ես համոզուած եմ, որ դո՛ւք իրաւացի էք, չնայած նրան, որ ինքս երբեք այդպէս չեմ մտածել։ Բայց դա սքանչելի է։ Պատկերացնում էք, ռազմատենչութիւնը առաջացնում է համընդհանուր զինուորական ծառայութիւն, որը ո՛չ միայն կործանում է ռազմատենչութիւնը, այլեւ՝ հին աշխարհի զինուորական վարչակարգերի հիմքերը։ Սքանչելի է։*

ՏԻԿԻՆ.— *Նոյնիսկ իշխանի երեսը լուսաւորուեց։ Դա լաւ է, թէ չէ՝ նա միշտ մռայլ էր, ինչը իսկական քրիստոնեայի վայել չէ։*

ԻՇԽԱՆ.— *Ցիրաւի, շատ տխուր է մեր իրականութիւնը։ Միայն մէկ ուրախութիւն է մեզ մնում, այն միտքը, որ տրամաբանութիւնը անխուսափելիօրէն յաղթելու է։*

ՊԱՐՈՆ Զ.— *Այն, որ ռազմատենչութիւնը Եւրոպայում եւ Ռուսաստանում ինքը իրեն կործանում է, դա փաստ է։ Բայց ի՞նչ ուրախութիւններ ու խնդութիւններ է նա բերելու իր հետ, դա դեռ կը տեսնենք։*

ԻՇԽԱՆ.— *Ինչպէ՞ս. մի՞թէ դուք կասկածում էք, որ պատերազմը եւ զինուորականութիւնը ծայրայեղ եւ բացարձակ չարիքներ են, որոնցից մարդիկ պէտք է անմիջապէս ազատուեն։ Դուք կասկածո՞ւմ էք, որ այս մարդկութեան վերջնական ոչնչացումը առնուազն տրամաբանութեան յաղթանակ կը լինի։*

ՊԱՐՈՆ Զ.— *Ես համոզուած եմ ճիշտ հակառակի մէջ։*

ԻՇԽԱՆ.— *Այսինքն ինչու՞մ։*

ՊԱՐՈՆ Զ.— *Նրանում, որ պատերազմը բացարձակ չարիք չէ, իսկ խաղաղութիւնը բացարձակ բարիք։ Կամ աւելի ճիշտ՝ այսպէս. լինում է լաւ պատերազմ եւ վատ խաղաղութիւն։*

ԻՇԽԱՆ.— *Այժմ ես հասկացայ ձեր եւ զօրավարի տեսակէտների տարբերութիւնը։ Զօրավարը համարում է, որ պատերազմը միշտ լաւ է, իսկ խաղաղութիւնը՝ վատ։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Ո՛չ, ո՛չ, ես շատ լաւ հասկանում եմ, որ պատերազմը երբեմն լինում է շատ վատ բան, երբ մեզ չարդում են, օրինակ, Նարվայի տակ կամ Աուստերլիցում։ Եւ խաղաղութիւնն էլ կարող է լաւը լինել, օրինակ, Նիշտադի կամ Քուչուք-Քայնարջիրի խաղաղութիւնը։*

ՏԻԿԻՆ.— *Սա շատ նման է այն սեւամորթի արտայայտութեանը, որը ասում էր հոգեւորականին, թէ ինքը շատ լաւ է հասկանում չարի եւ բարու տարբերութիւնը։ Բարին այն է, որ ես գողանում եմ ուրիշի կանանց ու կովերին, իսկ չարը, երբ գողանում են ինձանից։*

ԶՕՐԱՎԱՐ.— *Սեւամորթի տեսակէտը կարելի է կատակ համարել, բայց ցանկալի կը լինէր լսել, թէ ինչպէ՞ս են խելացի մարդիկ քննարկում բարոյական տեսանկիւնից պատերազմի հարցը։*

digitised by A.R.A.R.@

ՔԱՂԱՔԱԴԵՏ.— *Միայն թէ մեր «խելացիները» մեթաֆիզիկա չմտցնեն այս պարզ հարցի մէջ։*

ԻՇԽԱՆ.— *Այդ ո՞ր իմաստով է հարցը այդքան պարզ։*

ՔԱՂԱՔԱԴԵՏ.— *Իմ տեսակէտը շատ սովորական, եւրոպական տեսակէտ է, որը արդէն ուրիշ երկրների կրթուած ներկայացուցիչները նոյնպէս ընդունում են։*

ԻՇԽԱՆ.— *Իսկ այդ տեսակէտի էութիւնը, անշուշտ, կայանում է նրանում, որ ամէն ինչ յարաբերական է եւ շեշտուած տարբերութիւն գոյութիւն չունի անհրաժեշտի եւ ոչ-անհրաժեշտի, լաւի ու վատի միջեւ։ Այդպէս չէ՞։*

ՊԱՐՈՆ.— *Ներեցէք, մեր վէճի մէջ նման դիտողութիւնները օգտակար չեն։ Ես, օրինակ, միանգամայն ընդունում եմ բարու եւ չարի հակադրուածութիւնը, սակայն դրա հետ միասին ինձ համար պարզ է, որ պատերազմը եւ խաղաղութիւնը այս ոլորտում չեն եւ բոլոր պատերազմները ներկայացնել որպէս սեւ, իսկ խաղաղութիւնները՝ որպէս սպիտակ, անկարելի է։*

ԻՇԽԱՆ.— *Բայց սա ներքին հակասութիւն է։ Եթէ որեւէ բան, ինքնըստինքեան չարիք է, օրինակ, սպանութիւնը, եւ կարող է որոշ դէպքում բարիք դառնալ, հապա ու՞ր մնաց բարիի եւ չարի բացարձակ տարբերութիւնը։*

ՊԱՐՈՆ Զ.— *Որքան պարզամիտ է ձեր դատողութիւնը. «Ամէն մի սպանութիւն բացարձակ չարիք է, պատերազմը՝ սպանութիւն է, ուրեմն՝ պատերազմը բացարձակ չարիք է»։ Տրամաբանութիւնը անհերքելի է, սակայն դուք մոռացել էք, որ ձեր երկու նախադրեալները, թէ՛ մեծը եւ թէ փոքրը, պէտք է ապացուցուեն, ուստի՝ ձեր եզրակացութիւնը դեռեւս մնում է օդից կախուած։*

ՔԱՂԱՔԱԴԵՏ.— *Մի՞թէ ես չասացի, որ ընկնելու են մեթաֆիզիկայի մէջ։*

ՏԻԿԻՆ.— *Ինչի՞ մասին են սրանք խօսում։*

ՔԱՂԱՔԱԴԵՏ.— *Ինչ-որ մեծ ու փոքր նախադրեալների մասին։*

ՊԱՐՈՆ Զ.— *Ներեցէք, մենք հիմա բուն նիւթին կը մօտենանք։ Դուք, ուրեմն, պնդում էք, որ սպանութիւնը, այսինքն՝ մէկ ուրիշի կեանքը խլելը բացարձակ չարիք է։*

ԻՇԽԱՆ.— *Անկասկած։*

ՊԱՐՈՆ Զ.— *Իսկ սպանուելը, բացարձակ չարի՞ք է, թէ՞ ոչ։*

ԻՇԽԱՆ.— *Աստուածաբանութեան իմաստով, անշուշտ, այո։ Բայց մենք խօսում ենք բարոյական չարիքի մասին, ինչը վերաբերում է գիտակից մարդու գործողութիւններին, այլ ոչ թէ այն բանին, թէ ինչ կը պատահի մարդու հետ առանց նրա կամքի մասնակցութեան։ Սպանուել, դա միեւնոյնն է, ինչ մահանալ հիւանդութիւնից կամ աղէտից։ Սա ո՛չ միայն բացարձակ, այլեւ ընդհանրապէս չարիք չէ։ Այս մասին մեզ պատմեց Սոկրատեսը։*

ՊԱՐՈՆ Զ.— *Այդքան հին մարդկանց համար ես պատասխաններ չունեմ։ Իսկ սպանութեան վերաբերեալ ձեր բարոյական գնահատականը տկար է։ Ձեր տրամաբանութիւնից բխում է այն անհեթեթութիւնը, թէ բացարձակ չարիքը ուրիշին այնպիսի մի բան պատճառելն է, որը ինքնըստինքեան չարիք չէ։ Այստեղ մի ինչ-որ բան սխալ է։ Բայց մենք սխալի մասին չխօսենք, թէ չէ իսկապէս սխոլաստիկայի մէջ կ'ընկնենք։ Այսպիսով, սպանութեան ժամանակ չարիքը ո՛չ թէ մարդուն կեանքից զրկելու մէջ է, այլ՝ այդ փաստի բարոյական պատճառների, սպանողի չար կամքի մէջ։ Այդպէ՞ս է։*

digitised by A.R.A.R.@

ԻՇԽԱՆ.— Անշուշտ, առանց այդ չար կամքի՝ սպանութիւն էլ տեղի չի ունենում։ Պարզապէս կատարւում է դժբախտութիւն կամ անզգուշութիւն։

ՊԱՐՈՆ Զ.— Այստեղ ամէն ինչ պարզ է։ Անյաջող վիրահատութեան ժամանակ, օրինակ, սպանելու կամքը բացակայում է։ Բայց կարող է այնպէս պատահել, որ բացակայում է մարդուն կեանքից զրկելու կամքը, սակայն այդ ելքը նկատւում է որպէս ծայրայեղ անհրաժեշտութիւն։ Զարի՞ք է արդեօք նման սպանութիւնը։

ԻՇԽԱՆ.— Այո, չարիք է, եթէ կամքը համաձայնուեց սպանութեան հետ։

ՊԱՐՈՆ Զ.— Իսկ չի՞ պատահում արդեօք այնպէս, որ կամքը համաձայնւում է սպանութեան հետ, սակայն դա չար կամք չէ, ուստի՝ սպանութիւնն էլ չի կարող որակաւորուել որպէս չարիք, նոյնիսկ այս ենթայական տեսանկիւնից։

ԻՇԽԱՆ.— Սա արդէն բոլորովին անհասկանալի է։ Բայց կռահում եմ՝ դուք ի նկատի ունէք այն հանրայայտ օրինակը, երբ անապատում մի վայրենի հօր աչքի առջեւ յարձակւում է նրա անմեղ աղջկայ վրայ (մեծ տպաւորութիւն թողնելու համար, սովորաբար աւելացնում են, որ այդ աղջիկը անչափահաս էր) բռնաբարելու նպատակով։ Եւ ահա, դժբախտ հայրը իր աղջկան պաշտպանելու ուրիշ միջոցներ չունենալով, սպանում է աւազակին։ Հազար անգամ լսել եմ այս բացատրութիւնը։

ՊԱՐՈՆ Զ.— Ցատկանշականը այն չէ, որ դուք հազար անգամ լսել էք այս պատմութիւնը, այլ այն, որ ձեր կողմնակիցներից եւ ոչ մէկը, ոչ մի անգամ չի կարողացել տրամաբանօրէն առարկել այս պարզ դէպքի խորհրդին։

ԻՇԽԱՆ.— Այստեղ ի՞նչ առարկելու բան կայ։

ՊԱՐՈՆ Զ.— Եթէ դուք առարկել չէք ուզում, ապա որեւէ դրական ձեւով ապացուցէք, որ բոլոր դէպքերում, ուստի եւ՝ մեր դէպքում, չարին ուժով զիմադրելուց հրաժարուելը միշտ աւելի լաւ է, քան ուժի գործադրումը, որի հետեւանքով կարող է սպանուել չար ու վնասակար մարդը։

ԻՇԽԱՆ.— Էլ ի՞նչ ապացոյց է այստեղ հարկաւոր։ Եթէ դուք ընդունում էք, որ սպանութիւնը ընդհանրապէս չարիք է բարոյականութեան իմաստով, ուրեմն՝ բոլոր առանձին սպանութիւնները նոյնպէս չարիք են։

ՏԻԿԻՆ.— Թոյլ ապացոյց է։

ՊԱՐՈՆ Զ.— Դա շատ թոյլ ապացոյց էր, իշխան։ Զէ՞ որ այն մասին, թէ չսպանելը սպանելուց լաւ է՝ վէճ չկայ։ Այս սկզբունքի հետ բոլորը համաձայն են։ Խօսքը առանձին դէպքերի մասին է։ Հարց է տրւում. գոյութիւն ունի՞ արդեօք սպանութիւնից խուսափելու անպայման օրէնք, այսինքն՝ օրէնք, որը բացառութիւն չունի, որի համաձայն ոչ մէկ դէպքում սպանել չի կարելի։ Թէ՞ կայ այնպիսի դէպք, որը թոյլ է տալիս սպանութիւն եւ դարձնում է օրէնքը ոչ անպայման։

ԻՇԽԱՆ.— Ոչ, նման ձեւական մօտեցման հետ ես համաձայն չեմ։ Ինչի՞ կարող է դա յանգեցնել։ Ենթադրենք, ձեր կողմից վէճի համար յատուկ յօրինուած դէպքում սպանելը աւելի լաւ է, քան չսպանելը։ Իրականում ես նման բան թոյլ չեմ տալիս, բայց ենթադրենք, որ այդտեղ դուք ճիշտ էք։ Ենթադրենք, նոյնիսկ, որ ձեր դէպքը յօրինուած չէ, այլ՝ իրական։ Բայց համաձայնուէք, որ ձեր դէպքը շատ բացառիկ է։ Իսկ մենք խօսում ենք պատերազմի մասին, որը

digitised by A.R.A.R.@

համընդհանուր է, համաշխարհային։ Դուք հօ չէք կարող ասել, որ Նապոլէոնը, Մոլտկեն կամ Սկոբելեւը այն նոյն դրութեան մէջ էին, որում գտնւում էր հայրը, որը ջանում էր փրկել իր երեխային վայրենու բռնաբարութիւնից։

ՏԻԿԻՆ.— Սա արդէն նախորդից աւելի ընդունելի բացատրութիւն էր։ Բրաւո՛։

ՊԱՐՈՆ Զ.— Ցաւալի չատ լաւ փախուստ էր անգուր հարցից։ Սակայն թոյլ տուէք ինձ այս երկու երեւոյթների՝ պատերազմի եւ առանձին սպանութեան միջեւ գտնել նրանց տրամաբանական եւ պատմական կապը։ Բայց դրա համար վերադառնանք մեր դէպքին, սակայն առանց այն մասնաւորութիւններին, որոնք կարծես թէ կոչուած են ուժեղացնելու, բայց իրականում թուլացնում են օրինակը։ Պէտք չէ ո՛չ հայր, ո՛չ անչափահաս աղջիկ, քանզի նրանց ներկայութիւնը զրկում է օրինակը բարոյական բովանդակութիւնից եւ մեզ տանում է զգացումների աշխարհ։ Մնողի սէրը, անշուշտ, կը ստիպի նրան անմիջապէս սպանել չարագործին, առանց մտածելու, թէ որքանով այդ սպանութիւնը բարոյական է։ Ուրեմն՝ վերցնենք ո՛չ թէ հօրը, այլ՝ զաւակ չունեցող մի մարդու, որի աչքերի առջեւ մի թոյլ էակ ենթարկւում է բռնութեան։ Ի՞նչ էք կարծում, բարոյական այդ անձնաւորութիւնը պէտք է ձեռքերը ծալած բարոյականութի՞ւն քարոզի, երբ կատաղած վայրենին բռնաբարում է իր զոհին։ Մի՞թէ բարոյական այդ մարդու մէջ չի՞ արթնանալու վայրենուն կանգնեցնելու եւ նրան նոյնիսկ սպանելու արդար զգացմունքը։ Եւ եթէ նա թոյլ տայ, որ քարոզների զեղեցիկ երաժշտութեան տակ կատարուի այդ բռնութիւնը, չի՞ ունենալու նա խղճի խայթ ու չի՞ զգուելու սեփական անձից։

ԻՇԽԱՆ.— Գուցէ այն ամէնը, ինչի մասին դուք ասացիք, իրօք զգայ այն բարոյական մարդը, որը իրականում չի հաւատում բարոյական կարգին, որը մոռացել է, որ Աստուած ոչ թէ ուժի, այլ ճշմարտութեան մէջ է։

ՏԻԿԻՆ.— Շատ լաւ է ասուած։ Ի՞նչ պիտի դուք այժմ պատասխանէք։

ՊԱՐՈՆ Զ.— Ես կը պատասխանեմ, որ այս միտքը պէտք է աւելի լաւ արտայայտուի, աւելի մօտ իրականութեանը։ Դուք ուզեցիք ասել, որ Աստծուն հաւատացող մարդը չպէտք է ուժով կանգնեցնի չարագործին, այլ պէտք է դիմի Աստծուն աղօթքով, որպէսզի չարագործութիւնը տեղի չունենայ։ Այսինքն՝ կատարուի բարոյական հրաշք եւ չարագործը կանգնի ճշմարիտ ճանապարհի վրայ, եւ կամ էլ կատարուի ֆիզիքական հրաշք եւ չարագործը անսպասելիօրէն ստանայ ուղեղի ցնցում։

ՏԻԿԻՆ.— Ուղեղի ցնցում էլ պէտք չէ, չարագործը կարող է մի ինչ-որ բանից վախենալ, սթափուել ու հրաժարուել իր մտադրութիւնից։

ՊԱՐՈՆ Զ.— Դա նոյն բանն է, որովհետեւ հրաշքը ո՛չ թէ դէպքի , այլ աղօթքի արդիւնքի մէջ է։ Այսպէս թէ այնպէս, իշխանի կոդմից առաջարկուած վարքագիծը՝ աղօթքն է։

ԻՇԽԱՆ.— Բայց ինչու՞ անպայման աղօթք, հրաշք...

ՊԱՐՈՆ Զ.— Հապա ի՞նչ։

ԻՇԽԱՆ.— Եթէ ես հաւատում եմ, որ աշխարհը զեկավարւում է բարի եւ տրամաբանական սկզբունքով, ուրեմն՝ ես հաւատում եմ, որ աշխարհում ամէն ինչ կատարւում է այդ սկզբունքի, այսինքն՝ Աստուծոյ կամքի համաձայն։

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՆ Զ.— Ներեցէք, դուք քանի՞ տարեկան էք։
ԻՇԽԱՆ.— Ի՞նչ է նշանակում ձեր հարցը։
ՊԱՐՈՆ Զ.— Իմ հարցի մէջ ոչ մէկ վիրաւորական բան չկայ։ 30 տարեկան հօ կաք։
ԻՇԽԱՆ.— Աւելին։
ՊԱՐՈՆ Զ.— Ուրեմն՝ դուք տեսել, լսել կամ կարդացել էք, որ չարագործութիւններ այս աշխարհում, այնուամենայնիւ, կատարւում են։
ԻՇԽԱՆ.— Ցեռոյ ի՞նչ։
ՊԱՐՈՆ Զ.— Ուրեմն՝ բարոյական կարգը եւ Աստուծոյ կամքը ինքնըստինքեան աշխարհում գոյութիւն չունեն։
ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Վերջապէս մտածեցանք իրականութեանը։ Եթէ չարը գոյութիւն ունի, ուրեմն՝ աստուածները չեն կարողանում կամ չեն ցանկանում նրան խանգարել։ Երկու դէպքումն էլ աստուածները որպէս բարի եւ հզօր ուժեր գոյութիւն չունեն։ Հին, բայց ճշմարիտ խօսք է։
ՏԻԿԻՆ.— Ինչպէ՞ս կարող էք նման բան ասել։
ՋՕՐԱՎԱՐ.— Ահա թէ որտեղ եկանք։ Փիլիսոփայութիւնը ուզեղ կը ցնդեցնի։
ԻՇԽԱՆ.— Խօսքը վատ փիլիսոփայութեան մասին է։ Կարծես թէ Աստուծոյ կամքը մի ինչ-որ ձեւով կապ ունի բարու եւ չարի նկատմամբ մեր պատասխանների հետ։
ՊԱՐՈՆ Զ.— Որեւէ պատկերացումների հետ կապ չունի, բայց բարու իսկական նշանակութեան հետ սերտօրէն կապուած է։ Որովհետեւ, եթէ բարու եւ չարի նկատմամբ Աստուած անտարբեր է, ապա դուք ձեզ ինքներդ վերջնականապէս հերքում էք։
ԻՇԽԱՆ.— Ինչու՞ այդպէս։
ՊԱՐՈՆ Զ.— Որովհետեւ, եթէ Աստուած անտարբեր է մի վայրենու նկատմամբ, որը կրքերի ազդեցութեան տակ բռնաբարում է մի թոյլ էակի, ուրեմն՝ առաւել եւս նա չի առարկի, եթէ խղճահարութեան ազդեցութեան տակ մեզանից մէկը ոչնչացնի սրիկային։ Կարծում եմ, որ դուք չէիք պաշտպանի այն անմտութիւնը, թէ Աստուած միայն թոյլ եւ անպաշտպան մարդու սպանութիւնը չարիք չի համարում, այսինքն՝ միայն ուժեղ եւ չար մարդու սպանութիւնն է չարիք համարում։
ԻՇԽԱՆ.— Դա միայն ձեզ է այդ բանը անմտութիւն թւում, որովհետեւ դուք սխալ ուղղութեամբ էք քայլում։ Բարոյականութեան համար կարեւորը այն չէ, թէ ո՞ւմն են սպանել, այլ ա՛յն՝ թէ ո՞վ է սպանել։ Չէ՞ որ դուք ինքներդ յանցագործին զազան անուանեցիք, այսինքն՝ խելքից ու խղճից զրկուած մի էակ։ Ի՞նչ բարոյական չարիք կարող է բովանդակուել նրա գործողութիւնների մէջ։
ՏԻԿԻՆ.— Այս մէկը չեղաւ, Մի՞թէ խօսքը բառիս բուն իմաստով գազանի մասին է։ Դա միեւնոյնն է, որ ես իմ երեխային ասեմ. «Ի՞նչ յիմարութիւններ ես դու ասում, հրեշտակս», իսկ դուք կշտամբէք ինձ, ասելով, թէ հրեշտակը յիմարութիւններ չի կարող ասել։ Շատ վատ վէճ է։
ԻՇԽԱՆ.— Ներեցէք, ես քաջ գիտակցում եմ, որ յանցագործին զազան են կոչում ոչ ուղղակի իմաստով եւ այդ գազանը չունի ո՛չ պոչ եւ ոչ էլ սմբակ, բայց պարզ է, որ խելքի ու խղճի բացակայութեան մասին խօսւում է ուղղակիօրէն։ Չէ՞ որ խելք ու խիղճ ունեցող մարդը նման բաներ չի կարող անել։

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՆ Զ.— Սա էլ բառախաղ է։ Անշուշտ, գազանաբար վարուող մարդը կորցրել է խիղճն ու խելքը այն իմաստով, որ այլեւս չի լսում նրանց ձայները։ Բայց դեռեւս ապացոյցներ են պէտք, որ նրա մէջ ընդհանրապէս բացակայում է խիղճն ու խելքը։ Իսկ քանի դեռ մեզ այդ բանը ապացուցել չի յաջողուել, ես շարունակում եմ կարծել, որ գազան մարդը տարբերւում է մեզանից ո՛չ թէ խղճի ու խելքի բացակայութեամբ, այլ՝ նրանց հակառակ գործելու համաձակութեամբ, գազանային քմահաճոյքների թելադրանքով։ Այդ նոյն գազանը մեր մէջ նոյնպէս կայ, միայն թէ մենք նրան կապուած ենք պահում։ Իսկ այն մարդը կապից կտրել է գազանին ու վազում է նրա յետեւից։ Բայց շղթայ նա էլ ունի, միայն թէ չի օգտագործում։

ՏԻԿԻՆ.— Ճիշտ էք ասում։ Եթէ իշխանը ձեզ հետ համաձայն չէ, հարուածէք նրան հենց նրա զէնքով։ Եթէ յանցագործը առանց խելքի ու խղճի գազան է, նրան կարելի է սպանել ինչպէս գայլի կամ վագրի, որոնք յարձակուել են մարդու վրայ։ Այս բանը նոյնիսկ կենդանիների պաշտպանութեան ընկերութիւններ չեն արգելել։

ԻՇԽԱՆ.— Բայց դուք կրկին մոռանում էք, որ ինչպիսին էլ, որ լինի այն մարդու վիճակը՝ խելքի եւ խղճի կորուստ, թէ գիտակցուած անբարոյականութիւն, խնդրոյ առարկան ո՛չ թէ նա է, այլ՝ դուք, քանզի ձեր գիտակցութիւնը եւ խիղճը խանգարուած չեն եւ դուք չէք ուզում գնալ խղճի ու գիտակցութեան դէմ։ Ուրեմն՝ դուք չէք սպանի այդ մարդուն, ինչպիսին էլ որ նա լինի

ՊԱՐՈՆ Զ.— Անշուշտ, ես չեմ սպանի, եթէ իմ խիղճը եւ գիտակցութիւնը ինձ արգելեն այդ բանը անել։ Իսկ պատկերացրէք, որ գիտակցութիւնը եւ խիղճը ինձ ուրիշ բան են թելադրում եւ այդ թելադրանքը աւելի բարեխիղճ է ու տրամաբանական։

ԻՇԽԱՆ.— Սա արդէն հետաքրքրական է, լսենք։

ՊԱՐՈՆ Զ.— Նախ եւ առաջ գիտակցութիւնը եւ խիղճը կարողանում են հաշուել առնուազն մինչեւ երեքը, ուստի՝ եթէ նրանք չեն ուզում կեղծել, նրանք երբեք ինձ չեն ասի երեք, եթէ իրականում երկուս է։

ԻՇԽԱՆ.— Ոչինչ չեմ հասկանում։

ՊԱՐՈՆ Զ.— Ձեր կարծիքով տրամաբանութիւնը եւ խիղճը խօսում են ինձ հետ միայն իմ եւ չարագործի մասին եւ դուք կարծում էք, որ խնդիրը նրանումն է, որ ես այդ մարդուն մատով չդպչեմ։ Բայց իրականում կայ նաեւ երրորդ անձնաւորութիւնը եւ կարծում եմ, որ ամենագլխաւորը՝ բնաբարութեան զոհը, որը իմ օգնութիւնն է խնդրում։ Ահա նրան դուք միշտ մոռանում էք, իսկ խիղճը խօսում է հենց նրա մասին, նախ եւ առաջ նրա մասին եւ Աստուծոյ կամքը այստեղ՝ զոհին փրկելու մէջ է։ Եթէ հնարաւոր է, առանց չարագործին սպանելու։ Բայց զոհին ես պիտի փրկեմ, եթէ հնարաւոր է՝ համոզելով, եթէ ոչ՝ ուժով։ Բայց եթէ իմ ձեռքերս կապուած են, այդ դէպքում ինձ կը մնայ աղօթել, այսինքն՝ փորձել փրկել բարի կամքի գերմարդկային լարուածութեամբ։ Բայց այս միջոցներից ո՞րը պէտք է օգտագործուի, կախուած է դէպքի ներքին եւ արտաքին պայմաններից։ Սակայն մէկ բանը անկասկած է՝ ես պիտի օգնեմ նրանց, ում նեղացնում են։ Սա է ասում ինձ իմ խիղճը։

ՁՕՐԱՎԱՐ.— Թշնամու ուժերը երկփեղկուած են, առա՛ջ։

ԻՇԽԱՆ.— Դէ, ես խղճի նման լայն հասկացութիւնից հեռացել եմ։ Իմ խիղճս նման դէպքերում շատ աւելի յստակ է ու կտրուկ. մի սպա-

digitised by A.R.A.R.@

նիր։ Բայց այժմ էլ ես չեմ տեսնում, որ մենք մեր վէճում մի քայլ առաջ գնացած լինենք։ Եթէ ես համաձայնուէի ձեզ հետ, որ նոյնիսկ բարոյապէս շատ զարգացած ու բարեխիղճ մարդը կարեկցութեան ազդեցութեան տակ իր քայլին բարոյական գնահատական տալու ժամանակ չունենալով, կարող է թոյլ տայ իրեն սպանութիւն, հապա ի՞նչ կարող ենք մենք եզրակացնել մեր վէճի համար։ Մի՞թէ Թամերլանը կամ Ալեքսանդր Մակեդոնացին սպանում կամ ստիպում էին սպանել ուրիշներին՝ թոյլերին չարագործներից փրկելու համար։

ՊԱՐՈՆ Զ.— *Չնայած նրան, որ Թամերլանի եւ Ալեքսանդր Մակեդոնացու ձեր համեմատութիւնները վատ նախաբան է մեր պատմական հարցերի քննարկման համար, այնուամենայնիւ, քանի որ դուք արդէն երկրորդ անգամը լինելով անհամբերութեամբ անցնում էք այդ բնագաւառը, թոյլ տուէք կատարել մէկ պատմական մէջբերում, որը թոյլ կը տայ անհատի պաշտպանութիւնը կապել անհատի պաշտպանութեան հետ։ Իրադարձութիւնը տեղի ունեցաւ 12րդ դարում, Կիեւում։ Տեղական իշխանները, հաւանաբար, արդէն այն ժամանակ ունէին ձեր հայեացքները եւ համարում էին, որ խռովել ու կռուել կարելի է միայն իրար դէմ, եւ չէին համաձայնւում պատերազմի դուրս գալ պոլովցիների դէմ, յայտարարելով, թէ չեն ցանկանում մարդկանց տառապանքների ենթարկել։ Սակայն մեծ իշխան Վլադիմիր Մոնամախը հանդէս եկաւ նրանց առՀեւ հետեւեալ ճառով. «Դուք խղճում էք թշնամուն, բայց չէք մտածում այն մասին, որ գարնանը թշնամին դաշտ դուրս կը գայ, կը սպանի գիւղացուն, կը գողանայ նրա ձին, ապա մեծ խմբով վրայ կը հասնեն պոլովցիները, բոլոր գիւղացիներին կը սպանեն, կանանց ու երեխաներին իրենց երկիր կը տանեն, գիւղը կ'այրեն։ Ինչու՞ դուք այդ մարդկանց չէք խղճում։ Ես խղճում եմ նրանց, դրա համար էլ ձեզ պատերազմի եմ կանչում»։ Այս անգամ իշխանները ամաչեցին ու հետեւեցին Վլադիմիր Մոնամախի կոչին։ Երկիրը հանգստացաւ Մոնամախի օրօք։ Իսկ յետոյ նրանք վերադարձան իրենց խաղաղասիրութեան, խուսափեցին պատերազմներից եւ մատնուեցին հաճոյքների։ Իսկ Ռուսաստանը դարձաւ մոնղոլների ստրուկը։ Բայց իշխանների զաւակների համար պատմութիւնը պատրաստել էր Իվան 4րդին։*

ԻՇԽԱՆ.— *Ոչինչ չեմ հասկանում։ Մէկ՝ դուք մեզ ներկայացնում էք մի իրադարձութիւն, որը մեզանից ոչ մէկի հետ ո՛չ պատահել է եւ ոչ էլ կը պատահի, մէկ՝ յիշատակում էք մի ինչ-որ Վլադիմիր Մոնամախի, որը գուցէ երբեք գոյութիւն չի ունեցել կամ առնուազն մեր հետ ոչ մէկ կապ չունի։*

ՊԱՐՈՆ Զ.— *Իշխան, դուք Ռիւրիկովների՞ց էք արդեօք։ Չճանաչել սեփական նախնիներին՝ նշանակում է նմանուել երեխաների, որոնք կարծում են, թէ իրենց բոստանում կաղամբի տակից են գտել։*

ԻՇԽԱՆ.— *Իսկ ի՞նչ պէտք է անեն այն դժբախտները, որոնք նախնիներ չունեն։*

ՊԱՐՈՆ Զ.— *Ամէն մի մարդ ունի առնուազն երկու մեծ նախնի, որոնք բոլորիս համար ժառանգել են բաւականին ուսումնալից գրութիւններ՝ հայրենական եւ համաշխարհային պատմութիւն։*

ԻՇԽԱՆ.— *Բայց չեն կարող այդ գրութիւնները լուծել այն հարցը, թէ ինչպէ՞ս մենք պէտք է վարուենք այսօր, այսինքն՝ ի՞նչ պիտի անենք ներկայումս։ Ենթադրենք, որ Վլադիմիր Մոնամախը իսկապէս*

digitised by A.R.A.R.@

որ գոյութիւն ունէր իրականութեան, այլ ոչ թէ Լաւրենտիի կամ Իպատիի երեւակայութեան մէջ։ Ենթադրենք, նոյնիսկ, որ նա փայլուն անձնաւորութիւն էր եւ անկեղծօրէն խղճում էր թշնամիներին։ Այդ դէպքում նա իրաւացի էր, երբ կուում էր թշնամիների դէմ, որովհետեւ այն վայրենի ժամանակներում բարոյական գիտակցութիւնը դեռեւս դուրս չէր եկել քրիստոնէութեան կոպիտ Բիւզանդական ըմբռնման սահմաններից եւ թոյլ էր տալիս սպանել, թուացող բարիութիւն հաստատելու համար։ Բայց ինչպէ՞ս մենք այդ բանը կարող ենք անել, եթէ հասկացել ենք, որ սպանութիւնը Աստուծոյ կամքին հակառակ չարիք է, որը վաղուց արգելուած է պատուիրաններով։ Ո՛չ մէկ դէպքում եւ ոչ մէկ պատրուակի տակ չի կարելի թոյլ տալ սպանութիւն եւ չի կարելի նրա համար արդարացում գտնել։ Առաւել եւս, երբ մէկ մարդու փոխարէն, պատերազմ յայտարարելու պատրուակի տակ սպանում են հազարաւոր մարդիկ։ Սա նախ եւ առաջ անհատական խղճի հարց է։

ԶՕՐԱՎԱՐ.— Եթէ խօսքը անհատական խղճի մասին է, ապա թոյլ տուէք զեկուցել ձեզ հետեւեալը։ Բարոյական եւ այլ իմաստներով ես շատ միջակ մարդ եմ, ո՛չ սեւ եմ, ո՛չ սպիտակ, մոխրագոյն եմ։ Ո՛չ մեծ բարեգործութիւն, ո՛չ մեծ չարիք եմ կատարել։ Բարի գործերումն էլ դժուարութիւններ կան. երբեմն չես հասկանում, թէ արդեօ՞ք բարեգործութիւն է արածդ, արդեօ՞ք ըստ խղճի ես գործում, թէ հոգեկան թուլութեան կամ փառամոլութեան թելադրանք է։ Մանրունքներ են սրանք։ Իմ ամբողջ կեանքի ընթացքում միայն մէկ դէպք պատահեց, որ մանրունք չես կարող անուանել, իսկ ամենակարեւորը այն էր, որ ոչ մէկ կասկած չունէի, որ գործում եմ բարի ուժի ազդեցութեան տակ։ Մէկ անգամ իմ կեանքում ես ապրեցի իսկական երջանկութիւն, ամբողջական բարոյական բաւարարութիւն եւ նոյնիսկ ոգեւորութիւն, որովհետեւ գործում էի առանց որեւէ տատանումների։ Եւ այդ բարի գործը մինչեւ այսօր եւ, անշուշտ, մինչեւ կեանքիս վերջ կը մնայ իմ ամենալաւ եւ ամենամաքուր յիշողութիւնը։ Եւ իմ այդ միակ բարի գործը սպանութիւն էր եւ այն էլ մեծ սպանութիւն, որովհետեւ այն ժամանակ քառորդ ժամուայ ընթացքում ես սպանեցի աւելի քան հազար հոգի։

ՏԻԿԻՆ.— Ինչ անտեղի կատակներ էք անում, իսկ ինձ թուաց, որ գուք լուրջ էք խօսում։

ԶՕՐԱՎԱՐ.— Այո, միանգամայն լուրջ, կարող եմ նոյնիսկ վկաներ բերել։ Անշուշտ, ձեռքերով չէի սպանում, այլ 6 պողպատէ հրանօթներից, բարեգործ գնդակներով։

ՏԻԿԻՆ.— Իսկ որտե՞ղ է բարի գործը։

ԶՕՐԱՎԱՐ.— Դէ, իհարկէ, ես միայն զինուորական չեմ, ուստի՝ չեմ կարող բարի գործ համարել հազարաւոր սովորական մարկանց ոչնչացումը, լինեն նրանք գերմանացի թէ հունգարացի, անգլիացի թէ թուրք։ Իմ դէպքը առանձնայատուկ էր։ Ես հիմա էլ կարող եմ պատմել, թէ ինչպէս հոգիս տակնուվրայ եղաւ։

ՏԻԿԻՆ.— Դէ շտապէք, պատմեցէք։

ԶՕՐԱՎԱՐ.— Ես խօսեցի հրանօթների մասին եւ դուք, անշուշտ, հասկացաք, որ դէպքը պատահեց վերջին թրքական պատերազմի ժամանակ։ Ես Կովկասի բանակումն էին Հոկտեմբերի 3ից յետոյ...

ՏԻԿԻՆ.— Իսկ ի՞նչ է Հոկտեմբերի 3ը։

digitised by A.R.A.R.@

ՋՕՐԱՎԱՐ.— Ալաջինի բարձունքների պատերազմը, երբ մենք առաջին անգամը լինելով ջարդեցինք «անյաղթ» Գազի Մուխթար փաշային։ Ուրեմն՝ Հոկտեմբերի 3ից յետոյ մենք մտանք այդ յետամնաց ասիականութեան մէջ։ Ես ձախ թեւի վրայ էի եւ առաջապահ հետախուզական գնդի հրամանատարը։ Ուրախ երկիր չէր։ Դեռեւս սարերում գեղեցիկ էր, իսկ ներքեւում տեսնում էինք դատարկուած ու այրուած գիւղեր եւ ամայացած դաշտեր։ Եւ ահա մէկ անգամ, Հոկտեմբերի 28ին իջնում ենք դաշտ եւ քարտէսի վրայ նշուած է մեծ հայկական գիւղ։ Իրականում հայկական այդ մեծ գիւղը այլեւս չկար, չնայած նրան, որ մի քանի օր առաջ գիւղից բարձրացող ծուխը երեւում էր հեռուից։

Ես հաւաքեցի զօրքս մէկ տեղ, որովհետեւ լուրերի համաձայն կարող էի հանդիպել հեծեալների ուժեղ ջոկատի։ Ես չարժւում էի զինուորների հետ, իսկ կոզակները առջեւումն էին։ Միայն գիւղի մօտ ճանապարհը թեքուեց։ Ես տեսայ, թէ ինչպէս կոզակները մօտեցան գիւղին ու կանգնեցին քարացած։ Ես սլացայ առաջ, սակայն նախ քան տեսնելս, խորոված մսի հոտից հասկացայ, որ բաշիբոզուկները իրենց ձեռագիրն են թողել։ Փախչող հայերի սայլերը չէին կարողացել փրկուել եւ նրանք ընկել էին թուրքերի ձեռքը։ Սայլերի տակ կրակ էին վառել եւ հայերին՝ որին գլխից, որին մէջքից, որին ոտքերից կապել էին սայլերից ու խորովում էին։ Կանայք կտրուած կրծքերով ու պատռուած ստամոքսներով թափուած էին գիւղում։ Չեմ պատմի բոլոր մանրամասնութիւնները։ Բայց միայն մէկը հիմա էլ աչքերիս առաջ է։ Մի կին մէջքի վրայ պառկած, ոտքերից, ձեռքերից ու ուսերից կապուած էր մի հաստ սիւնից, այնպէս՝ որ գլուխը չէր կարողանում դարձնել։ Պառկած է՝ ո՛չ այրուած, ո՛չ դանակահարուած, ո՛չ բռնաբարուած, բայց այլանդակուած դէմքով։ Հասկանալի է, որ տարսափից է մահացել։ Իսկ նրա առջեւ մեծ ձող էր գետնի մէջ խրուած, որի վրայ կապուած էր մի մերկ մանուկ, հաւանաբար կնոջ որդին։ Երեխան սեւացած էր կրակից, աչքերը դուրս ընկած, իսկ կողքին հանգած ածուխի հետքերն էին։ Այստեղ ինձ վրայ մի տեսակ սարսափ իջաւ, Աստուծոյ աշխարհը ինձ զզուելի թուաց եւ ես գործում էի առանց մտածելու։ Հրամայեցի առաջ ցատկել ու մտանք այրուած գիւղը։ Դատարկ է, ո՛չ մարդ կայ, ո՛չ անասուն։ Ցանկարծ տեսնում եմ, որ ջրհորից մի ինչ-որ մարդանման էակ է մագլցում։ Կեղտոտուած հագուստով նա ընկաւ մեր առջեւ եւ ինչ-որ բաներ է ասում հայերէնով։ Բարձրացրինք նրան ու հարցաքննեցինք։ Պարզուեց, որ հարեւան գիւղից է, խելացի մի երիտասարդ։ Առեւտրական գործերով այս գիւղն է եկել, երբ գիւղացիները պատրաստւում էին փախուստի։ Բայց հենց այդ պահին վրայ էին հասել բաշիբոզուկներ մեծ թուով, ըստ պատմածի 40 հազար հոգի, բայց վախից ի՞նչ պիտի նա հաշուէր։ Թաքնուել է ջրհորում եւ ճիչերից հասկացել, թէ ինչ է կատարւում գիւղում։ Յետոյ լսեց, որ բաշիպոզուկները վերադարձան եւ ուրիշ ճանապարհի վրայ տեղափոխուեցին։ Նրանք մեր գիւղն են գնում եւ այնտեղ էլ նոյնը պիտի անեն, ձեռքերը կոտրտելով ազաչում էր երիտասարդը։ Եւ այստեղ յանկարծ լուսաւորուեց իմ հոգին։ Սիրտս կարծես թէ հալուեց եւ Աստուծոյ աշխարհը կարծես թէ կրկին ինձ ժպտաց։ Հարցնում եմ հային, ե՞րբ սատանաները այստեղից գնացին։

—Մի երեք ժամ առաջ,— պատասխանում է նա։

digitised by A.R.A.R.@

—Որքա՞ն ժամանակ է պէտք է ձիաւորներին ձեր գիւղը հասնելու համար։

—Հինգ եւ կէս ժամ։

—Իսկ երկու ժամում նրանց հասնելը անկարելի է, Աստուա՛ծ իմ։ Իսկ ուրիշ ճանապարհ չկա՞։

—Կայ, կայ, ձորերով շատ կարճ ճանապարհ կայ, ոչ բոլորը գիտեն այդ ճանապարհը։

—Ձիերը կարո՞ղ են անցնել։

—Կարող են։

—Իսկ հրանօթնե՞րը։

—Դժուար կը լինի, բայց կարող են։

Կարգադրեցի, որ հային ձի տան եւ զօրքի հետ միասին նրա յետեւից ձորը մտանք։ Թէ ինչպէս մենք մագլցեցինք սարերի վրայով, ես լաւ չհասկացայ։ Ամէն ինչ ինքնաբերաբար էր կատարւում, իսկ հոգումս այնպիսի թեթեւութիւն էր տիրում, կարծես թէ թեւեր առած թռչում էի եւ համոզուած էի, որ գիտեմ, թէ ինչ պիտի անեմ ու զգում եմ, որ անելու եմ։ Սկսեցինք մենք վերջին ձորից դուրս գալ, որից յետոյ մեր ճանապարհը միանում էր գլխաւոր ճանապարհի հետ։ Տեսայ, որ հայը յետ է ցատկում եւ ձեռքերը թափահարելով հասկացնում, որ այստեղ են նրանք։ Հեռադիտակս ուղղեցի ու տեսայ, որ իսկապէս այստեղ են։ Անթիւ ձիաւորներ, բայց ոչ 40 հազար, անշուշտ, սակայն 3-4 հազար կամ դուցէ 5 հազար կը լինէին։ Սատանայի զաւակներն էլ տեսան կոզակներին եւ նրանց վրայ կրակ բացեցին։ Եւրոպական հրացաններից այնպէս են կրակում ասիական այս հրէշները, կարծես թէ մարդ լինեն։ Կոզակները վայր են ընկնում ձիերից, իսկ հրամանատարներից մէկը մօտենում է ինձ եւ խնդրում.

—Հրամայեցէք գրոհել, ձերդ գերազանցութիւն։ Այս անիծեալները մեզ թռչունների նման կը սպանեն մինչեւ մենք հրանօթները պատրաստենք։ Մենք նրանց սեփական ուժերով էլ պարտութեան կը մատնենք։

—Մի քիչ էլ դիմացէք։ Ցրել մենք նրանց կարող ենք, բայց ի՞նչ արդիւնք կարող է դա տալ։ Աստուած ինձ թելադրել է ո՛չ թէ ցրել, այլ ոչնչացնել նրանց։ Կարգադրեցի, որ զինուորները սատանաների դէմ պատասխան կրակ բացեն, իսկ յետոյ նահանջեն դէպի հրանօթները։ Իսկ ինքս դողում եմ անհամբերութիւնից, դուրս ընկած աչքերով երեխան աչքերիս առջեւ է։ Բայց կոզակները ընկնում են։ Աստուա՛ծ իմ։

ՏԻԿԻՆ.— Ինչո՞վ այս ամէնը աւարտուեց։

ԶՕՐԱՎԱՐ.— Աւարտուեց ամենալաւագոյն ձեւով, առանց վրիպումների։ Կոզակները կրակ բացեցին, ապա՝ ճչալով նահանջեցին դէպի հրանօթները։ Սատանաների ցեղը ընկաւ նրանց յետեւից։ Ոգեւորուել են եւ արդէն չեն էլ կրակում, ամբողջ վոհմակը սլանում է ուղիղ մեր վրայ։ Կոզակները մօտեցան մեզ ու սիսեռի պէս ցրուեցին։ Տեսայ, որ եկել է Աստուծոյ կամքը իրականացնելու ժամանակը։ Աստուած օգնական։ Կարգադրեցի կրակել։ Եւ Աստուած օրհնեց իմ 6 արկերը։ Այդպիսի սատանայական ճիչեր ես ծնուած օրից չէի լսել։ Հասցրին նրանք ուշքի գալ, երկրորդ հարուածը հասցրի, երրորդն էլ ուղարկեցի փախչողների յետեւից։ Այնպիսի իրարանցում ստեղծուեց, կարծես թէ մրջիւնների մէջ մի քանի վառուած լուցկի

digitised by A.R.A.R.@

զցած լինէի։ Սատանաները այս կամ այն կողմն են վազում, իրար տրորում, իսկ մենք կոզակների հետ ձախ կողմից յարձակուեցինք եւ կոտորում էինք նրանց կաղամբի պէս։ Քչերին փախչել յաջողուեց, ոմանք ռումբերից, ոմանք էլ թրերից կոտորուեցին։ Տեսայ, որ որոշ-ները զէնքերը վայր են զցում ու ամա՜ն-ամա՜ն աղաչում։ Այստեղ ես արդէն հրամաններ չէի արձակում, կոզակները հասկանում էին, որ ամանի ժամանակ չէ եւ բոլորին կոտորեցին։ Իսկ եթէ այդ ան-խելք սատանաները առաջին երկու կրակոցից յետոյ ոչ թէ նահան-ջէին, այլ հրանօթների վրայ յարձակուէին, մեր հարցը լուծուած կը լինէր եւ այլեւս երրորդ հարուածը չէի կարող հասցնել։ Բայց Աստ-ուած մեզ հետ էր։ Գործը աւարտուած էր։ Իմ հոգում Քրիստոսի լու-սաւոր Կիրակին էր։ Հաւաքեցինք մենք մեր 37 սպանուածներին, ո-րոնք իրենց հոգիները Աստուծուն տուեցին, պառկեցրինք դաշտի մէջ ու փակեցինք աչքերը։ Իմ գօրքում ես ունէի մի ծեր պահեստա-պետ՝ Օվչարենկո անունով, որը զարմանալի յատկութիւնների տէր մարդ էր։ Կանչեցի նրան ու ասացի.

—Պայմանները չեն ներում, տէրտէր չունենք, նրա փոխարէն դու կատարի թաղման արարողութիւնը։

—Լսում եմ,— ասաց նա, եւ նա էլ երջանկութիւն ապրեց։

Երգիչներ էլ գտնուեցին եւ ամէն ինչ օրէնքով կատարուեց։ Միայն հոգեւորականի իրաւունք չունէր Օվչարենկոն, բայց այդ ի-րաւունքը տրուած էր նրան Յիսուսի խօսքով։ Ճիշտ այսօրուայ պէս թաղման այդ արարողութիւնը յիշում եմ։ Օրը անձրեւոտ էր, մռայլ եւ յանկարծ ամպերը հեռացան, ներքեւում սեւ ձոր էր, իսկ երկրն-քում տարբեր գոյների ամպեր, կարծես թէ Աստուծոյ գնդերն էին հաւաքուել։ Իմ հոգում շարունակւում էր ուրախ ու լուսաւոր տօնը։ Խաղաղութիւն էր շուրջս եւ աներեւակայելի թեթեւութիւն, կարծես թէ վրայից մաքրուել էր կեանքի կեղտը եւ բոլոր երկրային ծան-րութիւնները հանուած էին, ուղղակի դրախտային վիճակումն էի, զգում էի Աստուծուն եւ միայն նրան։ Իսկ երբ Օվչարենկոն անուա-նելով սկսեց յիշատակել հայրենիքի, թագաւորի եւ հաւատքի հա-մար զոհուածներին, զգացի, որ դրանք դատարկ ու պաշտօնական խօսքեր չեն, որ իսկապէս գոյութիւն ունի քրիստոնեասէր զինուորա-կանութիւն եւ որ պատերազմը կար, կայ եւ միշտ կը մնայ մեծ, ազնիւ եւ սուրբ գործ...

ԻՇԽԱՆ (Մի պահ լռութիւնից յետոյ).— Իսկ երբ դուք այդ լուսաւոր տրա-մադրութեան տակ թաղեցիք ձեր զինուորներին, մի՞թէ դուք չյիշե-ցիք ձեր հակառակորդներին, որոնց դուք սպանեցիք մեծ քանակով։

ՁՕՐԱՎԱՐ.— Դէ, փառք Աստուծոյ, որ մենք կարողացանք աւելի շուտ շարունակել մեր ճանապարհը, քան այդ անասունների դիակները սկսին նեխել ու յիշեցնել իրենց մասին։

ՏԻԿԻՆ.— Ախ։ Ամբողջ պատմութիւնը փչացրեցիք, ինչու՞ այդ բանը ա-րեցիք։

ՁՕՐԱՎԱՐ (Դեմելով իշխանին).— Իսկ ի՞նչ էիք դուք ինձանից սպասում։ Որ ես այդ չնագայլերին քրիստոնեայի պէս հողի՞ն յանձնէի։ Նրանք ո՛չ քրիստոնեայ էին, ո՛չ մահմեդական, միայն սատանան գիտէ, թէ ի՞նչ էին նրանք։ Իսկ եթէ ես նրանց կոզակների հետ միասին հողին յանձնէի, դուք ինձ, հաւանաբար, կը մեղադրէիք կրօնական սրբա-պղծութեան մէջ։ Բայց ես ուրիշ մտահոգութիւն ունէի։ Ես կանչեցի հրամանատարներին ու կարգադրեցի, որ զինուորները չմօտենան

digitised by A.R.A.R.@

այդ անասունների դիակներին, որովհետեւ ես զգում էի, որ իմ կոզակները արդէն վաղուց ուզում էին քրքրել նրանց գրպանները։ Իսկ ով գիտէ, թէ ինչ ժանտախտ կարող էին նրանք տարածել։

ԻՇԽԱՆ.— Եթէ ես ձեզ ճիշտ հասկացայ, դուք վախենում էիք, որ զինուորները դիակները թալանելիս, որեւէ վարակ չտարածեն ձեր զօրքի մէջ։

ՋՕՐԱՎԱՐ.— Այո, ես դրանից շատ էի վախենում։

ԻՇԽԱՆ.— Այս քեզ քրիստոնեասէր զինուորներ։

ՋՕՐԱՎԱՐ.— Կոզակնե՞րը, նրանք իսկական աւազակներ են եւ միշտ էլ այդպիսին են եղել։

ԻՇԽԱՆ.— Ի՞նչ է, երազո՞ւմն են խօսում։

ՋՕՐԱՎԱՐ.— Այո, ես էլ չեմ հասկանում, թէ դուք ի՞նչ էք ուզում ասել։

ՔԱՂԱՔԱԳԷՏ.— Իշխանը, հաւանաբար, զարմանում է, որ ձեր գազափարապաշտ եւ գրեթէ սուրբ կոզակները, ձեր իսկ պնդումով, աւազակներ են։

ԻՇԽԱՆ.— Այո, ես հարցնում եմ, թէ ինչպէ՞ս պատահեց, որ պատերազմը դառնում է «մեծ, ազնիւ եւ սուրբ» գործ, եթէ ձեր իսկ պնդումով նա միայն երկու տարբեր աւազակների պայքար է։

ՋՕՐԱՎԱՐ.— Ահա թէ ինչպէս էք դուք մտածում։ Երկու տարբեր աւազակների պայքար։ Եւ հենց բանն էլ նրանումն է, որ տարբեր են այդ աւազակները։ Թէ՞ դուք իսկապէս կարծում էք, որ թալանելը համազօր է մօր աչքի առաջ կենդանի երեխային խորովելը։ Իսկ ես ձեզ հետեւեալը կ'ասեմ։ Իմ խիղճս այդ հարցում այդքան մաքուր է, որ ես մինչեւ այսօր անկեղծօրէն ափսոսում եմ, որ ես չմեռայ այն ժամանակ, երբ հրամայեցի վերջին կրակը բացել։ Ես ոչ մէկ կասկած չունեմ, որ եթէ այն ժամանակ մեռնէի, միանգամից իմ 37 զինուորների հետ Աստուծոյ առջեւ կը յայտնուէի եւ մենք կը գրաւէինք մեր տեղը դրախտում՝ Աւետարանի բարի աւազակի կողքին։ Պատահական չէ, որ նրա մասին պատմում է Աւետարանը։

ԻՇԽԱՆ.— Այո, բայց դուք այլեւս չէք գտնի Աւետարանում, որ բարի աւազակին կարող են նմանուել միայն քրիստոնեաները, այլ ոչ թէ բոլոր ժողովուրդների ու կրօնների ներկայացուցիչները։

ՋՕՐԱՎԱՐ.— Ի՞նչ է, ինձ յիմարի տե՞ղ էք դրել։ Այդ ե՞րբ ես տարբերութիւն դրեցի ցեղերի ու կրօնների միջեւ։ Մի՞թէ հայերը իմ ցեղակիցներն են, եւ մի՞թէ ես հարցնում էի, թէ ի՞նչ ցեղի եւ ի՞նչ կրօնի էին պատկանում սատանայի այն վիժուածքները, որոնց ես ցրիւ տուեցի արկերով։

ԻՇԽԱՆ.— Բայց դուք մինչեւ այսօր չուզեցիք ընդունել, որ սատանայի այդ վիժուածքները, այնուամենայնիւ, մարդիկ են, որ ամէն մի մարդու մէջ կայ չարը եւ բարին եւ որ ամէն մի աւազակ՝ լինի նա կոզակ, թէ բաշիբոզուկ, կարող է դառնալ Աւետարանի բարի աւազակը։

ՋՕՐԱՎԱՐ.— Անկարելի է ձեզ հասկանալ։ Մէկ դուք ասում էք, որ չարագործ մարդը անպատասխանատու կենդանի է, ապա պնդում էք, որ երեխային խորովող աւազակը կարող է Աւետարանի բարի աւազակ դառնալ։ Եւ այս ամէնը արւում է այն բանի համար, որ չարին մատով չկպչենք։ Իսկ իմ կարծիքով կարեւորը այն է, որ ամէն մարդու մէջ կայ բարին ու չարը, կարեւորը այն է, թէ ո՞րն է աւելի ուժեղ։ Կարեւոր չէ, որ նոյն խաղողից կարելի է պատրաստել թէ՛ գինի եւ թէ քացախ, կարեւորը այն է, թէ ի՞նչ է պարունակում այս որոշակի

digitised by A.R.A.R.@

չիշը։ Որովհետեւ եթէ ես բաժակներով խմեմ քացախ եւ հիւրասիրեմ ուրիշներին այն պատճառաբանութեամբ, թէ գինին նոյն նիւթից է պատրաստուում, ապա ստամոքսներ փչացնելուց բացի ես իմ իմաստութեամբ ոչ մէկ օգուտ չեմ բերի։ Բոլոր մարդիկ եղբայրներ են։ Հոյակապ է։ Շատ ուրախ եմ։ Ցետոյ ի՞նչ։ Չէ՞ որ եղբայրները տարբեր են լինում։ Ինչո՞ւ ես չհետաքրքրուեմ, թէ ո՞րն է իմ եղբայրներից Կայէնը, իսկ ո՞րը՝ Աբէլը։ Իսկ եթէ իմ աչքերի առջեւ իմ եղբայր Կայէնը քերթում է իր եղբօր Աբէլի մորթին, իսկ ես այնպիսի մի ապտակ եմ հասցնում Կայէնին, որ նա վերջ տայ իր ապուշ կատակներին, դուք ինձ յանկարծ մեղադրում էք, որ ես մոռացութեան եմ մատնել իմ եղբայրական զգացմունքները։ Ո՛չ, շատ լաւ էլ յիշում եմ եղբայրութեան մասին, դրա համար էլ ապտակում եմ։ Եթէ չյիշէի, կողքով կ'անցնէի։

ԻՇԽԱՆ.— *Իսկ որտեղի՞ց է գալիս այս խնդիրը. կա՛մ կողքով անցնել, կա՛մ ապտակ տալ։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Որովհետեւ այդ դէպքում երրորդ ճանապարհ դժուար է գտնել։ Այ, դուք առաջարկում էք աղօթել Աստուծուն, խնդրելով նրա անմիջական միջամտութիւնը։ Նա պէտք է անմիջապէս տատանայի զաւակին խելքի բերի, բայց կարծում եմ, որ դուք ինքներդ այդ միջոցից հրաժարուեցիք։ Իսկ ես ձեզ կարող եմ ասել, որ այդ միջոցը բոլոր դէպքերում լաւ է, սակայն ոչ մէկ գործնական միջոցի չի կարող փոխարինել։ Բոլոր պարկեշտ մարդիկ ճաշից առաջ աղօթում են, իսկ կերակուրը ծամում են սեփական ծնօտներով։ Ես էլ առանց աղօթքի չէ, որ զօրք էի զեկավարում։*

ԻՇԽԱՆ.— *Նման աղօթքը, անշուշտ, սրբապղծութիւն է։ Պէտք է ո՛չ թէ աղօթել Աստուծուն, այլ գործել Աստուծոյ կամքի համաձայն։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Այսի՞նքն։*

ԻՇԽԱՆ.— *Ով իսկապէս ներշնչուած է Աւետարանի ոգով, նա միշտ իր մէջ ուժ կը գտնի իր ամբողջ տեսքով, շարժումներով եւ խօսքերով այնպէս ազդել շարիքի պատրաստ իր դժբախտ եղբօր վրայ, որ նա հրաժարի իր չար մտադրութիւնից։*

ՁՕՐԱՎԱՐ.— *Սուրբ շողոքորթներ։ Երեխաներ կրակի վրայ խորովող բաշիբոզուկների առջե՞ւ պիտի ես զգայացունց շարժումներ ու բարի խօսքեր արտասանէի։*

ՊԱՐՈՆ Զ.— *Կոգմերին բաժանող մեծ տարածութիւնը եւ լեզուական դժուարութիւնները, հաւանաբար, խօսքերը անտեղի էին դարձնում։ Ինչ վերաբերում է տպաւորութիւն ձգող շարժումներին, ապա թընդանօթի կրակոցներից բացի այստեղ հազիւ թէ որեւէ բան աւելի օգտակար լինէր։*

ՏԻԿԻՆ.— *Ցիրաւի, ի՞նչ լեզուով եւ ի՞նչ միջոցներով զօրավարը պէտք է բացատրուէր բաշիբոզուկների հետ։*

ԻՇԽԱՆ.— *Ամենուին էլ չասացի, որ նրանք կարող էին բաշիբոզուկների վրայ ազդել աւետարանական ճամբով։ Ես միայն ասացի, որ աւետարանական շնչով լեցուն մարդը կը գտնէր հնարաւորութիւն՝ մութ հոգիներում շարժել այն բարին, որը կայ ամէն մի մարդու մէջ։*

ՊԱՐՈՆ Զ.— *Դուք իսկապէ՞ս այդպէս էք մտածում։*

ԻՇԽԱՆ.— *Ոչ մէկ կասկած չունեմ դրանում։*

ՊԱՐՈՆ Զ.— *Չէ՞ք կարծում, որ Յիսուսը բաւականին խորն ներշնչուած էր աւետարանական ոգով։*

ԻՇԽԱՆ.— *Սա ի՞նչ հարց է։*

digitised by A.R.A.R.@

ՊԱՐՈՆ Զ.— *Սա այն հարցն է, որ ես ցանկանում եմ իմանալ, թէ ինչո՞ւ Յիսուսը աւետարանական շնչով չազդեց Յուդայի, Հերովդէսի, Հրեայ հոգեւորականների եւ չար աւազակի վրայ՝ նրանց մէջ պարունակող բարին արթնացնելու համար։ Քրիստոնէական իմաստով անյաղթահարելի դժուարութիւն այստեղ չկար։ Բայց մէկ բանը անկասկած է. Յիսուսը խաչուեց եւ տանջանքների ենթարկուեց՝ իր հակառակորդների չարութիւնից։ Իսկ ինքը բարոյապէս մնաց այդ ամէնից աւելի բարձր եւ նա չուզեց դիմադրել, նա ներեց իր թշնամիներին եւ դա միանգամայն հասկանալի է, թէ՛ իմ եւ թէ ձեր տեսանկիւնից։ Բայց ինչո՞ւ, ներելով իր թշնամիներին, նա չազատեց նրանց հոգեւոր այդ մթութիւնից, որի մէջ նրանք գտնուում էին։ Ինչո՞ւ նա չյաղթահարեց նրանց չարը սեփական ուժով։ Ինչո՞ւ նա չարթնացրեց նրանց մէջ քնած բարին եւ չվերածնեց նրանց։ Մէկ խօսքով՝ ինչո՞ւ նա չազդեց Յուդայի, Հերովդէսի եւ հրեայ հոգեւորականների վրայ, ինչպէս նա ազդեց միայն մէկ բարի աւազակի վրայ։ Ձեր ասելով, նա բաւարար չափով ներշնչուած չէր աւետարանական ոգով, մինչդեռ խօսքը, կարծեմ, Յիսուսի Աւետարանի մասին է։*

ԻՇԽԱՆ.— *Խօսքի մենամարտի ես ձեր դէմ դուրս չեմ գայ, ինչպէս չէի ուզի մենամարտել Զօրավարի հետ քրիստոնէասիրական սուսերներով։* (Այստեղ իշխանը վեր կացաւ եւ պատրաստւում էր մի ինչ-որ ազդեցիկ բան ասել, բայց հնչեցին մօտակայ եկեղեցու զանգերը)։

ՏԻԿԻՆ.— *Ճաշի ժամանակն է, մեր վէճը կը շարունակենք վաղը։*

ՎԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎԵՎ

digitised by A.R.A.R.@

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հայկական Պատմուածքներ եւ Թարգմանական Հարցեր



Հայ գրականութեան գանձերը արաբ ընթերցասէր հասարակութեան ծանօթացնելու նպատակով, վերջերս, Հալէպի մէջ, Հ.Բ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ լոյս տեսաւ իր տեսակին մէջ բաւական հետաքրքրական հատոր մը՝ «20 հայկական պատմուածքներ», որ եկաւ ձեւով մը ամբողջացնելու շուրջ տարի մը առաջ հրապարակ ելած Նազար Նազարեանի նոյնաբնոյթ մէկ այլ հատորը՝ «Հայկական պատմուածքներ» անուն ժողովածուն։

Եթէ բազմավաստակ Նազար Նազարեանի կազմած ու թարգմանած «Հայկական պատմուածքներ» ժողովածուն արաբ ընթերցողին կը ձգտի ներկայացնել արեւմտահայ եւ սփիւռքահայ պատմուածագրութեան շուրջ յիսնամեայ հոլովոյթը, թարգմանիչներ Լիւսի Գասապեանի եւ Ղասսան Քաճճոյի միացեալ ճիգերով մարմին ստացած «20

digitised by A.R.A.R.@

հայկական պատմուածքներ» հատորը աւելի լայն կը բանայ կարկինը՝ 20 հեղինակներու միջոցաւ ըսփիւռքահայ եւ խորհրդահայ պատմուածքը ծանօթացնելու նպատակով։ Երկու հատընտիրներ՝ որոնք ընթերցողին տրամադրութեան տակ կը դրուին գրեթէ միաժամանակ, կ'արծարծեն թարգմանական մէկէ աւելի հարցեր, որոնց յստակացումը կարելի չէ կատարել թէկուզ ընդարձակ յօդուածով մը, որովհետեւ «ի՞նչ կը թարգմանենք, ինչո՞ւ եւ որո՞ւ համար» պարզ հարցումին պատասխանը, ամբողջակա՛ն պատասխանը կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան մը...

Թարգմանիչ-հեղինակներուն նախասիրութիւնները եւ ձեռք բերուած արդիւնքը յարգելով հանդերձ, մենք պիտի փափաքէինք տեսնել գիտական հիմունքներով եւ յստակ ծրագիրի մը հիմամբ օտար ընթերցողին հրամցուող հատորներ, ըսել կ'ուզենք՝ խնդրոյ առարկայ գրական սեռը կամ դպրոցը իր ամբողջութեամբ ներկայացնող հաւաքածոներ, համապատասխան կշիռը ունեցող ներածական-ուսումնասիրութիւններով, առաջնորդո՛ղ խօսքով։ Խնդրոյ առարկայ զոյգ ժողովածուներն ալ, հակառակ իրենց գրեթէ յաջող ընտրութիւններուն եւ թարգմանական փայլուն որակին, այս դիտանկիւնէն մօտեցած կը մնան խոցելի՝ իրենց կարճ (Ն. Նազարեան՝ երեքուկէս էջ) թէ ծաւալուն (Ղ. Գասապեան-Ղ. Քաճճօ՝ 24 էջ) ներածականներով։ Փաստօրէն, հայ պատմուածագրութեան մասին սեղմ տեղեկութիւններ փոխանցող թէ՛ Ն. Նազարեանի «Խօսք մը այս հատաքածոյին մասին» յառաջաբանը եւ թէ Գասապեան-Քաճճօ զոյգին ընդհանուր տեղեկութիւններով, պատմական-ընկերային կամայական մեկնաբանութիւններով, անուններով ու չփոթներով խճողուած «Մուտք՝ հայ պատմուածքէն ներս» ծաւալուն գրութիւնը ոչինչ — կամ գրեթէ շատ քիչ բան — կ'ըսեն ընտրուած կտորներուն ու անոնց հեղինակներուն մասին։ Եւ հատորին ընթերցումը աւարտելէ ետք, շատ բնական է, որ ընթերցողը փորձէ պատասխան մը գտնել իր մտքին մէջ յամեցող այն հարցումին, թէ՝ թարգմանիչները ինչո՞ւ համար նկատի առած են ներածականին մէջ հազիւ երեք տողով գնահատուած Ռոպէր Հատտէճեանը եւ դուրս ձգած, իրե՛նց իսկ արժեւորումով, քսանական թուականներուն Պոլսոյ մէջ ծաղկած «գրական զարթօնքի շարժում»ին «ամէնէն ակնառու գրագէտը» նկատուող Յակոբ Մնձուրին, թէ՝ ինչո՞ւ էջ չեն բացած իր հասարակական դերակատարութեան համար այնքա՛ն փառաբանուած Սիրան Սեզային, որ իր հիմնած «Եբիտասարդ հայուհի» թերթով՝ «եբիտասարդ տարիքին հիացում գրգռող հետաքրքրութիւն ցուցաբերեց արաբ կնոջ ազատագրման գատին հանդէպ», եւայլն, եւայլն...

Անկեղծ ըսած՝ մենք եւս չըկրցանք բացատրել, թէ Լուիզա Ասլանեանի մը Ֆրանսական Դիմադրութեան զինեալ շարժումին մասնակցութիւնն ու նահատակութիւնը («...եւ գնդակահարուեցաւ՝ կեսթափոյի ձեռքով երկու մասի բաժնուելով») ի՞նչ աղերս ունին սփիւռքահայ պատմուածագրութեան հետ։ Լասի այլապէս յարգելի յիշատակը մեծարելու եւ Սեզայի հասարակական դերակատարութեան դիմաց խունկ ծխելու ապիթներ ու բեմեր չեն պակսիր։ Կը կարծենք, «20 հայկական պատ-

digitised by A.R.A.R.@

մուածքներ»ու էջերը ո՛չ Ս. Սեզայի դատապարտած «Լիբանանի յարանուանական անարդարութիւններն ու ճնշումները» արձագրելու եւ ոչ ալ Գ. Աբովի գովաբանած («Հիանալի՛ փաստագրութեամբ») խորհրդային բանակի բազմազգ զինուորներուն «արեա՞ն եղբայրութեան» քարոզները թութակաբանելու կրնան ծառայել։ Թարգմանիչները շատ լաւ կ՚ընէին, եթէ իրենց յառաջդիմակա՞ն գեղումներն ու պղտոր ջուրերը չխառնէին գրականութեան գինիին։ Մնաց որ, վերջին եօթանասուն տարիներուն այնքա՞ն կլտացանք «արխատաշ Ալի»ներու «արեան եղբայրութեան» ստայօդ բարբաջանքներէն եւ անոր ազերիական դրսեւորումներէն, որ, առնուազն պէտք է ունենանք մեր էութիւնը յարգելու պարկեշտութիւնը, եթէ մեր բազմախոց ու արիւնաքամ հայրենիքին արժանապատուութիւնը եւ անոր սիրոյն նահատակուած մերօրեայ որբանուն անձնամոռներուն յիշատակը բան մը կը թելադրեն մեզի։

☆ ☆ ☆

Շուրջ տարի մը առաջ մահացած Մեթր Նազար Նազարեանի «Հայկական պատմուածքներ» ժողովածուն, որ իբրեւ ենթախորագիր ունի «Արեւմտահայ եւ գաղթաշխարհի գրականութիւնը՝ մինչեւ 1945», առաջին գիրքն է քառահատոր շարքի մը։ Երկրորդ հատորով պիտի ներկայացուի սփիւռքահայ պատմուածագրութիւնը՝ Երկրորդ աշխարհամարտի աւարտէն մինչեւ մեր օրերը։ Երրորդ եւ չորրորդ հատորները պիտի ընդգրկեն խորհրդահայ պատմուածքը, ժամանակային նոյն բաժանումով։

Այս ծանօթութիւնները հաղորդելէ եւ հայ պատմուածքի ծնունդն ու զարգացումը ներկայացնելէ առաջ, Ն. Նազարեան սեղմ գիծերու մէջ կ՚ընէ պատմականը գրաբար-աշխարհաբար պայքարին եւ անկէ բխած արեւմտահայերէնին ու արեւելահայերէնին, անցնելու համար հայ պատմուածքի ծնունդին եւ կազմաւորումին։ Այս, Ն. Նազարեան կ՚անդրադառնայ արեւմտեան մշակոյթին, բայց ի մասնաւորի ֆրանսական եւ ռուսական արձակին ունեցած ազդեցութիւններուն, որոնք մեծապէս նպաստեցին խորհրդապաշտ, վիպապաշտ, իրապաշտ, գեղապաշտ եւ նոր-իրապաշտ պատմուածքի դպրոցներուն ծնունդին եւ կազմաւորումին, կատարելու համար այն ընդգծումը, որ հայ պատմուածագրութեան բոլոր շարժումներն ալ իրենց նիւթերը քաղեցին հայ ժողովուրդին արիւնոտ պատմութենէն — Ցեղասպանութեան հաւաքական ողբերգութենէն, տեղահանութենէն, օտար միջավայրին հակադրուող գաղթական հայու կարօտախտէն ու կեանքի դաժան պայքարէն՝ իրենց «ազգային արժանապատուութիւնը բարձր պահելու համար»։

Եզրակացնելով, Ն. Նազարեան հպանցիկ նախադասութիւններով վեր կ՚առնէ բռնագրաւուած հայրենի հողին հանդէպ Արտերկրի հայուն հոգին ալեկոծող կարօտի ապրումներուն վառ ջերմութիւնը, եւ կարօտը՝ հանդէպ ազատութեան, արդարութեան, բայց ի մասնաւորի պատմական ու ընկերային արդարութեան իրականացման։ Մարդու մարդկային էութեան

digitised by A.R.A.R.@

ու արժէքին վրայ հիմնուած հայուն հաւատքին համամարդկային տարողութիւնը մատնանշելէ ետք, Ն. Նազարեան կը յանգի այն եզրակացութեան, որ այս ոգիին արդիւնքը հանդիսացող եւ ժողովածուին մէջ ամփոփուած նմոյշները կը ներկայացնեն այդ գրողներուն պատմուածքները։ «Մենք չունինք այն յաւակնութիւնը,—կ'աւելցնէ թարգմանիչը,— որ մեր ընտրութիւնները իրենց գրած գեղեցկագոյն պատմուածքներն են, այլ անոնցմէ են, որ մեզի եւ բազմաթիւ ընթերցողներու թուացած են գեղեցիկ պատմուածքներ. թերեւս մենք մօտեցանք նպատակին՝ ներկայացնելով այս պատմուածքները»։

Երեքուկէս էջերու վրայ երկարած այս կարճ ներածականին կը յաջորդեն հատորը կազմող տասնըհինգ արձակագիրներ — Գրիգոր Զօհրապ, Երուխան, Ռուբէն Զարդարեան, Լեւոն Բաշալեան, Գեղամ Բարսեղեան, Արշակ Զօպանեան, Ցակոբ Մնձուրի, Զապէլ Եսայեան, Եահան Եահնուր, Զարեհ Որբունի, Ցակոբ Օշական, Համաստեղ, Բենիամին Նուրիկեան, Վահէ Հայկ եւ Արամ Հայկազ։

Գրեթէ ազատ թարգմանութեամբ արաբերէնի փոխադրուած պատմուածքներէն առաջ, Ն. Նազարեան նախ կը ներկայացնէ հեղինակին կեանքն ու գրականութիւնը։ Դասագրքային սկզբունքով խմբագրուած այս կենսագրականները, հեղինակներու կեանքն ու գրական գործունէութիւնը թուական զարգացումով ներկայացնելէ ետք, իրենց երկրորդ բաժինով կ'անդրադառնան հեղինակին գրականութեան՝ սեղմ բնորոշումներով անոր գրականութեան յատկանիշները մատնանշելու նպատակով։ Առհասարակ երկու էջ գրաւող այս կենսագրական տուեալները (բացառութիւն է Գրիգոր Զօհրապի պարագան, երեքուկէս էջ) միշտ չէ որ կը պարզեն նոյն պատկերը։ Օրինակ, եթէ Գ. Զօհրապի, Երուխանի, Ռ. Զարդարեանի, Ա. Զօպանեանի, Վահէ Հայկի առիթով Ն. Նազարեան թուականներու յստակութեամբ կը նշէ անոնց լոյս ընծայած հատորները, հրատարակած կամ աշխատակցած թերթերուն անունները, նոյնը չենք կրնար ըսել Արամ Հայկազի կամ Ցակոբ Օշականի կենսագրութիւնները նկատի առած։ Արամ Հայկազի առիթով, յիշատակելէ ետք, թէ «իր գրչէն լոյս տեսած են պատմուածքներու ժողովածուներ», թարգմանիչ-խմբագիրը կը նշէ անունը «իր նշանաւոր վէպ»ին՝ «Արծուեբոյնին անկումը» (Իմա՛ «Եապին Գարահիսար եւ իր հերոսամարտը»), առանց մոռնալու, որ «անիկա կը մարմնաւորէ իր քաղաքին հերոսական դիմադրութիւնը» եւ թարգմանուած է անդլերէնի, ինչպէս իր պատմուածքներէն ոմանք՝ օտար այլ լեզուներու։ Մինչդեռ, Եապին Գարահիսարի հերոսամարտը անմահացուցած ոչ-գրական «Եապին Գարահիսար եւ իր հերոսամարտը» գործէն առաջ, սպասելի էր, որ թուէր անունները «Ցեղին ձայնը», «Պանդոկ», «Կարօտ», «Երջանկութիւն», «Զորս աշխարհ» եւ «Զորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» հատորներուն։ Ինչ կը վերաբերի մեծանուն եւ մեծավաստակ Ցակոբ Օշականի բազմաճիւղ կենսագրութեան, «Խոնարհներ» պատմուածքներու հատորին եւ «Մնացորդաց» վէպին ընդմէջէն վիպագիր Ց. Օշականին մասին ընդհանուր գաղափար մը փոխանցելով հանդերձ՝ կենսագրականը ոչ մէկ տեղե-

digitised by A.R.A.R.@

կութիւն կու տայ արձակագիր Օշականի մնացեալ վաստակին մասին, ձգելով այն թիւր տպաւորութիւնը, որ պատմուածքով (Ն. Նազարեան կը նշէ հետեւեալ խորագիրները՝ «Պառաւին անէծքը», «Գալօ»ն, «Խենք Սողոմէն», եւայլն) հայ գրականութենէն ներս մուտք գործած եւ ապա վիպագրութեան նուիրուած հեղինակը հրատարակած է միայն «խոնարհներ» պատմուածքներու հատորը եւ «Մմացորդաց» եռագրութիւնը, իսկ «իր կեանքի վերջին օրերուն»՝ «Օրն օրերուն» ու «Պատասխանը» թատերախաղերն ու քանի մը քնարախաղեր։ Արդար ըլլալու համար աւելցնենք, որ այս բացթողումէն ետք, թարգմանիչ-խմբագիրը նախադասութեամբ մը կը յիշատակէ նաեւ քննադատ Ց. Օշականը, երբ կը գրէ. «Սակայն, ժամանակակից հայ գրականութեան մէջ Օշական մնաց Քննադատութեան գագաթ մը եւ դպրոց մը՝ իրեն աշակերտած գրագէտներուն համար»։

Ն. Նազարեանի պատրաստած կենսագրականները անկասկած զերծ պիտի մնային վերոնշեալ մանր թերութիւններէն, եթէ թարգմանիչը իր կողքին ունենար խմբագրական խորհուրդ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար ո՛չ միայն կատարել անհրաժեշտ յաւելումներ, այլեւ հետեւիլ, որ բոլոր կենսագրութիւնները յարգեն նոյն չափանիշն ու կշիռը։ Աւելի՛ն. իրենց նկատողութիւններով ու նշումներով՝ խորհրդատու խմբագիրները կրնային մեծապէս նպաստել, որ հեղինակները ներկայանան իրենց գրականութիւնը բնորոշող ամէնէն յատկանշական կտորներով եւ ոչ թէ անձնական նախասիրութեան մը հիմամբ թարգմանուած պատմուածքով մը։ Այս պարագային, Երուխանի, Բաշալեանի եւ Եսայեանի արձակը կրնար շատ աւելի տպաւորութիւն ձգել, եթէ Բաշալեանի «Ղաչաղչին» պատմուածքին փոխարէն արաբ ընթերցողին հրամցուէր ո՛չ միայն հեղինակին, այլեւ իրապաշտ գրողին գոհարներէն մէկը հանդիսացող «Նոր զգեստը», Եսայեանի «Արծիւը կը ճախրէր» կտորը իր տեղը տար «Աւերակներու մէջ» հատորի «Մօր մը պատմածը»ին, իսկ Երուխանի անունը կապուէր «Ջուկին փոխարէն» կամ «Գերագոյն Ներումը» պատմուածքներուն։

Ն. Նազարեանի ակամայ կիսատ մնացած քառահատոր ծրագիրը հաւաքական ճիգ ու ծրագրում պահանջող գործ է, իսկ անոր նախաբանը հանդիսացող առաջին հատորը՝ գեղեցիկ իրագործում մը, հակառակ վերեւ յիշուած թերութիւններուն։

☆ ☆ ☆

Հայ եւ արաբ մշակոյթները իրարու մօտեցուցած կամուրջներէն մէկուն՝ գրագէտ ու թարգմանիչ Նազար Նազարեանի վաստակին ու յիշատակին նուիրուած «20 հայկական պատմուածքներ» հաւաքածոն արդիւնքն է լուրջ եւ հետեւողական աշխատանքի մը։

256 էջերու մէջ քսան պատմուածագիր ներկայացնող այս հատորը կը բացուի կուռ յառաջաբանով մը, զոր ստորագրած է սուրիացի ծանօթ արձակագիր ու մտաւորական Ուալիտ Ըիլասի։ Այս հաւաքածոյին առիթով գրած իր կարճ մուտքին մէջ, ան ո՛չ միայն կը փորձէ բանաձեւել իր

digitised by A.R.A.R.@

տպաւորութիւնները, այլեւ կ'անդրադառնայ թարգմանական եւ յարակից խնդիրներու, միշտ առաջնորդուելով հայ եւ արաբ մշակոյթներու հասարակաց յատկանիշներէն։

Գրական-մշակութային հիմնական հարցադրումներ ու հաստատումներ կատարող սուրիացի արուեստագէտ արձակագիրին կարճ մուտքէն ետք, ընթերցողը կը կարդայ թարգմանիչներուն «խօսք մը՝ այս հատորին մասին» յարադրանքը, որ անուններու կուտակումներով, պատմական ու գրական տեղի-անտեղի տեղեկութիւններով, մերթ յատակ նպատակներ հետապնդող դատումներով եւ եզրակացութիւններով կը փորձէ ներկայացնել հայ գրականութեան վերջին մէկ դարու հոլովոյթը։

Հատորը նախապատրաստելու միտումով գրուած այս զոյգ մուտքերով կը փակուի տեսական բաժինը եւ երկու բաժինով ընթերցողին կը հրամցուին սփիւռքահայ ու խորհրդահայ արձակը ներկայացնելու կոչուած 20 պատմուածքներ։

Համաստեղ, Բենիամին Նուրիկեան, Արամ Հայկազ, Զարեհ Ոլբունի, Շահան Շահնուր, Սիմոն Սիմոնեան, Արմէն Դարեան ու Ռոպէր Հատտէճեան, իրենց պատմուածքներով՝ ընդհանուր գաղափար մը կու տան սփիւռքահայ արձակի մասին, իսկ Ստեփան Զօրեան, Վահան Թոթովենց, Ակսել Բակունց, Սերօ Խանզադեան, Վիգէն Խեչումեան, Արիկ Աւագեան, Վարդգէս Պետրոսեան, Զօրայր Խալափեան, Մուշեղ Գալշոյեան, Մանուկ Մնացականեան, Հրանտ Մաթեւոսեան եւ Յովհաննէս Մելքոնեան՝ խորհրդահայ եօթանասունամեայ պատմուածքի մասին։

Քսան պատմուածք, քսան ընտրութիւն եւ քսան հեղինակներու ոճային առանձնայատկութիւնները յարգող աւելի քան պարկեշտ թարգմանութիւններ, որոնցմէ ոմանք, ինչպէս Համաստեղի «Տափան Մարգար»ը, Շահան Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ»ը, Ակսել Բակունցի «Միրհան»ը կամ Մուշեղ Գալշոյեանի «Կանչը» կրնանք նկատել յաջող թարգմանութիւններ։

Հակառակ կարգ մը հեղինակներու գործերը հպիւ-հպ ներկայացնող ընտրութիւններուն (մենք ի մտի ունինք Ս. Սիմոնեանի, Ռ. Հատտէճեանի, Վ. Թոթովենցի եւ Հ. Մաթեւոսեանի պատմուածքները), առաջին իսկ պատմուածքի ընթերցումէն ի յայտ կու գայ, որ գործ ունինք իւրաքանչիւր բառին, պատկերաւոր մտածողութեան եւ հեղինակին ոճային առանձնայատկութիւններուն վրայ կանգ առնող խղճամիտ թարգմանիչներու հետ։

Այսպէս, ընտրուած պատմուածքներու ոգին, հոգեբանական կշռոյթը, տիպարներուն նկարագրային գիծերը եւ վերոյիշեալ յատկանիշներուն բացայայտման ու հասունացման հոլովոյթը կենդանի պահող ոճային նրբերանգները արաբերէնի փոխադրելու նպատակով թարգմանիչներուն ցուցաբերած բծախնդրութիւնն ու հմտութիւնը կու գան ապացուցելու, որ «20 հայկական պատմուածքներ» ժողովածուն գործն է արուեստագէտ թարգմանիչներու։ Այդ եզրակացութեան յանգելու համար կը բաւէ բաղդատական արագ ընթերցումով մը կարդալ նոյնիսկ ոճային չեշտուած յատկանիշներով

digitised by A.R.A.R.@

հարուստ Ակսել Բակունցի «Միրհաւ»ը կամ ներքին հոսքի վրայ հիմնուած Մուշեղ Գալշոյեանի «Կանչը»։

Փաստօրէն, տողացի ճշգրտութեան չափ թարգմանիչները կարեւորութիւն ընծայած են պատմուածքներու կառուցային ու ոճական առանձնայատկութիւններուն, յատուկ ուշադրութեան առարկայ դարձնելով գեղարուեստական հարազատութեան բարդ խնդիրը։ Հայերէն բնագիրին տեղական երանգները տեսանելի դարձնող հերոսներուն աշխարհահայեացքը, խօսակցական կենդանի լեզուն, մենախօսութեամբ զարգացում ապրող տիպարներուն հոգեբանական լինելութիւնը, հերոսներուն օգտագործած օտար բառերը, ըսելաձեւերը եւ այլ մանրամասնութիւններ արաբերէնի փոխադրուած են այնպիսի՛ վարպետութեամբ, որ պահ մը ընթերցողին կը թուի, թէ նոյնիսկ չեշտուած հայկականութեան ներկայացուցիչ Ե. Եահնուրի «Պեղեղ մը աւուշ սիրտ»ի Եպրաքսէ հանքմը կամ Մ. Գալշոյեանի «Կանչը» պատմուածքի տեսլահար ծերունին կարծես արաբերէնով կը խօսին, կամ առնուազն արաբերէն պատմուածքի մը հայ տիպարներն են։

Այս առիթով կ'արժէ կանգ առնել երկխօսութիւններու մէջ օգտագործուած օտար բառերը եղածին պէս պահելու եւ ծանօթագրութեամբ բացատրելու կէտին վրայ։ Պատմուածքին հարազատութիւնը պահպանելով՝ թարգմանիչները յաջողած են նաեւ երկրորդ լեզու փոխադրել ո՛չ միայն տեղական-կենցաղային իրայատկութիւնները, այլեւ՝ տիպարներուն մտածելակերպն ու հոգեբանութիւնը բացայայտող զուարթախոհ անմիջականութիւնը, վարակիչ թախիծը, հոգեկան վերիվայրումները եւ այլ մանրամասնութիւններ, որոնք մանրամասնութիւններ ըլլալով հանդերձ՝ պատմուածքի մը ինքնատպութեան իրականացման մէջ իրենց նշանակալի խօսքն ու կարեւորութիւնը ունին։

Եզրակացնելու համար ըսենք, որ «20 հայկական պատմուածքներ» հաւաքածոն շատ բան պիտի շահէր, եթէ սփիւռքահայ եւ խորհրդահայ արձակը արաբ ընթերցողին ներկայացուէր հաւասարապէս, հատորէն ներս առնելով այնպիսի՛ անուններ, որոնք իրենց յատուկ տեղը ունին սփիւռքահայ արձակին մէջ։ Օրինակ, մեզի համար անբացատրելի կը մնայ, որ «Մանկութիւն չունեցող մարդիկ»ի Անդրանիկ Մառուկեանը կամ «Հողը» հատորին Եդուարդ Պոյաճեանը ինչո՞ւ չեն գրաւած իրենց արժանի տեղերը։ Նոյնը կրնանք ըսել քնարական եւ երգիծական արձակի անկրկնելի ներկայացուցիչներուն՝ Վազգէն Շուշանեանի եւ Նշան Պէշիկթաշլեանի առիթով, որոնց գրչին պատկանող յաջող պատմուածքները, կը կարծենք, նուազ արժէքաւոր չէին հատորին մէջ ներառնուած Զարեհ Ոլբունիի, Սիմոն Սիմոնեանի կամ Ռոպէր Հատտէճեանի պատմուածքներէն։

Այնուամենայնիւ, հակառակ այս ակնբախ թերութեան, իր թարգմանական որակով, գիտական հիմունքով խմբագրուած ճշգրիտ, միատեսակ եւ ամբողջական կենսագրականներով (մենք միայն չկրցանք հասկնալ, թէ հեղինակները ինչո՞ւ թէկուզ մէկ տողով չեն նշած Վահան Թոթովենցի եւ Ակսել Բակունցի եղերական մահուան պարագան) այս հատընտիրը կը մնայ գնահատելի իրագործում մը,

digitised by A.R.A.R.@

որուն Աքիլլէսի կրունկը կը մնայ գրական ամէն ստեղծագործութիւն ընկերային-գաղափարախօսական ակնոցով դիտող «մատերիալիստական» յառաջաբանը։ «Մարքսիստական դիալեկտիկա»ն եւ գաղափարական «վերլուծումները այնքա՜ն մելան ու թուղթ սպառեցին վերջին եօթանասուն տարիներուն, որ նոյնիսկ համայնավար գրականագէտները այսօր կը դգուշանան յիշատակելէ իրենց ստորագրած հետեւակութիւնները։ Առնուա՛զն։ «20 հայկական պատմուածքներ» հատորը շատ բան կը շահէր, եթէ թարգմանիչները մեզի եւ արաբ ընթերցողներուն խնայէին լճացման շրջանի պղտոր ու մթին էջերու լուսապատճէնները կարդալու ձանձրոյթը եւ հատորը օժտած ըլլային զուտ գեղագիտական մտեցումով խմբագրուած յառաջաբանով մը։

☆ ☆ ☆

Հայ գրողներու կարգ մը գլուխգործոցները արաբ ընթերցողին ծանօթացնող արաբերէն հրատարակութիւնները, հակառակ իրենց աւելի քան երեսնամեայ անցեալին, ցարդ կը մնան սիրողական աշխատանքներ։ Պարագայական եւ հեղինակային նախասիրութեանց արդիւնքը հանդիսացող այդ թարգմանութիւնները հազիւ նախաճաշակ մը կը փոխանցեն հայ գրականութեան մասին, որ ցարդ կը մնայ անծանօթ աշխարհ մը։ Եթէ Դանիէլ Վարուժան, Եղիշէ Չարենց, Յովհաննէս Շիրազ ու Գէորգ Էմին ներկայացուած են իրենց գրականութեան մէկ հանգրուանը բնորոշող գրքոյկով մը, հայ ժամանակակից բանաստեղծութիւնն ու արձակը կը շարունակեն մնալ մեծ բացական, հակառակ սուրիական ու լիբանանեան մամուլի էջերուն լոյս տեսած եւ այդպէս ալ կորսուած այն քանի մը տասնեակ թարգմանութիւններուն, որոնց հեղինակները՝ Գրիգոր Նարեկացի, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Մուշեղ Իշխան, Նիկողոս Սարաֆեան, Պարոյր Սեւակ եւ այլք այսօր ոչինչ — կամ առնուազն՝ շատ քիչ բան — կ'ըսեն... Նոյնիսկ արաբ բանաստեղծներուն։

Փաստօրէն, տակաւին նոյնիսկ արաբ գրագէտին չենք յաջողած ընդհանուր գաղափար մը փոխանցել հայ գրականութեան կենդանի հոլովոյթին, նուաճած հանգրուաններուն եւ գեղարուեստական նորագոյն յաղթանակներուն մասին։ Ուալիտ Ըիլասիի «Ցառաջաբան»ը բաւական բարացուցական է այս առումով, հակառակ իր բարեկիրթ ոճին։

Կատարուած բոլոր իրագործումները գնահատելով հանդերձ՝ ժամանակն է, որ քայլ մը անդին անցնինք անհատական նախաձեռնութիւններէն եւ նոյնիսկ «կորիզերազ»ի պերճախօս փաստէն, մշակելու համար թարգմանական ծրագիր մը, որուն յստակացման եւ իրականացման մէջ իրենց նկատառելի մասնակցութիւնը պէտք է բերեն մեր բոլոր մշակութային միութիւններն ու թարգմանական աշխատանքով շահագրգիռ մտաւորականները։

Տակաւին ուշ չէ։

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՌԻ. ԸԽԼԱՍԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

- 1 -

Հայ գրականութիւնը, իր հինով եւ նորով, տակաւին ձեւով մը բացակայ է արաբական գիտակցութեան պաստառէն։ Փոխադարձ համակրանքը երբեմն կրնայ կատարել այս իրականութիւնը հերքելու փորձեր, յիշատակելով իրողութիւններ ու դէպքեր։ Նման բացակայութիւնը, սակայն, վճռական նմոյշն է անհամակրութեան այն բազում օրինակներէն, զորս Արեւմուտքի մաս չկազմող ժողովուրդները իրարու հանդէպ կը տածեն. անիկա նաեւ ապացոյցն է այն իրականութեան, որ իբրեւ գերագոյն օրինակ՝ անոնք իրենց հայեացքները միշտ ալ կ'ուղղեն ճարտարագիտականօրէն ու տնտեսականօրէն զիրենք գերազանցած, ապագային մարտահրաւէր կարդալու կարողութիւն ունեցող եւ անցեալը շրջանցած Արեւմուտքի գրականութիւններուն։ Մինչդեռ, արաբական եւ հայկական զոյգ մշակոյթները կը համաձայնին, որ իրենք պատմական հին արմատներ ունին. անոնք նաեւ կը համաձայնին իրենց զոյգ մշակոյթներուն հանդէպ ունեցած իրենց զգուշաւոր հայեացքով եւ մասամբ՝ անարդար չափանիշով եւ այն բոլորով, որ տեղի կ'ունենայ մշակոյթի գերագոյն օրինակին մէջ։

Նոյնինքն արաբ մտաւորականները, եւ նոյնպէս՝ հայերը, իրենց խօսակցութիւններուն, վկայութիւններուն, մտաւորական հակումներուն եւ հետաքրքրութիւններուն մէջ՝ ընդհանուր առումով, միւս կողմին առիթով չեն ցուցաբերեր արժանի գնահատանքն ու լուրջ հետաքրքրութիւնը։ Նման գնահատանքն ու հետաքրքրութիւնը կը բաւարարուին մտերմիկ առիթներով, փրոթոքոլային բարեկրթութեամբ եւ անձնական նախաձեռնութիւններով։ Այս հարցին պատճառներուն յստակացումը թերեւս կարօտի ընդարձակ ուսումնասիրութեան, սակայն զայն ամփոփելով կրնանք ըսել, որ անիկա ներքին հարստահարման ձեւերէն մէկն է, որուն թակարդին մէջ ինկան զոյգ մշակոյթները՝ հաւասարապէս։

Հայ գրականութենէն ցարդ իրագործուած են միայն հազուագիւտ թարգմանութիւններ։ Կը կարծեմ, այդ տարտղնուած իրագործումներու ետին պէտք է տեսնել թարգմանիչներուն հետաքրքրութիւնը կամ պարագայական եւ ոչ թէ մարտավարական պահանջներու գոհացում տալու մղումը։ Եւ արաբ ընթերցողը ցարդ չի կրնար ըսել, որ ինք շատ բան գիտէ հայ գրականութեան մասին։ Նոյն դատումը նաեւ ճիշդ է միւս կողմին համար։

Պատմուածքները, որ հիմա մեր ձեռքերուն մէջ են, կրնան համարուիլ առաջին կարեւոր եւ լուրջ ձեռնարկը, որ կը բխի ծրագրուած ճիգէ մը, որուն նպա-

digitised by A.R.A.R.@

տակը երկրորդ կողմի գրականութեան բացուիլն է։ Ես չեմ յիշեր, որ ասկէ առաջ հրատարակուած ըլլայ նման հաւաքածոյ մը, սակայն կը հաստատեմ, որ ասիկա պիտի ըլլայ հարուստ փորձառութիւն մը, որմէ հետագային դասեր պիտի քաղեն գրական միւս սեռերը ներկայացնելու կոչուած այլ հաւաքածոներ։

Ժամանակային եւ գեղարուեստական այս այլազանութիւնը, զոր կը նշմարենք այս հաւաքածոյին պատմուածքներուն մէջ, անպաշտօն, սակայն լրջութեամբ, մեզի կ'աւետէ երկու դարաւոր գրականութիւններու ներդործօն յարաբերութիւնը։ Անկասկած, այս յարաբերութիւնը պիտի ունենայ իր պատմական խիստ կարեւոր նշանակութիւնը։ Եւ այն պահուն, երբ արաբերէնով լոյս կը տեսնէ հայկական պատմուածքներու հաւաքածոն, արբական պատմուածքներու հատընտիր մը պիտի գրուի հայ ընթերցողին ձեռքերուն մէջ՝ ծանօթանալու համար բարեկամ ժողովուրդի մը մշակոյթին։

- 2 -

Արդեօ՞ք ասիկա հայկական պատմուածքի մէկ անթոլոժին է։

Անկասկած, այս հաւաքածոն թարգմանութիւնը չէ հայկական հատընտիրի մը՝ ներկայացնելու համար հայկական պատմուածքի արուեստը, արդի դարուն։

Այս հաւաքածոն հաւանաբար չկարենայ ըլլալ ամբողջական օրինակը հայկական պատմուածքի արուեստին կրած զարգացումին, կամ՝ ամենատիպար նմոյշը հայկական պատմուածքի համապատկերին։ Սակայն կը մնայ օրինական ներկայացուցիչը այս արուեստին։ Անիկա կը նմանի այն պատուհանին, ուրկէ արաբ ընթերցողը կրնայ բացուիլ հայկական ստեղծագործութեան, գրական յառաջացած սեռի մը ընդմէջէն, կազմելով լայն գաղափար մը այն եղանակին մասին, որուն միջոցաւ հայ գրագէտը կը մտածէ՝ արտայայտելով իր եսը, աշխարհահայեացքը եւ իր ընկերութիւնը նաեւ։

Այս ժողովածուն կը ներկայացնէ պատմուածքներու տարբեր սերունդներ։ Աւելի ճշգրիտ ըլլալու համար կ'ըսենք, որ քսան պատմուածքները կ'ընդգրկեն դար մը, գրագէտներէն տասնչորսը ծնած են 1930էն առաջ, անոնց երիցագոյնը 1894ի ծնունդ է, իսկ կրտսերագոյնը՝ 1926ի. վեց այլ գրողներ ծնած են վերոնշեալ թուականէն ետք եւ այս խումբին կրտսերագոյնը 1937ի ծնունդ է, այսինքն՝ արդէն կը մօտենայ յիսունին։ Ասիկա կը նշանակէ՞, որ երիտասարդ գրողներ բացակայ են հաւաքածոյին մէջ եւ կազմողը, հակառակ հեղինակներու գործերէն ընտրութիւններ կատարելու գծով ցուցաբերած իր բծախնդրութեան, արդեօ՞ք մոռցաւ զիրենք, թէ իրողութիւնը պէտք է պատահարի վերագրել։ Մենք կը ձգտէինք էապէս ծանօթանալ Երկրորդ Համաշխարհային պատերազմին յաջորդած սերունդին արտադրութիւններուն եւ երիտասարդական աշխարհահայեացքին՝ հայկական կեանքին վրայ սեւեռուած, որ հաւաքեց իր վէրքերը եւ ստեղծեց քաղաքական-ընկերային իր իւրայատուկ գոյավիճակը։

- 3 -

Արուեստի դիտանկիւնէն մօտեցած՝ այս արագ յօդուածով

digitised by A.R.A.R.@

կրնանք ըսել, որ այս հաւաքածոյին պատմուածքները մաս կը կազմեն արեւելեան ոգիին՝ արտայայտելով իրենց զօրաւոր զգացումը միջավայրին հանդէպ, քողարկուած կամ յստակ հպարտանքի մը հետ։ Անոնք նաեւ վիպապաշտ են՝ ուրիշներուն զգացումներուն հետ հաղորդակցելու եւ նիւթը մշակելու իրենց ոճային առանձնայատկութիւններով։ Իրենց ամբողջութեան մէջ, անոնք գերազանցապէս հայկական պատմուածքներ են, ինչ որ այս հատորին կու տայ իւրայատուկ բոյր մը, երբ կը սկսինք կարդալ հայկական իրականութեան մէկ էջը, անոր ընդմէջէն կարդալով հայ ժողովուրդի պատմութիւնը՝ իր առասպելներով, նախապաշարումներով, երազներով ու ձգտումներով, միաժամանակ զգալով հայկական պատկանելիութեան կարեւորութիւնը հերոսներուն, որոնք իրենց այս հանգամանքով նաեւ կ'անդամագրուին այս տիեզերքի մարդկայնութեան։

Նիւթերուն այլազանութիւնը հաւաքածոյին յատկանիշներէն մէկն է։ Այս այլազանութիւնը հոս կը ներկայանայ գրագէտի գրեթէ ամբողջական անկախութեան եւ յոգնակիութեան իմաստով։ Գրեթէ բոլոր գրագէտներուն պատկանելիութիւնը երբեք ցոյց չի տար, որ անոնք կը հնազանդին գեղարուեստական միեւնոյն դպրոցի օրէնքներուն։ Այս պատմուածքները մեզ կ'առաջնորդեն այն մտածումին, որ պատմուածքի արուեստին մեծ վարպետի մը հետքերը չկան այս գիրքին մէջ։ Եւ եթէ նոյնիսկ միջազգային գրականութեան ազդեցութիւնները յստակ են, ասիկա կը նշանակէ, որ գրագէտը բացուած է աշխարհին՝ միաժամանակ հաստատելով իր անկախութիւնը այդ աշխարհին մէջ։ Եւ այս դիտանկիւնէն մօտեցած՝ մենք կ'ընդգծենք կարեւորութիւնը հայկական պատմուածքներու այս հաւաքածոյին։

Անկասկած, որ այս պատմուածքներուն միջեւ գոյութիւն ունին մեծ տարբերութիւններ, որոնց ճշդումը կը կատարեն քննադատները։ Սակայն այս պատմուածքներուն դրացնութիւնը հատորի մը գոյգ կողքերուն միջեւ, մեզի կու տայ անկեղծ պատկեր մը կարողականութեանը մասին հայ պատմուածագիրին, որուն միջավայրն ու բնութիւնը՝ իբրեւ մշակոյթ եւ աշխարհագրութիւն, ուսուցանեցին այնքան մը արժէքներ, որոնք կը համապատասխանեն իր վրայ մարդկային մշակոյթին ունեցած ազդեցութիւններուն՝ իմացական դիրքորոշումներու եւ գրական թեմաների տեսակէտէն։

- 4 -

Հարցում մը կ'արթննայ մեր մտքին մէջ.— Որո՞նք են արաբական եւ հայկական պատմուածքները միախմբող հասարակաց յատկանիշները։ Պատասխանը կը կարօտի ուսումնասիրութեան.— Բազմաթիւ յատկանիշներ, զորս այս հաւաքածոն կը հաստատէ։

Գեղարուեստական հարցերու եւ հանգոյցներու զգացական լուծումներ, հայրենասիրական վառ զգայնութիւն մը, որ կը յորդի պատմուածքներու լեզուէն դուրս, կեանքի դաժան ոտքերուն տակ ճզմուած պարզ, աղքատ եւ անիրաւուած մարդուն հանդէպ հոգածու վերաբերում մը, անցեալն ու դիցաբանութիւնը իբրեւ յենարան որդեգրելու տեսանելի մօտեցում

digitised by A.R.A.R.@

մը, ինչպէս նաեւ բնութեան կամ երբեմն գիւղին ու քաղաքին միահիւսումը՝ իբրեւ գեղարուեստական նկարագրութիւն եւ համամարդկային մտածողութեան եզանակ։

Այս պատմուածքներուն մէջ արաբ ընթերցողը ինքզինք պիտի զգայ հարազատ ու ընտանի, կարծես թէ ան նախապէս ճանչցած ըլլար հերոսներն ու դէպքերը։ Եւ նման բացայայտում մը պիտի հաստատէ զոյգ մշակոյթներուն սերտ կապերուն իրականութիւնը։

- 5 -

Ուրիշ հարցում մը.— Այս հատընտիրը կարելի՞ է դիտեղել միջազգային խորագիրին տակ։ Այլ խօսքով՝ այս նմոյշներուն արաբերէնի թարգմանութիւնը կ'առաջնորդէ՞ մեզ այն գնահատանքին, որ զանոնք կը նկատէ մէկ մասը համաշխարհային գրականութիւններուն՝ հաւասարէ հաւասար, ճիշդ այնպէս՝ ինչպէս կը պատահի մեզի հետ, երբ կը կարդանք թարգմանութիւններ՝ կատարուած իրենց մշակութային զօրութեամբ ծանօթ կենդանի լեզուներէ։

Իմ կարծիքով՝ այս պատմուածքներէն ոմանք իրենց կարեւորութեամբ ոչինչ կը զիջին միջազգային գրականութեան ամէնէն զօրեղ պատմուածքներուն, որոնք մեր խղճմտանքին մէջ ձգած են անջնջելի հետքեր։ Իբրեւ օրինակ այս հաստատումին՝ ես պիտի նշէի Ստեփան Զօրեանի «Հորին մօտ», Շահան Շահնուրի «Պճեղ մը ամուշ սիրտ» եւ Մուշեղ Գալշոյեանի «Կանչը» պատմուածքները։

Եւ այն օրը, երբ հայկական ստեղծագործութիւններու մասին մեր ծանօթութիւնները աւելի կը հարստանան, մեր վճիռները կ'ըլլան աւելի ճշգրիտ, իսկ այլ ազգերու եւ ժողովուրդներու արտադրութեանց հետ մեր մշակութային հաղորդակցութիւնը մեզի համար կ'ըլլայ ա՛յն առիթը, որ մեզ կը մղէ զգալու, թէ աշխարհը իսկապէս մեծ է եւ հանճարներու ծնունդը միայն որոշ ազգերու առանձնաշնորհումը չէ։

- 6 -

Վերջին խօսք։ Դիւրին չեղաւ «Թարգմանութեան եւ արաբացման յանձնախումբ»ին հայկական եւ սուրիական արաբական զոյգ գրականութեանց միջեւ մշակութային կամուրջ հաստատելու այս աշխատանքը, որ կը նկատուի իր առաջին ծրագիրը։ Առանց ճիգի չարձանագրուեցաւ յաջողութիւնը՝ ընտրութիւններ կատարելու, թարգմանելու եւ հուսկ հրատարակելու գծով. եթէ չըլլար այն խանդավառութիւնը, որ սուրիացի արաբ եւ հայ խումբ մը մտաւորականներ առաջնորդեց այս արդիւնքին, եթէ Հայաստանի Հանրապետութեան մէջ ի գործ դրուած չըլլային բազում ճիգեր՝ այս հատորը պատրաստելու նպատակով, պիտի չյաջողէինք իրականացնել այս կորիզ-երազը, արաբ ընթերցողին տրամադրութեան տակ դնելով այս հաւաքածոն։ Ծարդ քաղուած արդիւնքը հպարտանք կը ներշնչէ մեզի եւ կը հաստատէ մշակութային գործակցութեան երջանկութիւնը, զօրացուած՝ սիրոյ եւ համակրանքի զգացումներով։

ՀԱԼԷՊ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1990 ՈՒՍԱԼԻՏ ԸԽԼԱՍԻ

digitised by A.R.A.R.@

ՄԵԹՐ ՆԱԶԱՐ Պ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերջին տասնամեակներուն՝ հալէպահայ գաղութը ականատես եղաւ իր մտաւորականներուն տխուր տերեւաթափին: Գաղութին արդէն իսկ սակաւաթիւ մտաւորականներուն շարքերը տակաւ կը նօսրանան:

Ու հիմա՝ կորուստ մը եւս: Կորուստը մարդու մը, որ գրող էր, թարգմանիչ, կրթական մշակ եւ հասարակական գործիչ: Այս բոլոր արժանիքներով օժտուած մտաւորականն էր Նազար Նազարեան, որուն մահը սգաց հալէպահայութիւնը՝ 1991 Հոկտեմբերի 25ին:

Մեթր Նազար Նազարեան ծնած էր Քեսապ, այնթապցի ծնողքէ, 1932ին: Իր երկրորդական ուսումը Հալէպի մէջ ստանալէ ետք, ան հետեւած է Դամասկոսի Համալսարանի իրաւաբանութեան ճիւղին, զոր աւարտելէ ետք, շրջան մը ծառայած է սուրիական բանակին, ապա նշանակուած է Արաբ Բունարի Արաբական Մշակութային Կեդրոնի տնօրէն: Աւելի ուշ՝ վերադառնալով Հալէպ, պաշտօնավարած է քաղաքի պետական ճեմարաններուն մէջ: Երկար տարիներ ծառայած է Հալէպի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան երկրորդական վարժարանին մէջ՝ իբրեւ ուսուցիչ եւ տնօրէն: Տարիներ շարունակ եղած է նաեւ Հալէպի Քաղաքական Խորհուրդի անդամ:

Նազար Նազարեան Սուրիոյ Արաբ Գրողներու Միութեան միակ հայ անդամն էր:

Նազար Նազարեան մշակած է գրական բազմաթիւ սեռեր՝ պատմուածք, թատերգութիւն, գրական քննադատութիւն: Բայց իր անունը առաւելաբար կապուած պիտի մնայ հայերէնէ արաբերէնի կատարած թարգմանութիւններուն:

Թարգմանողի իր գրիչէն լոյս տեսած առաջին հատորը եղած է Դ. Վարուժանի «Հացին երգը» *բանաստեղծութիւններու ժողովածուն, որ լոյս տեսած է 1970ին: Ապա, յաջորդաբար թարգմանած է Ա. Իսահակեանի* «Աբու Լալա Մահարի» *պոէմը, Գ. Էմինի* «Քսաներորդ դար» *բանաստեղծութիւններու ժողովածուն, Վ. Թէքէեանի մէկ համընտիրը՝* «Աղօթք վաղուան սեմին առջեւ» *խորագրով, Յ. Շիրազի* «Հուշարձան մայրիկիս»*ը, Ե. Չարենցի* «Ամբոխները խելագարուած»*ը, Վ.*

digitised by A.R.A.R.@

Պետրոսեանի պատմուածքներէն ժողովածու մը եւ Ս. Խանզադեանի «Մատյան եղելությանց» *վէպը։*

Իր մահէն հազիւ շաբաթ մը առաջ լոյս տեսաւ նաեւ արեւմտահայ եւ սփիւռքահայ գրողներէ արաբերէնի թարգմանուած պատմուածքներու ժողովածու մը, ուր տեղ գտած են՝ Յ. Օշական, Համաստեղ, Ռ. Զարդարեան եւ ուրիշներ։

Թարգմանուած բոլոր հատորներն ալ կը բովանդակեն հեղինակներու մասին համառօտ ուսումնասիրութիւններ։

Ցարդ հրատարակուած այս հատորներէն անկախ, Նազար Նազարեան ունէր հրատարակութեան պատրաստ բազմաթիւ այլ գործեր, ինչպէս՝ արեւելահայ եւ խորհրդահայ գրողներու պատմուածքներու ժողովածուի մը թարգմանութիւնը եւ ժամանակակից հայ պատմուածագիրներու գործերու հատընտիր մը։ Այս վերջին գործերը պիտի ըլլային շարունակութիւնը արեւմտահայ պատմուածքի իր ժողովածուին։

Ն. Նազարեանի անտիպ գործերէն են նաեւ Պերճ Զէյթունցեանի «Ամենատխուր մարդը» *թատերգութեան թարգմանութիւնը, Ալպերթ Նալչաճեանի* «Մարդը իր երազում» *հոգեբանական գիրքի թարգմանութիւնը, ինչպէս նաեւ արաբերէն լեզուով ինքնագիր թատերգութիւն մը՝* «Դուռները» *խորագրով։ Դժբախտաբար, Ն. Նազարեան առիթը չունեցաւ ամբողջացնելու իր այնքան կարեւոր մէկ ուսումնասիրութիւնը, նուիրուած՝ արաբ եւ հայ ժողովուրդներու պատմական բարեկամութեան։*

Առանձին գիրքով լոյս տեսած յիշեալ գործերէն բացի, Նազարեան արաբական մամուլին մէջ ստորագրած է բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, նուիրուած՝ հայ մշակոյթի նշանաւոր գործիչներուն՝ Արշիլ Կորքիի, Գրիգոր Ճլթեանի, Գառզուի եւ ուրիշներու։

Անկախ ասոնցմէ, արաբական մամուլի էջերուն մէջ ցրուած կը մնան հայ գրողներու գործերէն իր կատարած թարգմանութիւնները, ինքնագիր պատմուածքները, գրական քննադատական յօդուածներն ու ուսումնասիրութիւնները։

Ն. Նազարեանի գրչին կը պատկանին տակաւին արաբ բազմաթիւ գրողներու գործերուն հայերէն թարգմանութիւնն ու ծանօթացումը հայ ընթերցողին, ինչպէս՝ Մահմուտ Ալի Սաիտի, Զաքարիա Թամէրի, Ալի Աքլա Ուրսանի եւ ուրիշներու բնորոշ գործերուն հայացումները։

Նազարեանի կատարած բոլոր թարգմանութիւնները կը յատկանշուին իրենց բնագրին հանդէպ հաւատարմութեամբ եւ լեզուական ճկունութեամբ։ Ան իր յարատեւ եւ յամառ աշխատանքով կրցաւ արաբ մտաւորականութեան մօտ դառնալ դեսպանը հայ մշակոյթին։ Իրմով է, որ արաբ ընթերցողը ծանօթացաւ հայ գրականութեան եւ հայ արժէքներուն։ Իրմով է, որ արաբ ժողովուրդին համար իբրեւ ճարտար արհեստաւոր ու քաղաքացի ճանչցուած հայը դարձաւ նաեւ հարուստ գրականութիւն ու մշակոյթ ունեցող ժողովուրդ եւ իրմով է, որ արաբական գրականութեան գոհարները ծանօթ դարձան հայ ընթերցողին։

Ցանկալի է, որ իր անտիպ գործերը լոյս տեսնեն անյապաղ ու հաւաքուին նաեւ պարբերական մամուլի մէջ ցրուած իր գործերը եւ լոյս տեսնեն առանձին հատորներով։ Բայց ցանկալի է մա՛նաւանդ՝ որ Նազարեան ունենայ իր յաջորդները, որպէսզի շարունակեն իր առաքելութիւնը նո՛յնքան բծախնդրութեամբ ու յարատեւութեամբ։

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՄԵՍՏ ՈՒ ՀԱԻԱՏԱՐԻՄ՝ ԻԲՐԵԻ ՍՏՈՒԵՐԸ ԻՐ ԳՈՐԾԻՆ

Հայ գրականութեան գոհարները արաբ ընթերցող հասարակութեան ծանօթացնող սակաւաթիւ թարգմանիչներու խումբին մէջ, Մեթր Նազար Նազարեան իր երէց ու կրտսեր գրչեղբայրներէն կը զատորոշուէր այն հանգամանքով, որ աւելի քան քսանամեայ իր թարգմանական վաստակով իրաւամբ յաջողած էր դառնալ հայ գիրի եւ մշակոյթի արժանաւոր մէկ դեսպանը։ Դեսպան մը՝ որ առանց պաշտօնական հաւատարմագիրի եւ դիւանագիտական ցուցական երթեւեկի, իր անանձնական վարքին շնորհիւ կրցած էր ըլլալ հազիւ տեսանելի ներկայութիւն մը, որ գործը կ'ընթանայ մարդէն առաջ եւ առեղծագործ մարդը կը դառնայ սաւուրը իր ճառագայթող գործին։

Սփիւռքի գրեթէ ապամշակութային, աւելի ճիշդ՝ ապապրական մեր իրականութեան մէջ, ուր լափանիշներու սրտխառնուք պատճառող ոգեւորութիւնները եւ բարեկամական հաշուենկատ յարաբերութիւններու վրայ հիմնուած ուղերձները կը նկրտին կեղծ քուսմեր հրապարակ ջչել, Սուրիոյ գրականամշակութային շրջանակներուն մէջ մեծ թիւով բարեկամներ ունեցող հայ գիրի ու գրականութեան այս սպասարկուն երբեք չմտածեց իրեն ներկայացած առիթներէն օգուտներու մասին։ Ընդհակառակն, համեստ ու հաւատարիմ զինուորի մը վայել վեհանձնութեամբ՝ Մեթր Նազար Նազարեան մնաց իր մտաւորականի բարձունքին վրայ եւ ամէն ճիգ ի գործ դրաւ, որ իր խղճամիտ աշխատանքին արդիւնքը հանդիսացող թարգմանութիւնէն աւելի մեծարուի եւ ըստ արժանւոյն գնահատուի հայ գրականութիւնը՝ իր հիացումին ու շերմ գուրգուրանքին արժանացած բանաստեղծին կամ արձակագիրին ընդմէջէն։

Արար Գրողներու Միութեան Սուրիոյ մասնաճիւղին միակ հայ անդամը ըլլալու հանգամանքը եթէ բան մը կը նշանակէր Նազար Նազարեան անուն հայուն համար, անիկա պարզապէս պատասխանատուութեան կրկնապատկուած գիտակցութիւնն էր։ Պատասխանատուութիւն՝ հայ մարդու բարոյական հեղինակութեան ու արժէքին հանդէպ եւ նոյնքան ու աւելի պատասխանատուութիւն՝ հայ գրականութեան փառքերը հանդիսացող վաւերական գործերու եւ հեղինակներու նկատմամբ։

Այսպէս էր Նազար Նազարեան եւ մինչեւ վերջին շունչ մնաց հաւատարիմ իր բարոյական համոզումներուն՝ թէ՛ իբրեւ մարդ ու գրագէտ եւ թէ իբրեւ կրթական ու մշակութային գործիչ։ Կեանքի մէջ տաքն ու պաղը մանուկ տարիքէն ճաշակած սփիւռքահայ էր ինք, որ յար եւ նման Սփիւռքի անբարենպաստ պայմաններուն մէջ իրենց աչքերը լոյսին բացած առաջին սերունդի բազմաթիւ պատանիներուն, չսկարացաւ երբեք, եւ հայ լեզուի համին ու բոյրին հազիւ-հազ ծանօթացած՝ նախակրթարանի գրասեղանէն նետուեցաւ կեանքի ասպարէզ եւ ակամայ կիսատ մնացած ուսումը շարունակեց կողմնակի միջոցներով, հազար ու մէկ զրկանքներով։

digitised by A.R.A.R.@

Հայկիս պատանի՝ պատագրաբար հագած էր մեքենագէտ բանուորի զոյգ զգեստը։ Բայց շարունակ ձեռքերն ու երեսը սեւցնող պատանի Նազարի հոգին մէջ շարունակած էին ծագիկներ ուտեան ապիտակ ծաղիկներ, որոնք իր քայլերը առաջնորդած էին դէպի գիշերային ապաս գասընթացքներ, իսկ աւելի ուշ՝ մինչեւ երկրորդական ու համալսարանական վկայականներ, առանց որ կեանքի հեւքին ու թոհուբոհին մէջ մոռնայ նախակրթարանի գրատեղանին վրայ իր նկարագիրն ու էութիւնը պայծառացուցած Մեսրոպեան տառերը։ Եւ Նազար Նազարեան, ինքզինք նուիրելով ինքնազարգացման գաղտնին՝ յաշողած էր գտանել յամառ աշակերտը հայ լեզուին, իր լեցուած հայրենի, եւ այս գրնուիրեանն ալ յաշողութեամբ անցընելէ ետք՝ նուիրուած նոյնինքն հայ գիրի ու ճշգրտութիւն ծանօթացման նուիրական առաքելութեան։

Ու բնական է, որ մեքենագործի սեւ աշխատանքէն մինչեւ երկրորդական ուսում եւ փաստաբանի տիտղոսի ձեռքբերումէն մինչեւ ճշգութիւնն ու պետական պատասխանատու պաշտօնեայ ան մեծ հաւատարիմ իր ներքին ձայնին, իր ազնիւ նկարագրով աւելի սիրելի գարձնելով իր թարգմանած բանաստեղծին կամ արձակագիրին գործը։ Եւ բնական է, որ աւելցնի ապաս գրքոյկները, միշտ ալ, սիրոյ եւ յարգանքի ազնուագոյն զգացումներով գիմաւորէին Նազար Նազարեանի իրենց հրատարակած հայ գրողը, գրավհան, ամէն բան եւ տաղ, սիրելի եւ յարգելի էր ի՛նքը՝ թարգմանիչը։

Գ'ըսեն, որ անձին բարոյական կշիռը յաճախ աւելի սիրելի կը գարձնէ իր գործը։ Գ'ըսեն, որ անձի մը բարեհամբաւ տուեալը բաւարար է, որպէսզի մարդիկ գործին մէջ ապրած վրիպակներէն աւելի կեղրոնական անոր գեղեցիկ արժէքին վրայ եւ հրատարակուած գործն ու հեղինակը սիրեն՝ հրատարակողին ընդմէջէն։ Ճի՛շդ կ'ըսեն։

Ճիշդ կ'ըսեն մա'նաւանդ՝ երբ յարգանքի ու բարձր գնահատանքի արժանի գործի մը հետեւ կը կանգնի մեծարուն սիրոյ արժանացած յարգելի անուն մը, Նազար Նազարեանի նման խղճամիտ ու ազնիւ մտաւորական մը։

Ա՛յս որակի մտաւորական մըն էր ասոր հատորէ աւելի գործերու թարգմանիչ Նազար Նազարեան, որ շարունակ հոգի գրաւ իր գործին մէջ, եւ իր հաւատարմութեամբ ու յարատեւութեամբ յաշողեցաւ գտանել արհեստավարժ, բայց արուեստագէտ թարգմանչի իսկական ներկայացուցիչ մը։

Վերջապէս, ան մեր լեզուին ու գրականութեան նկատմամբ ունեցած իր սէրը հաստատ ալիքի՝ վիպային ալորաներու, որ իր գրչէն ու հոգիէն ճառագայթող այդ շերմ ապրումները յաշողեցան վարակել նաեւ սուրբացի գրագէտներն ու մտաւորական շրջանակները։ Ցաշողեցա՛ւ, որովհետեւ հայ գրականութեան գոհարները ծանօթացնելու վճիռը իրեն համար եղաւ կեանքի փերապոյն նպատակ ու գոյութեան իմաստ, պարզ խօսքով՝ ամբողջական՝ նուիրում եւ, այդ իսկ պատճառով, համեստ, բայց մնայուն այս ճառագայթը լուծուեցաւ հայ գրականութեան գարաւոր լուսահանգէսին մէջ՝ իր կրտսեր թարգմանիչ գրչեղբայրներուն կապակցելով պայծառ լիշատակ մը եւ նոյնքան պայծառ ատենդ մը։

Ս. Կ.

digitised by A.R.A.R.@

Հանրի Վերնէօյի "Մայրիկ"ը՝ արաբերէնով

Միջազգային հռչակ ու համբաւ վայելող ֆրանսահայ շարժապատկերի բեմադրիչ Հանրի Վերնէօյի «Մայրիկ» վէպը, իր հրատարակութենէն եւ ժապաւէնի վերածուելէ ու մեծ յաջողութիւն արձանագրելէ ետք, թարգմանուեցաւ տասնեակ լեզուներու։ «Մայրիկ»ի նորագոյն թարգմանութիւնները լոյս տեսան վերջերս, արաբերէն եւ փորթուգալերէն լեզուներով, Սուրիոյ եւ Արժանթինի մէջ։

«Մայրիկ»ի ֆրանսերէն բնագրէն կատարուած արաբերէն թարգմանութիւնը, զոր խղճամիտ աշխատանքով իրականացուցած էր Հայր Եուսէֆ Գուշագճի, առանձին հատորով լոյս տեսաւ Լաթաքիոյ «Հիուար» հրատարակչատունէն, 1992ին։ Հատորը կը բացուի թարգմանիչին կողմէ խմբագրուած «Հանրի Վերնէօյ» խորագրեալ կենսագրականով, որ համառօտ գիծերով ու թուականներով կը ներկայացնէ Աշոտ Մալաքեանի կեանքն ու բազմամեայ գործունէութիւնը, 1945էն մինչեւ «Մայրիկ»ի լոյս ընծայումն ու ժապաւէնի վերածումը՝ իբրեւ լրագրող, վիպագիր ու բեմադրիչ։

Կենսագրականը եզրափակող տողերով, Հայր Եուսէֆ Գուշագճի կ'ըսէ. «Ամէն բանէ առաջ այս գիրքը բողոքի աղաղակ մըն էր՝ ընդդէմ այն զազանային ոճիրներուն, զորս 1915ին գործադրեցին Թալեաթի եւ Էնվերի նման ոճրագործներ՝ հայ ժողովուրդը բնաջնջելու յստակ նպատակով. նոյնպէս՝ դատապարտումը այն անմարդկային ոճիրին եւ

անարդարանալի սառն անտարբերութեան, զոր ցուցաբերեց «քաղաքակիրթ» աշխարհը»։

Ապա, թարգմանիչը կ'աւելցնէ, որ այս գործը իր ծնողքին, բայց ի մասնաւորի իր մօր հասցէագրուած երախտագէտ գաւակի շնորհակալական նուէրն է, եւ նուէր մը բոլոր անոնց՝ «որոնք գինու զօրութեամբ բռնի տեղահանուեցան իրենց պապենական հողերէն ու տուներէն, անոնց՝ որոնք ի սփիւռս աշխարհի պահպանեցին իրենց արժանապատուութիւնն ու պատիւը, եւ ամբապնդեցին իրենց մեծ հայրերուն հաւատամքը, ուխտելով միշտ բարձր պահել հերոսական ու խիզախ այն կեցուածքը, որ անոնք ունեցան»։

Թարգմանիչին ստորագրութիւնը կրող ծանօթագրութիւններով հարստացած եւ 311 էջերէ բաղկացած «Մայրիկ»ի վերջին կողքին

digitised by A.R.A.R.@

վրայ, Հանրի Վերնէօյի նկարին զուգահեռ՝ սեղմ գիծերով կը ներկայացուին հեղինակն ու իր գործը։ Խմբագրական այս նոթը կու գայ ընդգծելու, որ տասնեակ լեզուներու թարգմանուած «Մայրիկ»-ի ժապաւէնին առաջին մասը, Դեկտեմբեր 1991ին, միաժամանակ ցուցադրուած է աշխարհի չորս տարածքին, շարժապատկերի 800 սրահներու մէջ։

Նոյնպէս՝ “Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը”

Փրոֆեսէօր Շաւարշ Թորիկեանի «Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը» ակադեմական ուսումնասիրութեան արաբերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ վերջերս, Լաթաքիոյ (Սուրիա) «Հիուար» հրատարակչատունէն։ Միացեալ Նահանգներու Լաւեռն համալսարանի կողմէ հրատարակուած վերոնշեալ գործին վերամշակուած եւ նոր փաստաթուղթերով հարստացած երկրորդ հրատարակութիւնը իբրեւ աղբիւր ընտրելով՝ թարգմանիչ Խալէտ էլ-Ճպէյլի ցանկացած է արաբ լայն հասարակութեան ներկայացնել վաւերական գործ մը, որ Հայկական Հարցը կ'ենթարկէ ամբողջական քննարկման՝ միջազգային օրէնքներու եւ դաշնագիրներու լոյսին տակ։

18 Օգոստոս 1990ին, սրտի կաթուածի հետեւանքով 64 տարեկան հասակին մահացած պատմագէտ ու մշակոյթի գործիչ փրոֆ. Շաւարշ Թորիկեանի կեանքն ու վաստակը սեղմ տողերով ներկայացնելէ ետք, թարգմանիչ Խալէտ էլ-Ճպէյլի կը ստորագրէ հայ ժողովուրդի Ապրիլեան զոհզոհման, խաչելութիւնն ու յարութիւնը արաբ ընթերցողին վերյուշող յառաջաբան մը, աւելի ճիշդ՝ «վկայութիւն մը», ինչպէս պիտի ըսէր ինք, որովհետեւ, դարձեալ իր իսկ բառերով. «Այսօր, բոլորը հրաւիրուած են ծանօթանալու ոճիրին եւ բացայայտելու դերերը, զորս ուրիշներ խաղացին... որպէսզի մարդասպանը աւպատիժ չմնայ։ Այս հրաւէրն է, որ մեզի կը կարդայ մարդկային պարտականութիւնը»։

Խղճամիտ թարգմանիչի վայել գուրգուրանքով արաբերէնի փոխադրուած եւ 341 էջերէ բաղկացած փրոֆ. Շաւարշ Թորիկեանի «Հայկական Հարցը եւ միջազգային օրէնքը» հատորին ներկայանալի տպագրութիւնը կու գայ հարստացնելու Հայ Դատը արար աշխարհին ծանօթացնող մեր հրատարակութիւններու դարանը՝ վաւերական գործով մը, որուն բծախնդիր թարգմանիչը արժանի է ամէն գնահատանքի։

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՅՈԲԵԼԵԱՆԴ, ՄԱԵՍՏՐՕ

Տասնեօթ տարուայ ընդմիջումից յետոյ Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնի դիրիժորական կարթակը զբաղեցրեց մեծահամբաւ դիրիժոր Օհան Տուրեանը: Վերադարձի առաջին ելոյթը Վերդիի "Ռեքվիեմ"ն էր Հայաստանի պետական երգչախմբի եւ Օպերային նուագախմբի կատարմամբ: Վարպետի յուզմունքը հաղորդուել էր դահլիճին: Երախտապարտ ունկնդիրները համերգի վերջում բուռն ծափահարութիւններով եւ ծաղկեփնջերով ողողեցին տաղանդաշատ դիրիժորին (*«Ազատամարտ»*, 1991, թիւ 31):

Օհան Տուրեանը կրկին ապրեցնում է մեզ: Նրա վերադարձով լուծարման եզրին կանգնած Հայաստանի Հեռուստատեսութեան եւ ռադիոյի սիմֆոնիկ նուագախմբում նորոգիչ շարժում սկսուեց, ոգեւորուեցին երաժիշտները, մաեստրոն նոր կատարողներ ընդգրկեց, որոնք նրա խստապահանջ ներկայութեամբ այսօր արդէն հասուն մեկնաբաններ են դարձել: Եւ ահա մաեստրոն 70 տարեկան է: Այդ յոբելեանին էր նուիրուած Յուլիսի 23ին Օպերայի եւ բալետի թատրոնում կայացած համերգը:

Ապշելու բան է...: Նուագախմբի առջեւ կանգնած՝ խմբավարը (առանց նոտաների) ղեկավարում է մի այնպիսի բարդ, քիչ կատարուող, բազում երանգներ ընդգրկող ստեղծագործութիւններ, ինչպիսիք են Շուբերտի Թիւ 9 սիմֆոնիան, *Վագների* «Տրիստան եւ Իզոլդա» *օպերայի նախերգանքն ու մեներգը: Վերջինիս առանձնակի փայլ տուեց Արաքս Մանսուրեանը:*

Արմէն Նասիբեանի «Հիմն Արցախի» *ստեղծագործութեան մըրցութային տարբերակը հնչեց համերգում: Չենք կարող ասել, թէ ի*

digitised by A.R.A.R.@

վերջոյ որը կը լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնը, բայց այս գործը հնչեց ներշնչումով ու վարպետութեամբ։

Տուրեան խմբավարը անակնկալ էր պատրաստել։ Նա ներկայացրեց իր «Կոմիտասիանա»ն. Կոմիտասեան թեմաները մշակուած են նրբօրէն ու բարձր ճաշակով։ Հեղինակը ոսկերչի մանրակրկիտ մօտեցում է ցուցաբերել Կոմիտասի երգերի նկատմամբ, կարողացել է ներթափանցել ազգային երաժշտութեան գեղարուեստական մտածողութեան խորքերը։

Այս երաժշտութիւնը պէտք է ապրի եւ ապրեցնի...։ Օհան Տուրեանի յոբելեանին նուիրուած համերգն էլ այդ վկայեց։

Առջեւում նոր հանդիպումներ են՝ ցանկալի եւ երկար սպասուած... («Երկիր» 25 Յուլիս, 1992)։

ՆՈՒԱՐԴ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՈՉ ԹԷ ՄԻՋՆՈՐԴ, ԱՅԼ ԱԿՈՒՆՔ

(ՕՀԱՆ ՏՈՒՐԵԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է)

Օհան Տուրեանը վերագարձել է...։ Հեռուստալուրը թուաց անիրական։ Ժամանակն ասես ետ պտտուեց միանգամից 17 տարով...։ Ես փակեցի աչքերս եւ մտովի տեղափոխուեցի Հայաստանի Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճ, որը 70ականներին ողողուած էր տուրեանական արուեստի գլխապտոյտ առաջացնող լոյսով եւ բերկրանքով. արուեստ, որն իմ սերնդակիցներին դաստիարակեց բարձր ու անխառն երաժշտութիւնն զգալու իսկական երջանկութեամբ։

Այսօր իմ նպատակը Տուրեանի արուեստը մեկնաբանելը չէ. դա երաժիշտների գործն է։ Ես արուեստն ընկալում եմ պոեզիայի ակունքներով։ Այդ ընկալմամբ էլ ուզում եմ խօսել այն տարիների մասին, երբ Օհան Տուրեանը կուռք էր դասական երաժշտութեան սիրահարներիս համար։

1972-74 թթ. ներկայ եմ եղել Օհան Տուրեանի գրեթէ բոլոր համերգներին եւ այսօր հարուստ եմ ոգելից յիշողութիւններով, չափազանց հարուստ, որովհետեւ այդ տարիները մաեստրոյի աստեղային տարիներն էին թերեւս։

Ես չեմ յիշում Օհան Տուրեանի որեւէ համերգ, որ դահլիճում թէկուզ մէկ թափուր տեղ լինէր։ Եւ այն ունկնդրին, որ ես հանդիպեցի այդ լեփ-լեցուն դահլիճներում, այլեւս չտեսայ մէկ այլ համերգասրահում։ Նոյն մարդն էինք թէեւ, բայց նոյն ունկնդիրը չէինք։ Երեւում էր բեմի խորքից Տուրեան դիրիժորը, եւ դահլիճը դառնում էր մէկ միտք՝ յափշտակուած ու ինքնամոռաց, դահլիճը դառնում էր մէկ շնչառութիւն։

digitised by A.R.A.R.@

Օհան Տուրեանը ղեկավարում էր ձեռքով՝ առանց փայտիկի։ Նա երաժշտութեան հաղորդման միջնորդ չէ, նա ակունք է, ում մէջ կատարելութեամբ եւ մաքրութեամբ ունկնդրին են ներկայանում համաշխարհային մեծութիւններ։

...1974թ. Մարտին Կիեւում էի։ Կիեւի Ֆիլհարմոնիայի մօտով անցնելիս աղդագրի վրայ կարդացի Օհան Տուրեանի անունը։ Անմիջապէս տոմս գնեցի։ Ծրագրում Բրուկների 4դդ սիմֆոնիան էր, Ռավելի «Բոլերո»ն։ Դահլիճը, ինչպէս Հայաստանում, լեփ-լեցուն էր։ Եւ մաեստրոն, ինչպէս միշտ, ոգեշնչուած էր նորովի։ Ընդմիջմանը խանդավառուած մարդիկ ափսոսանք էին յայտնում, որ յաճախ չեն կարող լսել այդ բացառիկ դիրիժորին։ Իսկ համերգի երկրորդ բաժինը ուղակի ցնցեց դահլիճը։ «Բոլերո»։ Երբ ծանօթ մեղեդին սկսեց տարածուել, մեզ թուաց, թէ ինչ-որ բան այն չէ, որովհետեւ մաեստրոն կանգնած էր ուղիղ՝ թեւերը կողքին, իսկ մեղեդին շարունակում էր զարգանալ։ Նուագախումբը իր տարերքի մէջ էր արդէն, բայց Օհան Տուրեանը չէր տարածում ձեռքերը։ Մեր զարմանքն ու տարակուսանքը սակայն շուտով փարատուեց, երբ հասկացանք, որ մաեստրոն ղեկավարում է գէմքով, հայեացքով...

Աւարտուեց երաժշտութիւնը. դժուարութեամբ սթափուած դահլիճը պարզապէս շիկացել էր. բեմի վրայ ծաղիկներ էին թափւում բոլոր կողմերից։

Դերասաններին, երաժիշտներին ներկայացումից անմիջապէս յետոյ հանդիպել չեմ սիրում, բայց այդ օրուայ հետաքրքրութիւնս յաղթեց, եւ կուլիսներում դժուարութեամբ ճեղքելով երկրպագուների բազմութիւնը՝ մօտեցայ հաճելիօրէն յոգնած դիրիժորին.

—Մաեստրո, ինչպէ՞ս հասկանալ «Բոլերո»ի Ձեր մեկնաբանումը։

Նա, ուրախացած, որ Հայաստանից եկած հայեր էլ կային համերգին, պատասխանեց.

—«Բոլերո»ն ձեռքերով ղեկավարել՝ կը նշանակի ունկնդրին յոգնեցնել տեսողական զգացողութեամբ...

Յետոյ իմացայ, որ Գերմանիայում այդ ստեղծագործութիւնը համարել են Օհան Տուրեանի դիրիժորական յաղթաթուղթը։

...Խաղաղ ժամանակներ էին՝ թուացեալ երանութեամբ լի։ Եւ մենք՝ 70ականների երիտասարդներս, եւ ոչ միայն երիտասարդներս, արուեստի, մեծ արուեստի սիրահարներ էինք, իսկ Օհան Տուրեանը մեզ համար դասական երաժշտութիւնը ներկայացնող քուրմ էր՝ վեր մարդկային ամէն կարգի բախումներից ու շահարկումներից, վեր քաղաքականութիւնից ու այսաշխարհիկ խառնակութիւններից։ Եւ այդ չէ՞ր արդեօք պատճառը, որ որոշ արուեստագէտներ, չդիմանալով նրա անպարտելի հմայքին, երազում էին նրա հեռանալը։

1974ի Յունիսն էր։ Լուրեր տարածուեցին, որ Օհան Տուրեանը թողել է նուագախումբը։ Չհաւատացինք...։ Բայց, ցաւօք, դա իրողութիւն էր. մաեստրոն լռում էր։ Որոշեցի այցի գնալ։ Երբեք չեմ մոռանայ այդ օրը։ Նրան հանդիպեցի իր աշխատասենեակում յետուառաջ քայլելիս, ինչպէս բանտարկեալը բանտախցում։ Ընկճուած էր, թեւաթափ։ Ես բա-

digitised by A.R.A.R.@

ռեր չէի գտնում, կոկորդս սեղմուել էր, դառնացել. «Ձեզ խաչել են, մաեստրո»,- հազիւ բարբառեցի։

—Այո, աղջիկս, ինձ խաչել են,— խուլ կրկնեց նա՝ չկարողանալով զսպել լուռ արցունքները։

..Անցել են տարիներ։ Օհան Տուրեանը վերադարձել է։ Ես լսում եմ նրա թախծոտ ու կարօտով լի ձայնը.

—Երբեք չէի հաւատում, որ կը տեսնեմ Երեւանը։

—Մենք էլ, սիրելի մաեստրո, մենք էլ չէինք հաւատում, որ կը տեսնենք Ձեզ, բայց Դուք մեզ հետ էք, եւ տուրեանական տօները շարունակւում են... («Երկիր», 24 Սեպտեմբեր, 1992)։

ԱՆԱՀԻՏ ՔՆԱՐԵԱՆ

ՉԸՍԷՔ ՊԱՐՈՆ, ԸՍԷ'Ք ՊԱՐՉԱՊԷՍ՝ ՏՈՒՐԵԱՆ

—Այդ դէպքում թոյլ տուէք դիմել՝ մաեստրո։

—Միայն Տուրեան, առանց պաճուճանքի։

Պնդումն այս քմահաճոյք չէ։ Հանրաճանաչ դիրիժորին կեանքում «հետապնդել է» ստի, ձեւապաշտութեան նկատմամբ ատելութիւնը, որը թերեւս «լաւագոյն» խթան էր երկու տասնամեակ առաջ Հայաստանում նրա դէմ կազմակերպուած հալածանքների «յաղթարշաւի»։

Այնուհանդերձ, որքան էլ այն տարիներին վտանգաւոր էր «աղբարի» հետ «կապի մէջ մտնելը»՝ ընկեր, ծանօթ-անծանօթը Տուրեանի նկատմամբ իր սէրն ու յարգանքը արտայայտում էր անթաքոյց։ Այլ կերպ հնարաւոր չէր. Տուրեանն օժտուած էր մեծ արուեստագէտի լաւագոյն յատկանիշներով։ «Նա մեր նկատմամբ սարսափելի պահանջկոտ էր, աշակերտի պէս էինք մեզ զգում,— յիշում է ալտի նուագարար Լենա Աւետիսեանը։ —Ամէն օր փորձից յետոյ պարտիաները տնային առաջադրանքի նման տանում էինք տուն եւ աշխատում։ Սակայն բոլորս նրան ներում էինք ու սիրում, քանի որ ինք իր նկատմամբ առաւե'լ պահանջկոտ էր, վայրկեանը վայրկեանի ճշտապահութեամբ, անձնուէր։ Եւ դրա հետ մէկտեղ՝ որքան հոգատար իւրաքանչիւրիս նկատմամբ։ Եթէ ուեւէ մէկն ուներ հոգս, ապա մաեստրոն իր վերջին շապիկի գնով կ'աշխատէր օգնել։ Մենք յաճախ շրջագայել ենք, իսկ մարդն ամենալաւը ճանաչւում է ճանապարհին»։

Ժողովրդի համար Տուրեանն առաքեալ էր, որը, թողնելով Ա-

digitised by A.R.A.R.@

բեմուտքի ազատ, հարուստ կեանքը, եկել էր ծառայելու հայրենիքին։

Ինչ վերաբերում է նրա դիրիժորական արուեստին, ապա այդ մասին դեռևս կը գրուեն բազում մենագրութիւններ։

Օհան Տուրեանը վերստին Հայաստանում է։ Նուագախմբի կարծիքով՝ ոչ ծերացած նոյն աշխատասէրն ու կարգապահը, ճշմարիտ ազգասէրը, որը անձնուէր գործերով, այլ ոչ խօսքով է ապացուցում իր հայրենասիրութիւնը։

—Ձեր անունն այս տարիներին քնքշանքով էր փոխանցւում նոր սերնդին։ Դուք այն հեղինակութիւններից էք, որոնց կենսագրութիւնը ոչ միայն հետաքրքիր, այլեւ թանկ է ժողովրդի համար։

—Մնուել եմ 1922ին, Երուսաղէմում։ Հոն աւարտել կոնսերվատորիան, յետոյ շարունակել Զուիցերիայի Ցիւրիխ քաղաքում։ Այնուհետ ապրել, աշխատել եմ Փարիզում։ Եկել եմ Հայաստան, ինձ այստեղ նեղացրել են, ստիպել հեռանալ։ Այս ընթացքին սկզբում ապրում էի Վիեննի մօտ գտնուող Վատն քաղաքում, ապա Մարսելում։ Ունեմ տղայ՝ Նարեկ Տուրեանը, որին երեւի գիտէք եւ նրա երկու զաւակները՝ Շուշան եւ Օհան։

—Ինչո՞վ է պայմանաւորուած ձեր վերադարձը։

—Ինձ հետ կապ ստեղծելու առաջին քայլն արեց կոնսերվատորիայի պրոռեկտոր Արմէն Սմբատեանը։ Նա խնդրեց Ցունուարին ներկայ գտնուել Կոմիտասի անուան կոնսերվատորիայի եւ Նիւ Եորքի Զուլեաակուլ երաժշտական դպրոցի միջեւ պայմանագիր կնքելու արարողութեանը։ Այնուհետ մշակոյթի նախարարը՝ Զէյթունցեանը, շատ ազնիւ, հաճելի նամակ գրեց, ինձ հրաւիրելով Հայաստան, ղեկավարելու՝ օպերայի թատրոնի նուագախումբը։ Անչափ ուրախ եմ հայրենիք վերադառնալու համար։ Այստեղ ամէն ինչ շատ-շատ փոխուած է՝ եւ՝ ազատութեան, եւ՝ իրաւունքների կողմէն։ Նաեւ դժուարանում եմ Երեւանի մէջ ճանաչել բոլոր տեղերը։

—Թատրոնը բռնել է վերակառուցման ուղին։ Դուք, որպէս գլխաւոր դիրիժոր, ի՞նչ փոփոխութիւններ էք նախատեսում կատարել։

—Անշուշտ, անելիք շատ կայ։ Սակայն փոփոխութիւն ասելով չէի կամենայ, որ այն դառնար վախ առաջ բերող հանգամանք։ Պէտք է տեսնենք՝ ինչպէ՞ս լուծել, որ ցաւալի չլլայ։ Հարցերը տարիների մէջ են գոյացել։ Գիտէք, երաժշտական գործիքները յաջող չեն։ Բայց շատ շուտով Տիգրանը (Լեւոնեան) գնալու է Փարիզ եւ դրանք այնտեղից կը բերի։ Իսկ օրկեստրի վիճակը բարւոք է։ Մեր միջեւ փոխադարձ շփման լաւ մթնոլորտ կայ։ Ես նրանց հետ այնքան հաճոյքով եմ աշխատում եւ՝ Ռոբերտ սեմֆոնիայի, եւ՝ Վերդիի «Ռեքվիեմ»ի վրայ։ Ամէնն ալ ջանում են, ես վստահ եմ, որ արդիւնքը շատ լաւ կ'ըլլայ։

—Ճի՞շտ է, որ արդէն ունէք համերգային ծրագիր։

digitised by A.R.A.R.@

—Բարեգործական մի համերգ արդէն տուել ենք անկախութեան հանրաքուէի նախօրեակին։ Ամսու 28ին Վերդիի «Ռեքվիեմ»ը պիտի կատարենք երկրաշարժի զոհերի յիշատակին։ Դա կ'ըլլայ առաջին մեծ համերգը, եւ շատ հաւանական է, որ այն կրկնենք Լենինականում։ Նրանից ետքը դժուարանում եմ ձեզ ասել ճիշտ ծրագիր, որովհետեւ որոշ հարցեր դեռ պէտք է ճշտուեն այս երկու օրս։

—Ինչպէ՞ս էք վերաբերում քաղաքականութեանը։

—Քաղաքականութեամբ ես իրաւունք չունեմ զբաղուելու։ Գլխում եմ, որ դրանով պէտք է զբաղուեն քաղաքագէտները։ Իսկ մենք՝ արտիստներս, մեր գործով պէտք է օգնենք, որ նրանք իրականացնեն իրենց նպատակները։ Եթէ ամէն մարդ խառնուի քաղաքականութեանը, ապա դա ոչ մի լաւ արդիւնք չի տայ։ Իւրաքանչիւրը պէտք է անի իր գործը։ Այդպէսով կարող ենք պետութիւն կառուցել։

—Ի՞նչ կ'ասէիք «Ազատամարտ»ի ընթերցողին։

—Այս վիճակին բոլորիս մտահոգութիւնը նոյնն է։ Պարզապէս աղօթող մնանք, որ Աստուած մեր փոքրիկ Հայաստանը ճիշտ ուղղութեան վրայ դնէ եւ մեր տառապած հայ ժողովրդին վերջապէս երջանկութիւն մը տայ («Ազատամարտ» 30 Սեպտեմբեր, 1991)։

ԱՐԵԻԻԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Շահանդուխտ

Արեւածաղիկները խոնարհեցան արեւմուտքին

(վէպ)

Նուպար Չարխուտեան

Մահապարտը

(վէպ)

Մարտիրոս Մարտիրոսեան

Նամականի Նորայր Բիւզանդացիի

(նամակներ)

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ)	5·000 Լ·Ո
Տարեկան բաժնեգին	30·000 Լ·Ո

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ)	1·000 Ս·Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturel SHAGHZOYAN

Bourdj Hammoud — Liban

digitised by A.R.A.R.@